

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2023
N 1 (58)

Գիտական հանդես Հրատարակվում է 2008 թվականից

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
դոկտոր, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը

պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 375008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 574483

Ֆաքս՝ 574453 էլ. կայք՝ www.ardadatutyunjournal.com

Հրապարակված է 10.07.2023թ.

Տպագրությունը՝ էլեկտրոնային:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված է ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

EDITORIAL BOARD

Արթուրի Գալյան – Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, Արդարադատության երրորդ դասի խորհրդական, խմբագրական խորհրդի նախագահ

Srbuhi Galyan – Deputy of the Prosecutor General of the Republic of Armenia, Third Class State Counsellor of Justice, Chairman of the Editorial Board

Աշոտ Հայրապետյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, գլխավոր խմբագիր

Ashot Hayrapetyan – Doctor of Law, Associate Professor, Chief Editor

Արտակ Ասատրյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Artak Asatryan – PhD in Law

Հրանուշ Հակոբյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Hranush Hakobyan – Doctor of Law, Professor

Արմեն Հարությունյան – Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Harutyunyan – Judge at the European Court of Human Rights, Doctor of Law, Professor

Աշոտ Խաչատրյան – Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Khachatryan – Judge at the Constitutional Court of the Republic of Armenia, Doctor of Law, Professor

Վոլոդյա Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Volodya Hovhannisyan – Doctor of Law, Associate Professor

Արմեն Եսայան – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Armen Yesayan – Doctor of Law, Professor

Գրիգոր Բադիրյան – Իրավաբանական գիտությունների դոկտոր

Grigor Badiryan – Doctor of Law

Ստեփան Ծաղիկյան – Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Stepan Tsaghikyan – Head of Criminal and Criminal Procedural Law of the Law and Politics Department of the Russian-Armenian University, Doctor of Law, Professor

Ռուզաննա Հակոբյան – «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Ruzanna Hakobyan – Rector of “Gavar State University” Fund, Doctor of Law, Associate Professor

Ժորա Ջհանգիրյան – «Գլաձոր» համալսարանի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Zhora Jhangiryan – Rector of “Gladzor” University, Doctor of Law, Professor

Ռուբեն Ավագյան – «Մանց» համալսարանի ղեկավար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ruben Avagyan – Rector of “Manc” University, Doctor of Law, Professor

Արփինե Հովհաննիսյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Arpine Hovhannisyan – PhD in Law, Associate Professor

Սուրեն Քրմոյան – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Suren Krmoyan – PhD in Law

Աշոտ Ենգոյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ashot Engoyan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Theory and History of Political Sciences of YSU, Doctor of Political Sciences, Professor

Գարիկ Քեռյան – ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Garik Keryan – Head of Chair/Faculty of International Relations-Chair of Political Institutions and Processes of YSU, Doctor of Political Sciences, Professor

Էդուարդ Ղազարյան – Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Eduard Ghazaryan – Dean of the Faculty of Agribusiness and Economics of National Agrarian University of Armenia, Doctor of Economics, Professor

Օտարերկրյա անդամներ

International members

Հայկ Կուպելյանց – Իրավաբանական գիտությունների թեկնածու

Hayk Kupelyants – PhD in Law

Ալեքսանդր Արիմով – ՌԴ Սանկտ Պետերբուրգի պատիժների իրականացման դաշնային ծառայության համալսարանի դեկան, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Alexandr Krymov - Head of the St. Petersburg University of the Federal Penitentiary Service of Russia (FPS of Russia), Major General of the Internal Service, Doctor of Law, Professor

Անդրեյ Սկիբա – Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր

Andrey Skiba – Head of Chair / Legal Faculty- Chair of Criminal and Executive Right of the Academy of Law and Administration of the Federal Penitentiary Service of the Russian Federation, Doctor of Law, Associate Professor, Major of Internal Service

Եվգենի Բարաշ – Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ

Yevhen Barash – Doctor of Law, Professor, Honored Worker of Science and Technology of Ukraine

Հենրիկ Լինդեբորգ – Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր

Henrik Lindeborg – Senior Researcher at the Criminal Punishment Department of the Ministry of Justice of Finland, Doctor of Law

Նիկիտա Իվանով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Nikita Ivanov – Head of the Chair of Penal Right and Criminology of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Սերգեյ Չերնյակսկի – Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Serhii Cherniavskiy – Vice-Rector of the National Academy of Internal Affairs of Ukraine, Honored Worker of Science and Technology of Ukraine, Police Colonel, Doctor of Law, Professor

Վադիմ Վինոգրադով – Համառուսական արդարադատության պետական համալսարանի սահմանադրական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Vadim Vinogradov – Head of the Chair of Constitution and International Right of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Professor

Վլադիմիր Գուրեն – Համառուսական արդարադատության պետական համալսարանի քաղաքացիական դատավարության և դատական կարգադրիչների ծառայության կազմակերպման ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Vladimir Gureev – Head of the Chair of Civil Process and Organization of Service of Bailiffs of the All-Russian State University of Justice, Doctor of Law, Associate Professor

Կոնստանտին Գուսարով – Յարոսլավ Մուդրիի անվան ազգային իրավաբանական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Konstantin Gusarov – Head of the Chair of Civil Procedure of the Yaroslav Mudryi National Law University, Doctor of Law, Professor

Վիտալիյ Ստուկանով – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի հոգեբանության և մանկավարժության ամբիոնի պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Vitaly Stukanov – Head of Department of Psychology and Pedagogy of the Academy of the Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Pedagogical Sciences, PhD in Psychological Sciences, Associate Professor

Ալեքսանդր Ռուբիս – Բելառուսի Հանրապետության ներքին գործերի նախարարության ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Aleksandr Rubis – Professor of the Department of Criminal Procedure of the Academy of Interior Ministry of the Republic of Belarus, Doctor of Law, Professor

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

6 ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Անմեղության կանխավարկածը և զանգվածային լրատվության միջոցները

12 ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

Իրավակիրառ գործունեությունում բացերի լրացման իրավաբանական եղանակները և բացերի հայտնաբերման մեթոդները

21 ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բուհերի որակի կառավարման համակարգերի դերը բարձրագույն կրթության մրցունակության ապահովման գործում

30 ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խարդախությամբ բժշկական գործառույթ իրականացնելու իրավական հիմնախնդիրները Հայաստանի և Ֆրանսիայի հանրապետություններում

40 ՀՐԱՆՏ ՍԱՐԿԻՍՈՎ

Անվտանգության խորհրդի նախագահը խորհրդարանական կառավարման հանրապետություններում. Հանրապետության նախագահ, թե՞ վարչապետ՝ իրավաբաղադրական հիմնախնդիրները

47 ԱՐՏՅՈՄ ՍՈՒՋՅԱՆ

Անհաղթահարելի ուժի հասկացությունը, որոշման պայմանները և իրավական հետևանքները

56 ԱՐՄԱՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

Առողջապահության համապարփակ ապահովագրության հայեցակարգը Հայաստանի Հանրապետությունում

63 ԿԱՐԵՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Խորհուրդը՝ որպես կորպորացիայի ընդհանուր ղեկավարումն իրականացնող մարմին

71 ԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Իրավական ակտերի փորձաքննության և կարգավորման ազդեցության գնահատման մեխանիզմները հի իրավական համակարգում

78 АРСЕН КАХКЦЯН

Источники (памятники) военного права Армении с I до XIV века нашей эры

85 РОЗА АМИРОВА

Защита прав потребителей банковских услуг финансовым омбудсменом

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի քաղաքացիական
իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԸ ԵՎ ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդվածը նվիրված է զանգվածային լրատվության միջոցների կողմից անմեղության կանխավարկա-
ծի սկզբունքի պահպանմանը: Հոդվածում քննարկվում են անմեղության կանխավարկածի վերաբերյալ
միջազգային փաստաթղթերում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային
պրակտիկայում ամրագրված մոտեցումները: Հիմնվելով ՄԻԵԴ- նախադեպային պրակտիկայի վրա՝ հոդ-
վածը վեր է հանում այն չափանիշները, որոնց զանգվածային լրատվության միջոցները պետք է հետևեն
անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանման համար՝ իրենց կողմից իրականացվող լուսա-
բանումների ընթացքում:

*Հիմնարարներ - անմեղության կանխավարկած, զանգվածային լրատվության միջոցներ, ՄԻԵԴ, նա-
խադեպային պրակտիկա:*

Անմեղության կանխավարկածը քրեական
իրավունքի և քրեական դատավարության հիմնա-
կան և հանրաճանաչ մաքսիմներից է, որ իր ամ-
րագրումն է ստացել մի շարք միջազգային փա-
ստաթղթերում: Այսպես, «Մարդու իրավունքների
համընդհանուր հռչակագրի» 11-րդ հոդվածը սահ-
մանում է, որ հանցագործություն կատարելու մեջ
մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի ան-
մեղ համարվել, քանի դեռ իր մեղքը օրինական
կարգով չի հաստատվել հրապարակային դատա-
կան քննության միջոցով, որի ժամանակ նրան տր-
վում են պաշտպանության բոլոր հնարավորու-
թյունները:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունք-
ների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդ-
վածի 2-րդ մասով նախատեսվում է, որ քրեական
հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր
անձ իրավունք ունի համարվելու անմեղ, քանի դեռ
նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին
համապատասխան:

Անմեղության կանխավարկածը որպես ար-
դար դատաքննության կարևորագույն տարր ամ-
րագրված է նաև Մարդու իրավունքների Եվրոպա-
կան Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասում, որի
համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է
քրեական հանցագործություն կատարելու մեջ, հա-
մարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն
ապացուցված չէ օրենքին համապատասխան:

Այս սկզբունքը առանցքային տեղ է զբաղեց-
նում նաև ՀՀ Սահմանադրությամբ, որի 66-րդ հոդ-
վածը սահմանում է, որ հանցագործության համար
մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա
մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կար-
գով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դա-
տավճռով:

Անմեղության կանխավարկածից բխում է, որ
իրենց պարտականությունները կատարելիս նա-
խաքննության և դատաքննության մարմինները
չպետք է գործին մոտենան կանխավ ձևավորված
կարծիքով՝ թե կասկածյալը, մեղադրյալը կամ ամ-
բաստանյալը կատարել է այն հանցագործությու-
նը, որում մեղադրում են նրան՝ այնքան ժամանակ,
քանի դեռ չի ապացուցվել նրա մեղքը: Իսկ հանցա-
գործության կատարելու մեջ անձի մեղավորությու-
նը կարող է որոշել միայն դատարանը՝ այդ կա-
պակցությամբ ընդունելով մեղադրական դատավ-
ճիռ, որը հիմք է պատասխանատվության համար՝
օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց
հետո:

Հարկ է նշել, որ այս սկզբունքի մեկնաբանման
հարցում հատկապես կարևոր է Մարդու իրավունք-
ների եվրոպական դատարանի նախադեպային
պրակտիկան:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դա-
տարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ)՝ անմեղության
կանխավարկածը, *inter alia* պահանջում է, որ իրենց
պարտականությունները կատարելիս դատարանի
անդամները չունենան կանխակալ կարծիք առ
այն, որ մեղադրյալը կատարել է մեղսագրվող
արարքը, իսկ ապացուցման պարտականությունը
պետք է կրի մեղադրանքի կողմը, և ցանկացած
կասկած պետք է մեկնաբանվի խոգուտ մեղադրյա-
լի: Այս առումով ՄԻԵԴ-ը անմեղության կանխա-
վարկածի սկզբունքի խախտում է համարել այն
իրավիճակը, երբ մեղադրյալը դեռևս օրենքին հա-
մապատասխան մեղավոր չի ճանաչվել, սակայն
նրա վերաբերյալ ընդունված որոշումից կարելի է
կարծիք կազմել, որ նա մեղավոր է (տե՛ս, Barbera,
Messegue and Jabardo v. Spain, 1988 թվականի դեկ-
տեմբերի 6-ի վճիռը, զանգատ թիվ 10590/83, կետեր

77, 91)⁴:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով՝ կրկնելով անմեղության կանխավարկածի սկզբունքի վերաբերյալ նախկինում ձևավորած իրավական մոտեցումները, շեշտել է, որ «(...) 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված անմեղության կանխավարկածը արդար քրեական դատավարության այն բաղադրիչներից մեկն է, որը պահանջվում է 6-րդ հոդվածի 1-ին կետով (...): Այն կխախտվի, եթե քրեական իրավախախտման մեջ մեղադրվող անձի վերաբերյալ պետական պաշտոնյայի ցուցմունքում կարծիք արտահայտվի այն մասին, որ նա մեղավոր է, նախքան դա ապացուցված կլինի օրենքի համաձայն (...):

Բացի դրանից, հայտարարությունն այն մասին, որ անձին պարզապես կասկածում են հանցագործություն կատարելու մեջ՝ պետք է հստակորեն տարբերակվի այն բացահայտ արված հայտարարությունից, որ անհատը, թեպետ դեռ չի կայացվել վերջնական մեղադրական եզրակացություն, կատարել է տվյալ հանցագործությունը (...): Վերջինով խախտվում է անմեղության կանխավարկածի դրույթը, մինչդեռ առաջին տեսակի հայտարարությունը Դատարանի կողմից քննված զանազան իրավիճակներում համարվել է անառարկելի (...): Այն հարցը, թե արդյոք պետական պաշտոնյայի կողմից արված հայտարարությամբ խախտվել է անմեղության կանխավարկածի սկզբունքը, պետք է որոշվի այն կոնկրետ հանգամանքների համատեքստում, որոնց պայմաններում արվել է վիճարկվող հայտարարությունը (...)» (տե՛ս Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետեր 185186):

Ուշադրության արժանի է նաև այս սկզբունքի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, այսպես՝ Արմեն Բաբայանի և Սուրեն Թումանյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0044/01/11 դատարանը արձանագրել է, որ արդար դատական քննության հիմնարար իրավունքի ապահովումն առանց անմեղության կանխավարկածի պահպանման հնարավոր չէ: Նշված սկզբունքը ենթադրում է, որ հանցագործություն կատարած յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքը չի ապացուցվել օրենքով նախատեսված կարգով: Անմեղության կանխավարկածի սկզբունքը կանխորոշում է քրեական գործի դատաքննության ողջ բովանդակությունը և էությունը՝ անկախ քրեական հետապնդման իրավական ելքից⁵:

Անմեղության կանխավարկածի նկատմամբ հարգանքի պահանջն առաջին հերթին վերաբերում է դատարանին՝ որպես գործն ըստ էության լուծող

անկողմնակալ մարմնի: Ուստի և դատարանը, մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացման պահը, իր գործողություններով, այդ թվում՝ որոշումներով որևէ կերպ չպետք է սուբյեկտիվ դիրքորոշում հայտնի ամբաստանյալին ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածության կամ անհիմն լինելու մասին:

Սակայն դատարանին վերաբերելուց զատ անմեղության կանխավարկածի պահպանումը վերաբերում է մի շարք սուբյեկտների: Անմեղության կանխավարկածը որոշում է մեղադրյալի իրավական վիճակը ոչ միայն քրեական դատավարությունում, այլև բոլոր այն հասարակական հարաբերություններում, որոնցում նա հանդես է գալիս որպես մասնակից: Սահմանադրական այս նորմը, որպես ուղղակի գործողության նորմ, արգելում է առանց դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրող դատավճռի որևէ մեկին վերաբերվել⁶, որպես իրավախախտման մեջ մեղադրվող անձի:

Ու այս կտրվածքով հատկապես կարևոր է զանգվածային լրատվություն դերակատարումը: Անմեղության կանխավարկածի չպահպանումը կարող է խաթարել արդարադատության ողջ գործընթացը, ինչպես նաև ձևավորել անձի մեղավորության՝ որպես հաստատված փաստի մասին հասարակական ընկալում կամ նպաստել դրան: Ուստի, այս սկզբունքը պետք է անշեղորեն պահպանվի ցանկացած քրեական գործով վարույթի ընթացքում՝ անկախ նրանից, թե ինչ հանցավոր արարքի մասին է խոսքը, հասարակության շրջանում ինչ վարկ ունի անձը և այլն⁷: Ու հաշվի առնելով հասարակական ընկալման գործում զանգվածային լրատվամիջոցների դերակատարումը այս սկզբունքի պահպանումը էական դերակատարում է ստանում յուրաքանչյուր լրատվամիջոցի համար:

Հենց սա է պատճառը, որ զանգվածային լրատվության միջոցների կողմից անմեղության կանխավարկածի պահպանումը համարվում է առաջնայնություն:

Այսպես՝ Միացյալ ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների կոմիտեի «32-րդ ընդհանուր մեկնաբանություն» փաստաթուղթը նվիրված է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածին, որում ներառված է նաև անմեղության կանխավարկածի սկզբունքը: Փաստաթուղթը նշում է. «Անմեղության կանխավարկածը, որ մարդու իրավունքների պաշտպանության համար ունի հիմնաքարային նշանակություն, դատախազության վրա է դնում մեղադրանքի ապացուցման բեռը, երաշխավորում է, որ մեղավորությունը չի կարող ենթադրվել, քանի դեռ չի ապացուցվել ողջամիտ կասկածից վեր ապացուցողական չափանիշով, հաստատում է, որ կասկածները մեկնաբանվում են հոգուտ մեղադրյալի, և պահանջում է, որ հանցան-

քի մեջ մեղադրվող անձանց վերաբերվեն այս սկզբունքին համահունչ: Բոլոր պաշտոնատար անձանց պարտականությունն է ձեռնպահ մնալ դատավարության ելքի վրա ազդելուց՝ օրինակ՝ մեղադրյալի մեղավորության մասին հրապարակային հայտարարություններ անելով¹⁰: Մեղադրյալները, որպես կանոն, չպետք է կալանավորվեն կամ դատավարությունների ընթացքում պահվեն վանդակներում կամ այլ կերպ ներկայացվեն դատարանին այնպես, որ ստեղծվի վտանգավոր հանցագործ լինելու մասին տպավորություն: **Ձանգվածային լրատվության միջոցները պետք է ձեռնպահ մնան անմեղության կանխավարկածը խաթարող լուսարանումներից:** Ավելին, մինչդատական կալանքի երկարությունը չի կարող լինել մեղքի կամ¹² դրա աստիճանի ցուցանիշ¹³: Գրավի մերժումը կամ քաղաքացիական դատավարության կարգով սահմանված պատասխանատվությունը¹³ չեն ազդում անմեղության կանխավարկածի վրա» սահմանված է 32-րդ ընդհանուր մեկնաբանության 4րդ մասում:

Այս առումով հատկանշական է նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2003 թվականի հրապարակած հանձնարարական (REC (2003)13), որը վերաբերում է քրեական գործերի առնչությամբ մեղիայի կողմից տրամադրվող տեղեկատվությանը: Հանձնարարականով սահմանվող երկրորդ սկզբունքը վերաբերում է անմեղության կանխավարկածին: Այսպես՝ սահմանվում է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը հարգելն արդար դատաբանության իրավունքի անբաժանելի մասն է: Ըստ այդմ, ընթացքի մեջ գտնվող վարույթների վերաբերյալ կարծիքները և տեղեկատվությունը կարող են հաղորդվել կամ տարածվել միայն այն լրատվամիջոցներով, որտեղ հաղորդումը չի վտանգում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության կանխավարկածի իրավունքը¹⁴:

Այս առումով կարևոր է նաև ՄԻԵԴ նախադեպային պրակտիկան: Հատկանշական է Bédat-ն ընդդեմ Շվեյցարիայի գործը¹⁵: Բեդաթը շվեյցարացի լրագրող էր, որ աշխատում էր L'Illustré ամսագրում, որում տպագրել էր նյութ 2003 թվականին տեղի ունեցած, երեք անձի կյանք խլած վթարի մասին: Հոդվածում լրագրողը ներկայացրել էր մանրամասներ նախաքննության վերաբերյալ, այդ թվում՝ քննիչների և դատավորների կողմից տրված հարցերը, վարորդի պատասխանը, ինչպես նաև վարորդի նամակը ուղղված դատավորին: Այս գործող դատախազը բողոք էր ներկայացրել՝ հիմք ընդունելով, որ գաղտնի փաստաթղթերի հրապարակումը առաջացնում է քրեական օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն, որի հիման վրա Բեդաթը ենթարկվեց մեկ ամսվա ազատազրկման, ինչն էլ հետագայում փոխարինվել էր տու-

գանքով: Ազգային դատարաններում անարդյունք բողոքարկումից հետո Բեդաթը դիմեց ՄԻԵԴ: ՄԻԵԴ-ի Մեծ պալատը գտավ, որ այս գործով չկա Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում՝ մատնանշելով մի շարք գործոններ, այդ թվում՝ անմեղության կանխավարկածը:

Դատարանը մասնավորապես նշել է. «Լրագրողները պետք է մեկընդմիջտ հիշեն, որ ընթացքի մեջ գտնվող քրեական վարույթների վերաբերյալ մեկնաբանությունները սահմանափակ են և չեն կարող տարածվել այն հայտարարությունների վրա, որոնք, ամենայն հավանականությամբ, կարող են ազդել, անկախ դատավորության առկայությունից, անձի՝ անկախ դատավարության իրավունքից օգտվելու վրա կամ խաթարել հասարակության վստահությունը քրեական վարույթ իրականացնող դատարանի դերի նկատմամբ»:

Մեկ այլ՝ Axel Springer SE-ն և RTL Television GmbH-ն ընդդեմ Գերմանիայի գործով¹⁶ Դատարանը գտել է, որ մեղիային արգելելը՝ հրապարակել սպանության գործով մեղադրվող անձի նույնականացումը հնարավոր դարձնող նկարները, չի խախտում Կոնվենցիայի 10-րդ հոդվածը:

Այս գործով դիմումատուները երկու գերմանական մեղիա ընկերություններ էին Axel Springer SE, որը գրանցված է Բեռլինում և RTL Television GmbH (“RTL”), որը գրանցված է Զյուլում: Երկու մեղիա ընկերություններն էլ լուսաբանել էին երիտասարդ տղամարդու նկատմամբ քրեական հետապնդումը, որը մեղադրվում էր իր ծնողների սպանության մեջ: Հոգեբուժական փորձաքննության արդյունքում հաստատվել էր, որ տղան հանցանքը կատարելու պահին տառապում էր շիզոֆրենիայի խանգարմամբ: Երկու ընկերությունները ներկայացնող ֆոտոլրագրողը մասնակցում էր դատական նիստերին և դատավորի կողմից ուներ հատուկ նախազգուշացում, որ կատարված նկարները որևէ կերպ թույլ չպետք է տան անհատականացնել մեղադրյալին: Դատարանը նախազգուշացրել էր, որ մնան պահանջը խախտած լրագրողներին հետագայում թույլ չի տրվելու մասնակցելու դատական նիստերին: Մի քանի օր անց դատարանը հիմնավորված որոշում էր ուղարկել մի շարք լրագրողներին, այդ թվում դիմումատուին, տեղեկացնելով, որ միայն այն լրագրողները ովքեր կգրանցվեն դատարանում և կհավաստիացնեն, որ նկարները կդարձնեն ոչ անհատականացնող, օրինակ, մեղադրյալի դեմքը խամրացնելով, կարող են մասնակցել նիստին: Դիմումատուները բողոքեցին այս որոշման դեմ՝ ընդհուպ միջև սահմանադրական դատարան, սակայն, սպառնելով ներպետական միջոցները դիմեցին ՄԻԵԴ: Axel Springer SE-ն և RTL Television GmbH-ն ընդդեմ Գերմանիայի գործով¹⁷ Դատարանը գտավ, որ մեղիային արգելելը՝ հրապարակել սպանության գործով մեղադրվող անձի անհատականացումը

հնարավոր դարձնող նկարները, չի խախտում Կոնվենցիայի 10-րդ հոդվածը:

Դատարանն այս գործով մաս հատակեցրել է այն չափանիշները, որոնք ուսումնասիրվում են դատարանի կողմից՝ գնահատելու խոսքի ազատության իրավունքի հնարավոր խախտումը՝ քրեական գործի ընթացքը պարզաբանող տեղեկությունների տրամադրման համատեքստում: Այդ չափանիշներն են՝

1. հասարակության հետաքրքրությունը քննարկվող գործում.

2. այն հանգամանքները, որում նշված տեղեկատվությունը լրագրողին հասանելի է դարձել.

3. Այն անձի հայտնիության աստիճանը, ում մասին տեղեկություններ են հրապարակվել.

4. հրապարակման ձևը, բովանդակությունը և հետևանքները.

5. հրապարակման ազդեցությունը վարույթի վրա.

6. պետության կողմից կիրառված միջոցները:

Հարկ է նշել, որ ՄԻԵԴ-ը զանգվածային լրատվության միջոցների համատեքստում անմեղության կանխավարկածին անդրադարձել է մի շարք գործերով ևս: Այսպես՝ Դատարանը արձանագրել է՝

- Մամուլի չարական արշավը կարող է, այնուամենայնիվ, դատաքննության արդարության վրա բացասաբար ազդել՝ ներգործելով հանրային կարծիքի վրա և, հետևաբար, մեղադրյալի մեղավորությունը որոշող երդվյալ ատենակալների վրա (Kuzmin-ն ընդդեմ Ռուսաստանի, § 62):

- Կասկածյալների լուսանկարների հրապարակումն ինքնին չի խախտում անմեղության կանխավարկածը (Y.B.-ն և այլք ընդդեմ Թուրքիայի, § 47): Կասկածյալի լուսանկարը հեռուստատեսությամբ հեռարձակելը կարող է որոշակի հանգամանքներում 6-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները պահպանելու հարց բարձրացնել (Rupa-ն ընդդեմ Ռումինիայի (թիվ 1), § 232):

Անմեղության կանխավարկածին առնչվող թերևս ամենաբարդ հարցը հետևյալն է՝ արդյոք անմեղության կանխավարկածը կարող է խախտվել այն դեպքում, երբ անձի մեղավորության մասին տեսակետ է արտահայտվում քրեական գործ հարուցված չլինելու պայմաններում:

Այս հարցի վերաբերյալ դիրքորոշումը միանշանակ չէ: Հարկ ենք համարում անդրադառնալ ՄԻԵԴ-ի՝ այս հարցի վերաբերյալ արտահայտած հիմնական դիրքորոշումներին:

Այսպես, Zollmann-ն ընդդեմ Սիացյալ Թագավորության գործով¹⁸ դիմումատուների գանգատը՝ անմեղության կանխավարկածի խախտելու վերաբերյալ, անընդունելի է համարվել այն հիմքով, որ կոնվենցիան պաշտպանում է այն անձանց անմեղության կանխավարկածը, ովքեր մեղադրվում են հանցավոր արարք կատարելու մեջ: 6-րդ հոդվածի

2-րդ կետն ուղղված է տվյալ վարույթի հետ սերտորեն կապված մինչդատական հայտարարություններ անելու միջոցով արդար քրեական դատաքննության իրավունքի խախտումը կանխելուն: Եթե չկա կամ գոյություն չի ունեցել այդպիսի վարույթ, ապա քրեական բնույթի կամ այլ դատապարտելի վարքագիծ վերագրող հայտարարություններն ավելի կապված են զրպարտության դեմ պաշտպանության ու դատարանի մատչելիության նկատառումների հետ՝ քաղաքացիական իրավունքները որոշելու համար՝ բարձրացնելով Կոնվենցիայի 8-րդ և 6-րդ հոդվածներով սահմանված հնարավոր հարցեր:

Այլ հարց է, որ «քրեական մեղադրանքը» Կոնվենցիայի իմաստով ինքնավար հասկացություն է: «Քրեական մեղադրանք» հասկացությունն ունի «ինքնուրույն» նշանակություն՝ անկախ անդամ պետությունների ազգային իրավական համակարգերում օգտագործվող դասակարգումներից (Adolf-ն ընդդեմ Ավստրիայի, § 30): «Մեղադրանք» հասկացությունը հարկավոր է հասկանալ Կոնվենցիայի իմաստով:

Այդպիսով, այն կարող է սահմանվել որպես «իրավասու մարմնի կողմից անձին տրված պաշտոնական ծանուցում՝ վերջինիս կողմից քրեական իրավախախտում կատարելու ենթադրության վերաբերյալ»: Այս սահմանումը համապատասխանում է մասնա՝ «[կասկածյալի] վիճակի վրա էական ազդեցության» որոշման չափորոշին (Deweer-ն ընդդեմ Բելգիայի, §§ 42 և 46, Eckle-ն ընդդեմ Գերմանիայի, § 73): Դատարանը եզրակացրել է մասնա, որ ոստիկանության կողմից արգելանքի տակ պահվող անձը, որից պահանջվել էր երդում տալ՝ նախքան որպես վկա հարցաքննվելը, արդեն իսկ «քրեական մեղադրանքի» սուբյեկտ էր և իրավունք ուներ լռելու (Brusco-ն ընդդեմ Ֆրանսիայի, §§ 46-50):

Batiashvili-ն ընդդեմ Վրաստանի գործով¹⁹ դիմումատուն պնդել էր, որ ՁԼՄ-ներով իր հեռախոսային խոսակցությունների ձայնագրությունների հրապարակումը խախտել է 6-րդ հոդվածով սահմանված նրա իրավունքը՝ համարվելու անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով: Դատարանն ուշադրություն էր դարձրել այն հանգամանքին, որ անձին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել 2006 թվականի հուլիսի 26-ին, այնինչ ձայնագրությունները հրապարակվել են դրանից 4 օր առաջ: Այնուամենայնիվ, Դատարանը հարկ է համարել ուսումնասիրել մինչև այդ տեղի ունեցած իրողությունները՝ իրավիճակը պատշաճ գնահատելու համար: Սրա համատեքստում Դատարանը շատ կարևոր է համարել այն, որ իշխանությունները մեղադրանքներից մեկը հիմնվել է բացառապես այդ ձայնագրության վրա: Դատարանը համարել է, որ մեղադրող կողմի ներկայացուցիչները սկզբում փոփոխել

են ձայնագրությունը, որպեսզի ստեղծվի տպավորություն, որ դիմումատուն հանցանք է կատարել, ապա կրճատված և աղավաղված ձայնագրությունը հասանելի է դարձրել հանրությանը: Նմանատիպ mala fide արարքը՝ համակցված այն հանգամանքի հետ, որ ձայնագրության խեղաթյուրումն ու քրեական գործի հարուցումը ժամանակային առումով շատ մոտ են եղել, Դատարանի առաջ բարձրացնում են անմեղության կանխավարկածի սկզբունքի կիրառելիության հարց:

Դատարանը քննության արդյունքում գտել է, որ սկզբունքը խախտվել է:

Այս երկու որոշումների համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ, ընդհանուր առմամբ, քրեական մեղադրանքի առաջադրված չլինելը բացառում է անմեղության կանխավարկածի սկզբունքի կիրառելիությունը, սակայն բոլոր այն դեպքերում, երբ հայտարարությանը հաջորդում է դրավա հիմնված քրեական գործի հարուցում, որը ժամանակային առումով մոտ է հայտարարությանը կամ հրապարակմանը, ապա անմեղության կանխավարկածի սկզբունքը դառնում է կիրառելի:

¹ Տե՛ս, <https://www.irtek.am/views/act.aspx?aid=37346>

² Տե՛ս, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=20870>

³ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Երևանի պետական համալսարան, Եր., Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2012, էջ 351:

⁴ Տե՛ս, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=77187>

⁵ Տե՛ս, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=90985>

⁶ Տե՛ս, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=77187>

⁷ Տե՛ս, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=77187>

⁸ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Երևանի պետական համալսարան, Եր., Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2012, էջ 352:

⁹ Տե՛ս, <https://ombuds.am/am/site/ViewNews/479>

¹⁰ Տե՛ս, Communication No. 770/1997, Gridin v. Russian Federation, paras. 3.5 and 8.3.

¹¹ 14-րդ հոդվածի 2-րդ մասի և մինչդասական կալանքին վերաբերող 9-րդ հոդվածի հարաբերակցության մասին ավելի մանրամասն տե՛ս, Italy, CCPR/C/ITA/CO/5 (2006), para. 14 and Argentina, CCPR/CO/70/ARG (2000), para. 10.

¹² Տե՛ս, Communication No. 788/1997, Cagas, Butin and Astillero v. Philippines, para. 7.3.

¹³ Տե՛ս, Communication No. 207/1986, Moracl v. France, para. 9.5; No. 408/1990, W.J.H. v. The Netherlands, para. 6.2; No. 432/1990, W.B.E. v. The Netherlands, para. 6.6.

¹⁴ Տե՛ս, https://www.coe.int/en/web/freedom-expression/committee-of-ministers-adopted-texts/-/asset_publisher/aDXmrol0vvsU/content/recommendation-rec-2003-13-of-the-committee-of-ministers-to-member-states-on-the-provision-of-information-through-the-media-in-relation-to-criminal-pr?inheritRedirect=false

¹⁵ Տե՛ս, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-161898>

¹⁶ Տե՛ս, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-177077>

¹⁷ Տե՛ս, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-177077>

¹⁸ Տե՛ս, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-23579>

¹⁹ Տե՛ս, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-196374>

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարդու իրավունքների համընդհանուր չ ն չ ա կ ա գ ի ռ (Ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10ի 217 Ա (III) բանաձևի համաձայն)
2. Միջազգային դաշնագիր քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին (16 դեկտեմբերի 1966 թ.)
3. Կոնվենցիա մարդու իրավունքների եվ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին* փոփոխված 11-րդ արձանագրությամբ (4րդ նոյեմբերի, 1950 թ., Հռոմ)
4. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Երևանի պետական համալսարան, Եր., Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 2012,
5. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը, ԵԷԴ/0044/01/11 գործով
6. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը, ՇԴ/0012/11/13 գործով
7. Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան, անմեղության կանխավարկածը անհրաժեշտություն է

- Арпине Ованнисян**
Преподаватель кафедры гражданского права ЕГУ,
кандидат юридических наук, доцент

Презумпция невиновности и средства массовой информации

Ключевые слова: презумпция невиновности, средства массовой информации, ЕСПЧ, пределитное право

The presumption of innocence and mass media

Key words: *presumption of innocence, mass media, ECHR, case law.*

www.ardaratutyunjournal.com

ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՅԵՐԻ ԼՐԱՅՄԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԽՆՈՂԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՅԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հոդվածի շրջանակներում քննարկվել և վերլուծության են ենթարկվել իրավակիրառ գործունեության ընթացքում իրավունքի բացերի լրացման իրավաբանական եղանակների հիմնախնդիրները: Նշված հիմնախնդրի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ իրավական նորմերի հակասությունները, թերությունները կամ թերի լինելը կարելի է հայտաբերել միայն իրավակիրառ գործունեության ընթացքում և դրանց լրացման համար կարևոր նշանակություն ունի իրավաստեղծ գործունեությունը, ինչպես նաև դատարանում այս կամ այն իրավական վեճի լուծման կամ անհրաժեշտության դեպքում կարգավորելու կոնկրետ իրավական հարցը այլ իրավասու մարմինների կողմից: Հետևաբար դատարանն է լինելու վերջին ատյանը, որը իրավասու է հաստատելու բացերի առկայությունը: Նման իրավիճակի առաջացման դեպքում դատարանին անհրաժեշտ է գործն ըստ էության լուծել, այսինքն՝ լրացնել բացը: Ուստի, կարող ենք արձանագրել, որ բացերի ստեղծումն ու հաղթահարումը պետք է դիտարկել, որպես իրավապահի մասանգիտական մտավոր գործունեության երկու անքակտելիորեն փոխկապված փուլեր: Իրավասու մարմինը, չի կարող հրաժարվել որևէ մեկի իրավունքի պաշտպանությունից, նա պարտավոր է կոնկրետ գործն ըստ էության լուծել, այսինքն՝ իրավապահը, ըստ օբյեկտիվ անհրաժեշտության, ընթացք է տալիս՝ բացը հաստատելուց մինչև այն հաղթահարելը:

Հիմնարարը՝ իրավակիրառ գործունեություն, իրավունքի բաց, իրավունքի անալոգիա, օրենքի անալոգիա, բացերի հաղթահարում, բացերի լրացում:

Իրավունքի կիրառումը տեղի է ունենում նյութական և վարույթային պոզիտիվ նորմերին խիստ համապատասխան և դրանց շրջանակներում: Այսինքն՝ իրավունքի կիրառման սուբյեկտը կոնկրետ հասարակական հարաբերության կամ փաստի նկատմամբ կիրառում է պոզիտիվ իրավունքի կոնկրետ նորմերը՝ վկայակոչելով դրանք: Նշված գործընթացի ժամանակ երբեմն պոզիտիվ իրավունքի նորմերում իրավունքի կիրառման սուբյեկտը չի գտնում տվյալ դեպքի համար նախատեսված նորմը, ինչի հետևանքով ի հայտ են գալիս որոշակի հիմնախնդիրներ, որոնք իրավագիտության մեջ անվանում են իրավունքի կամ իրավական կարգավորման բաց: Սակայն դա չի նշանակում, որ պոզիտիվ իրավունքի բացերը պետք է բացառեն իրավունքի իրացման գործընթացը: Հետևաբար իրավունքի իրացումը պետք է շարունակվի և իրավական կարգավորումը հասնի իր վերջնական նպատակին: Շարադրվածի հաշվառմամբ կարող ենք արձանագրել, որ իրավունքի բաց ասելով պետք է հասկանալ իրավական կարգավորման բացակայությունը հասարակական այն ոլորտում, որոնք սովորաբար օբյեկտիվորեն պահանջում են կարգավորում: Ներկայացված բնորոշումից ակնհայտորեն պարզ է, որ իրավունքի բաց հասկացությունը վերաբերում է միայն պոզիտիվ իրավական կարգավորմանը: Օրենքից տարբերակված իրավունքը, որպես էություն, չունի բաց կամ չի կարող բաց լի-

նել: Ուստի «իրավունքի բաց» հասկացությունն ունի պոզիտիվ-իրավական իմաստ և վերաբերում է միայն պոզիտիվ իրավունքին կամ պոզիտիվ-իրավական կարգավորմանը: Հետևաբար, հիմնավոր են այն հեղինակների տեսակետները, ովքեր այս հասկացությունը ձևակերպում են որպես «օրենսդրության բաց», այլ ոչ թե իրավունքի¹:

Վերոգրյալ դիտարկումների հաշվառմամբ հարկ ենք համարում նշել, որ իրավունքի կամ օրենսդրության բացի վերաբերյալ մասնագիտական գրականության² մեջ առկա բնորոշումներն, ըստ էության, մեթոդոլոգիական տեսանկյունից նույն իմաստն ունեն: Ուստի իրավունքի բացերի վերացումը, որպես կանոն, իրավաստեղծ մարմինների գործառնությոն է: Իրավունքի իրացման համատեքստում իրավագիտության մեջ օգտագործվող «իրավունքի բաց» հասկացությունն ունի զուտ իրավաբանական իմաստ: Այսինքն՝ այն համարվում է իրավաբանական հիմնախնդիր, և առկա է այն ժամանակ, երբ որոշակի հարց մտնում է իրավական կարգավորման ոլորտի մեջ, պետք է լուծվի իրավաբանական միջոցներով, սակայն նրա կոնկրետ լուծումն օրենսդրության մեջ ամբողջությամբ կամ մասնակիորեն նախատեսված չէ կամ նախատեսված է ոչ լրիվ իմաստով: Այսպիսով՝ իրավաբանական իմաստով բացերն այն դեպքերն են, երբ որոշակի հասարակական հարաբերություն ամբողջությամբ գտնվելով իրավական կարգավորման

ուղորտում, մնացել է չկարգավորված կոնկրետ իրավական նորմով: Այդ պատճառով, իրավունքի բաց իրավաբանական իմաստով գոյություն չունի, երբ հարաբերությունների այս կամ այն ուղորտը ենթարկված չէ իրավական կարգավորման ընդհանրապես: Օրինակ, ընկերության հարաբերությունները:

Այսպիսով, իրավակիրառ գործընթացի ընթացքում կարող է պարզվել, որ քննվող գործի հանգամանքների նկատմամբ ուղղակիորեն կիրառվող կոնկրետ իրավական նորմը գործող պոզիտիվ իրավունքում բացակայում է կամ նշված իրավահարաբերությունները կարգավորված չեն: Շարադրված դեպքերը կարող են նշանակել, որ՝ օրենսդիրը հրաժարվում է այդ հարաբերությունները կամ իրադրությունները կարգավորելուց, կամ պոզիտիվ իրավունքում առկա է իրավահարաբերությունը կարգավորող պոզիտիվ իրավունքի բաց: Այն դեպքում, երբ օրենսդիրը հրաժարվում է համապատասխան փաստական հանգամանքների իրավական կարգավորումից, այդ փաստական հանգամանքները չունեն իրավաբանական նշանակություն: Այդ հանգամանքներով չպետք է հարուցվի իրավաբանական գործ, իսկ արդեն հարուցված գործերով անհրաժեշտ է կայացնել համապատասխան որոշում՝ հաշվի առնելով բացահայտված իրավաբանական նշանակության բացակայությունը: Ուրեմն իրավունքում բացն առկա է, երբ բացակայում է իրավական կարգավորման ուղորտում գտնվող փաստական հանգամանքների վերաբերյալ իրավունքի նորմը:

Վերը նշված դիտարկումների հիման վրա կարող ենք արձանագրել, որ իրավաբանական գրականության մեջ իրավունքի բացերը բաժանում են իրականի և կարծեցյալի: Իրական բացը իսկապես առկա իրավական կարգավորման բացն է: Կարծեցյալ բացն այն բացն է, երբ որոշակի հարց, հասարակական հարաբերությունների որոշակի ուղորտ չի կարգավորվում իրավունքով, չնայած այս կամ այն անձի, անձանց խմբի կարծիքով այն պետք է կարգավորվեր իրավունքի նորմով: Նշված դեպքում օրենսդիրը նպատակահարմար չի գտնում տվյալ հարցը կամ հասարակական հարաբերությունները կարգավորի իրավական միջոցներով:

Իրավունքի բացերը բաժանվում են նաև սկզբնական և հետագա բացերի: Նախնական բացն առկա է այն ժամանակ, երբ օրենսդիրը նորմատիվ ակտի ձևակերպման մեջ չի կարող ընդգրկել բոլոր կենսական դեպքերը, որոնք պահանջում են իրավական կարգավորում, երբ օրենսդիրը այս կամ այն նորմը ձևակերպել է թերություններով: Հետագա բացն առաջանում է նոր հասարակական հարաբերությունների ծագմամբ, առաջացմամբ, որոնք չէին կարող նախատեսվել օրենսդրի կողմից: Հնարավոր է, որ այդ հարաբերությունների տե-

սակն արդեն ենթարկված լինի իրավական կարգավորման: Այդպիսի բացերի առաջացման պատճառը օրենքների կյանքից հետո մնալու գործընթացներ են: Իրավունքում բացեր առելով՝ նկատի է առնվում իրավունքի այնպիսի նորմի բացակայությունը, որը, կախված գործող իրավունքի իմաստից և դրանով կարգավորվող հասարակական հարաբերությունների բնույթից, անհրաժեշտ է իրավական կարգավորման կազմավորված ուղորտում գտնվող տվյալ կոնկրետ փաստացի հանգամանքների (փաստացի հարաբերությունների) կարգավորման համար: Իրավունքում բացերը կարող են լինել կամ զարգացող հասարակական հարաբերություններից օրենսդրության հետ մնալու հետևանք, կամ էլ՝ հենց օրենսդրի սխալների ու բացթողումների, նրա օրինաստեղծ մշակույթի ցածր մակարդակի և այլնի արդյունք: Նշված դեպքում ի հայտ են գալիս այլ իրավական խնդիրներ ևս, որոնք կարող են հանգեցնել իրավունքի գերակայության սկզբունքի խաթարմանը:

Իրավունքի բացերը հայտնաբերվում են հիմնականում իրավակիրառ գործունեության ընթացքում: Իրավունքի բացի առկայությունը հաստատելու համար անհրաժեշտ է կատարել հատուկ իրավական վերլուծություն, որը պետք է հենվի հասարակական կյանքի սոցիալական փաստերի ուսումնասիրության վրա: Իրավունքի բացի առկայության կամ բացակայության հարցը, ըստ Ս. Ա. Կոմարովի, հասարակ հարցերից չէ՝: Այդ դեպքում պետք է նկատի ունենալ, որ շատ իրադրություններում իրավունքի բաց չկա, ներառյալ՝

ա/ երբ իրավունքը «լռում է», ինչ-որ հարցի կապակցությամբ, ապա դա վկայում է, որ օրենսդիրն անհրաժեշտ չի համարում իրավական միջոցներով կարգավորելու տվյալ հարաբերությունները,

բ/ եթե հասարակական հարաբերության տեսակը կարգավորված է իրավունքի նորմերով, սակայն ոչ բավարար կոնկրետությամբ, միայն ընդհանուր նորմեր սահմանելով,

գ/ եթե օրենսդիրն ուղղակի կամ անուղղակի իրավակիրառող սուբյեկտին լիազորում է գոյություն ունեցող կանոնները կոնկրետացնելու կամ թույլ է տալիս որոշում ընդունելու սեփական հայեցողությամբ,

դ/ եթե նորմատիվ-իրավական ակտը հակառակում կամ չի համապատասխանում սոցիալ-տնտեսական պահանջումներին և հասարակության զարգացման աստիճանին,

ե/ եթե առկա է օրենքի տրամաբանական հակասություն:

Նորմատիվ իրավական ակտերում բացերի առկայության պատճառով առաջանում է իրավունքի էության և կենսագործման խնդիրը: Այդ խնդրի լուծման գլխավոր ձևը իրավաստեղծագործությունն է, այսինքն՝ իրավասու պետական մարմնի

կողմից պակասող իրավական նորմի ընդունումը և գործողության մեջ դնելը: Իրավաստեղծագործության միջոցով բացը վերացվում է: Սակայն նշված պարագայում իրավունքի բացի վերացման համար պահանջվում է ավելի երկար ժամանակահատված, այդ իսկ պատճառով իրավունքի տեսության մեջ մշակվել է նաև իրավունքի բացի հաղթահարման մեկ այլ ձև՝ իրավաբանական անալոգիա: Իրավաբանական անալոգիան չի վերացնում բացը և միայն թույլ է տալիս հաղթահարել իրավունքի բացը կոնկրետ գործը լուծելու միջոցով:

Վերոգրյալի դիտարկմամբ կարող ենք արձանագրել, որ իրավունքի բացի առկայության դեպքում իրավունքի իրացման խնդիրները լուծվում են բացերի լրացման երկու ձևերով՝

- իրավունքի բացի վերացումը իրավաստեղծագործության միջոցով,
- իրավունքի բացի հաղթահարումը՝ իրավաբանական անալոգիայի միջոցով:

Իրավաստեղծագործության և անալոգիայի, որպես իրավունքի բացերի լրացման ձևերի հարաբերակցության համատեքստում հետաքրքիր հիմնախնդիր է «իրավական վակուում» և «իրավունքի բաց» հասկացությունների հարաբերակցությունը, որը պարզաբանման կարիք ունի: Մասնավորապես, պոզիտիվ իրավունքի բացերը գոյություն ունեն՝ կամ իրավական կարգավորման ոլորտում գտնվող փաստերի և սոցիալական կապերի վերաբերյալ նորմերի լրիվ բացակայության տեսքով, կամ դրանց մասնակի բացակայության տեսքով: Նշված բաժանումը հիմք է տալիս որոշ իրավաբան գիտնականների՝ եզրակացնելու, որ իրավական նորմերի լրիվ բացակայության կացությունը, այսպես կոչված, իրավական վակուումն է: «Իրավական վակուումը» իրավական նորմերի բացակայությունն է, որոնք պետք է կարգավորեն նախկինում իրավունքով չկարգավորված, բայց իրավական կարգավորման կարիք ունեցող նոր ծագած հասարակական հարաբերությունները: Ըստ այս հեղինակների, իրավական վակուումը և իրավունքի բացը միավորող ընդհանուր հատկանիշը համարվում է այն, որ դրանք ծագում են հասարակական հարաբերությունների զարգացման կապակցությամբ, օրենսդրության՝ կյանքից ետ մնալու հետևանքով: Սակայն, եթե բացը լրացնելու համար կարելի է դիմել անալոգիայի, ապա իրավական վակուումը լրացնելու համար նման եղանակն անընդունելի է: Այս դեպքում անհրաժեշտ է համապատասխան նորմատիվ ակտի ընդունում: Հետևաբար, շարադրված դեպքերում «իրավական վակուում» և «իրավունքի բաց» հասկացություններն որոշակի հատկություններով ու հատկանիշներով կարծես թե համընկնում են, սակայն իրավական վակուում, իրավունքի բաց հասկացությունների տարբերակումն իրականում ունի հիմքեր: Սակայն, կարծում ենք,

որ այս հիմնախնդիրը համարվում է ավելի լայն հիմնախնդրի մի մասը կամ դրա հետ սերտորեն կապված է: Խոսքը գնում է անալոգիայի կիրառման թույլատրվող և չթույլատրվող ոլորտների մասին: Այն ոլորտներում, որտեղ առկա է իրավունքի բացը և չի թույլատրվում անալոգիան, ուրեմն՝ բացը իսկապես վակուում է: Բայց վակուում կարող է առաջանալ նաև, օրինակ, քաղաքացիական ոլորտում, բայց այստեղ այն բոլոր դեպքերում անալոգիայի միջոցով կարող է հաղթահարվել: Այս առումով հարկ ենք համարում նշել, որ Գ. Դանիելյանը նշել է, որ՝ «...ինչո՞ւ իրավունքի կամ օրենքի անալոգիայի կիրառմանը դեռևս պատշաճ ուշադրություն չի դարձվում, ինչո՞ւ այն չի դիտվում որպես իրավական որոշակիության հետ աղերսներ ունեցող իրավական բացերը հաղթահարելու միջոց: Այս հարցի պատասխանը, թերևս, առնչվում է իրավական մշակույթի հետ: Վերջին հաշվով ակնհայտ է, որ հայրենական իրավական համակարգում այդպես էլ չի ձևավորվել իրավունքի կամ օրենքի անալոգիայի կիրառման կայուն պրակտիկա, ինչը խոչընդոտում է անհրաժեշտ արհեստավարժության պակասը: Նկատենք, որ համապատասխան ուսումնական հաստատություններում իրավագիտություն մասնագիտությամբ պրակտիկ աշխատողների վերապատրաստման ծրագրերում անգամ նախատեսված չեն իրավունքի կամ օրենքի անալոգիայի կիրառման դասընթացներ»⁴: Շարադրվածի հիման վրա կարող ենք նշել, որ իրավակիրառ գործունեության մեջ իրավունքի բացերի վերացման կարևոր եղանակներից է իրավունքի կամ օրենքի անալոգիայի կիրառումը, քանի որ նշված եղանակների կիրառման պարագայում իրավունքի բացերի վերացման գործընթացն ավելի արագ է տեղի ունենում, քան իրավաստեղծ գործունեության դեպքում: Հարկ ենք համարում նշել, որ իրավունքի բացերի վերացումն իրավաստեղծ գործունեության միջոցով պետք է իրականացվի միայն այն դեպքում, երբ կոնկրետ հասարակական հարաբերությունները պահանջում են իրավական կարգավորում:

Իրավունքի բացերի լրացման լավագույն ձևը իրավաստեղծագործության միջոցով այն վերացնելն է, սակայն, իրավունքի կիրառման ներկայացվող պահանջներից մեկն էլ օպերատիվությունն է, ուստի իրավաստեղծագործության ճանապարհով իրավունքի բացի վերացումը դանդաղ ընթացող գործընթաց է, որը իրավակիրառման գործընթացի արդյունավետության վրա կարող է ունենալ բացասական ազդեցություն: Հետևաբար, քանի դեռ իրավունքի բացերը չեն լրացվել իրավաստեղծ գործունեության միջոցով, իրավակիրառ գործընթացում անհրաժեշտություն է առաջանում իրավունքի բացերը վերացնել անալոգիայի միջոցով: Իրավաբանական անալոգիան իրավունքի բացերի ժամանակավոր, եզակի հաղթահարման եղանակն է և առկա

է անալոգիայի երկու տեսակ՝ օրենքի անալոգիա և իրավունքի անալոգիա:

Գործի լուծումը բովանդակությամբ ամենից մոտիկ նորմերի հիման վրա, այսինքն՝ իրավունքի կիրառումը դեպքերի նկատմամբ, որոնք ուղղակիորեն նորմով չեն կարգավորված, սակայն նման են այդ նպատակով նախատեսված դեպքին, կոչվում է օրենքի անալոգիա: Իսկ եթե բացի առկայության դեպքում նման նորմ չի հայտնաբերվում, ապա կիրառվում է իրավունքի անալոգիան, այսինքն քննարկվող դեպքի նկատմամբ ամբողջ իրավունքի կամ իրավունքի ճյուղի, կամ իրավական ինստիտուտի ընդհանուր դրույթների ու սկզբունքների կիրառումը: Իրավունքի անալոգիան կիրառվում է այնտեղ, որտեղ անհնարին է ընտրել նմանատիպ նորմ: Կարևոր է, որպեսզի, ինչպես օրենքի, այնպես էլ իրավունքի անալոգիայի կիրառման անհրաժեշտությունը ու հնարավորությունը հատուկ նախատեսվի օրենքով և անալոգիայի կիրառումը պետք է հիմնվի օրենքների վրա, կոնկրետ նորմերի և ընդհանուր իրավական սկզբունքների վրա, այլ ոչ թե սուբյեկտիվ գնահատականների, կարծիքների, պաշտոնատար անձանց հայեցողության վրա, որը կարող է հանգեցնել իրավունքի որոշակիության և գերակայության սկզբունքների խախտման: Իրավունքի անալոգիան նշանակում է օրենսդրությամբ չկարգավորված հարաբերության նկատմամբ իրավունքի ընդհանուր դրույթների և իմաստի կիրառում: Այդ ընդհանուր սկզբունքների և իրավունքի իմաստի տակ հասկացվում են իրավունքի և իրավական կարգավորման ճյուղային սկզբունքները: Համաձայն ազատական-իրավաբանական իրավահասկացողության՝ իրավունքի հիմնարար և համընդհանուր սկզբունքը ձևական հավասարության սկզբունքն է, որի կոնկրետացումներն են համարվում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման մնացած բոլոր նորմատիվ իրավական ձևերը: Արդի ժողովրդավարական պետություններում իրավունքի կիրառումն անալոգիայի միջոցով ունի սկզբունքային, կարևոր սահմանափակում, իրավաբանական անալոգիան չի կարելի կիրառել քրեական իրավունքի և վարչական իրավախախտումների վերաբերյալ նշանակվող տույժերի ոլորտներում: Նշվածը պայմանավորված է քննարկվող հասարակական հարաբերությունների առանձնահատկություններով և նշված հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման եղանակներով:

Օրենքի անալոգիան չկարգավորված հարաբերությունների նկատմամբ նմանօրինակ հարաբերությունները կարգավորող օրենքի (գործող պոզիտիվ իրավունքի) նորմի կիրառումն է: Քաղաքացիական և ձեռնարկատիրական հարաբերությունների, մարդու անօտարելի իրավունքների ու ազա-

տությունների և այլ ոչ նյութական բարիքների պաշտպանության ոլորտում օրենքի անալոգիայի կիրառումը նախատեսված է արտասահմանյան մի շարք պետությունների օրենսդրական ակտերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ: Իրավակիրառ գործունեության մեջ օրենքի անալոգիան օգտագործելիս համապատասխան հարաբերությունների իրավաբանական որակման և ամբողջությամբ գործի լուծման համար նմանօրինակ հարաբերություններ կարգավորող պիտանի նորմը, առաջին հերթին, պետք է որոնել օրենսդրության այն ճյուղում, որի կարգավորման ոլորտին է վերաբերում դիտարկվող հարաբերությունը (գործի հանգամանքները), իսկ տվյալ ճյուղում նման նորմի բացակայության դեպքում դա անհրաժեշտ է որոնել տվյալ իրադրությունը կարգավորող օրենսդրությանը ավելի մոտիկ ճյուղերում և ամբողջությամբ օրենսդրության (գործող ամբողջ պոզիտիվ իրավունքի) մեջ: Նմանօրինակ հարաբերությունները կարգավորող օրենսդրության նորմի բացակայության, այսինքն՝ օրենքի անալոգիայի օգտագործման անհնարինության դեպքում, կիրառվում է իրավունքի անալոգիան:

Իրավունքի բացերի վերացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի դրանց հայտնաբերումը և հաստատումը: Վ.Վ. Լազարևի կարծիքով՝ եթե համեմատենք երկու իրավական երևույթների նշանակությունը՝ բացերի հայտնաբերումը և իրավապահ գործընթացի ընթացքում դրանց լրացումը կամ հաղթահարումը, ապա առաջնահերթությունը պետք է տրվի բացերի հայտնաբերման խնդրին, քանի որ դրա լուծումն առավել կարևոր է օրենքի գերակայության պահպանման և իրավակարգավորման համակարգի կատարելագործման գործում ճիշտ ուղղության ապահովման համար:

Իրավական գրականության մեջ նկարագրվում է իրավունքում բացերը հաստատելու երկու հիմնական մեթոդ՝ ֆորմալ-իրավական և կոնկրետ-սոցիոլոգիական: Դրանցից առաջինը՝ ֆորմալ-իրավական, ենթադրում է գործող իրավունքի համակարգի բովանդակության մշակման և վերլուծության մեթոդների հատուկ շարք և ուղղված է հատկապես նորմատիվ ակտերում «տեխնիկական» թերությունների հաստատմանը: Բացերի հաստատման այս մեթոդի առանձնահատկությունը իրավունքի որոշ էական կողմերից վերացումն է, որոնք կապված են իրավական համակարգի նյութական և սոցիալական պայմանականության հետ: Այս մեթոդի կիրառման շրջանակներում առաջին պլան են մղվում տրամաբանական, լեզվական և այլ վերացական կողմերը՝ արտահայտելով իրավունքի կառուցվածքային օրինաչափությունները: Օրենքում բացերի հաստատելու հիմնական մեթոդները, ինչպես նշում է Է.Շ.Քեմուլարիան, անալոգիայի վերաբերյալ եզրակացություններ են¹⁰: Այս առումով, հե-

դինակը անալոգիան համարում է ոչ միայն որպես բացը լրացնելու եղանակներից մեկը, այլև որպես բացի հատկանիշ: Նրա կարծիքով. «Հենց այն փաստը, որ փաստացի օրենքով չկարգավորվող հարաբերությունների նմանությունը հաստատում է դրանով կարգավորվող հարաբերությունների հետ, ենթադրություն է առաջացնում, որ գոյություն ունի բաց» : Միևնույն ժամանակ, կարգավորվող նշանը փոխանցվում է այն հարաբերություններին, որոնք չունեն այն, քանի որ մյուս նշանները համարվում են համընկնող, նույնական²: Այնուամենայնիվ, բացը հաստատելու ֆորմալ և իրավական մեթոդները, «չեն աշխատում» այն դեպքերում, երբ հարց է առաջանում բոլորովին նոր նորմատիվ ակտ ստեղծելու մասին: Վերջին դեպքում՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, գաղափարական և այլն բացահայտելու համար նոր ակտի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորող հիմքերը կօգտագործվեն կոնկրետ սոցիոլոգիական մեթոդի հայեցակարգով ընդգրկված տեխնիկայի և մեթոդների միջոցով:

Այսպիսով, իրավական գիտությանը հայտնի բացերի հաստատման մեթոդները (ֆորմալ-իրավական և կոնկրետ-սոցիոլոգիական) նպատակ ունեն վերացնել բացերը և հասնել իրավական համակարգի այնպիսի վիճակի, որի դեպքում առավելագույն չափով բացառվելու է, մի կողմից՝ իրավական թելադրանքի, իսկ մյուս կողմից՝ դատական կամայականության հնարավորությունը, ինչն իր հերթին նպաստում է իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքների պահպանությանը: Այս առումով, թվում է, որ առավել «բացերը» պետք է ճանաչվեն իրավունքի այն ճյուղերը, որտեղ թույլատրվում են պայմանագրային հարաբերություններ, որոնք ենթադրում են, որ կարգավորման հարցերի բավականին մեծ շրջանակ տրվում է հենց պայմանագրային իրավահարաբերությունների մասնակիցներին համաձայնեցնելու համար: Ակնհայտ է, որ այս տեսանկյունից առաջնահերթությունը պետք է տրվի քաղաքացիական իրավունքին՝ որպես իրավական համակարգի ամենաբարդ և մասշտաբային ճյուղերից մեկը: Դրա շատ ինստիտուտներ, ինչպիսիք են կորպորատիվ իրավունքը, հեղինակային իրավունքը, պայմանագրային իրավունքը և այլն, այնքան ծավալուն են, որ երբեմն գերազանցում են իրավունքի որոշ անկախ ճյուղերը:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ իրավական կարգավորման բացերի հայտնաբերման հիմնական ոլորտն իրավական պրակտիկան է, և, մասնավորապես, իրավապահ մարմինների գործունեությունը, որի ընթացքում բավականին հաճախ անհրաժեշտ է դառնում լուծել վիճահարույց իրավիճակը՝ իրավական նորմերում կոնկրետ նմուշի բացակայության պայմաններում:

Ինչպես արդեն նշվել է՝ իրավունքի և օրենքի բացերը հաղթահարելու հիմնական միջոցը անալոգիայի օգտագործումն է: Այնուամենայնիվ, հաշվի առնելով իրավունքի բացերը «լրացնելու», «հաղթահարելու» հասկացությունների մասին վերը նշված քննարկումը, այսօր իրավունքի բացերի տեսության և դրանց լրացման պրակտիկայի ամենախնդրահարույց հարցերից մեկը իրավակիրառ գործընթացում բացերը լրացնելու թույլատրելի սահմանները որոշելն է՝ ներառյալ օրենքի անալոգիայի և իրավունքի անալոգիայի կիրառումը: Անալոգիայի թույլատրելիության սահմանները կախված են իրավունքի որոշակի ճյուղի առանձնահատկություններից, դրա սկզբունքներից և հատուկ օրենսդրական դրույթներից: Օրինակ՝ քրեական դատավարությունում նման սահմանները որոշվում են օրենքի անալոգիայի տրամաբանական և իրավական բնույթից բխող խիստ չափանիշներով: Ընդ որում, այստեղ առավելությունը պատկանում է ոչ թե եզրակացության տրամաբանական պայմաններին, այլ քրեական դատավարության օրենսդրությանը և քննչական մարմինների, դատախազության և դատարանի իրավապահ մարմինների գործունեությանը բնորոշ հատուկ պահանջներին: Հետևաբար, ինչպես Հայաստանի Հանրապետության իրավունքի տարբեր ճյուղերում անալոգիայի օգտագործման բուն փաստի հետ կապված, բացերը լրացնելու սահմանները, ավելի ճիշտ՝ այն հանգամանքների շրջանակը, որոնցում հնարավոր է անալոգիա օգտագործել, տարբերվում են՝ կախված քննարկվող վիճահարույց հարաբերությունների բնույթից: Այս առումով ուշադրության են արժանի շատ հեղինակների կողմից մշակված օրենքի և իրավունքի կիրառման պայմանները անալոգիայի միջոցով: Հատկանշական է, որ իրավաբանների կողմից մշակված անալոգիայի կիրառման պայմանների տարբերակները առավել լայնորեն ներկայացված են քրեական դատավարության իրավունքի ճյուղի առնչությամբ: Այնուամենայնիվ, իրավաբանների շրջանում, այս պայմանների համակարգման և դասակարգման հարցում համաձայնություն չկա: Ա.Կ.Կաքը ուշադրություն է հրավիրում իրավահարաբերությունների այն մասի բովանդակությունը որոշելու անհրաժեշտության վրա, որը չի կարգավորվում իրավունքի նորմերով կամ կողմերի համաձայնությամբ:

Մ.Ս.Ստրոգովիչը, անալոգիայով, քրեական դատավարության օրենքի կիրառման հիմնական պայմանների շարքում նշում է՝ քրեական դատավարության օրենքում նախատեսված դեպքի միատարրությունն այն դեպքի հետ, որի նկատմամբ տվյալ օրենքը կիրառվում է անալոգիայով, անալոգիայի անթույլատրելիությունն այն դեպքում, երբ դա կարող է հանգեցնել դատավարության մասնակիցների դատավարական իրավունքների սահմա-

նափակմանը, օրենքի անալոգիայի օգտագործումը միայն այն դեպքում, երբ դատավարական գործողությունը նախատեսված է օրենքով: Վ.Ն.Կարտաշովը, որպես անալոգիայի իմաստիտուտի կիրառման ինքնուրույն պայման, կոչ է անում իրավական կարգավորման շրջանակը որոշելու անհրաժեշտությունը, ասինքն, որոշել այն հարցը, թե արդյո՞ք օրենքով չկարգավորված հարաբերությունները պետք է ներառվեն այս ոլորտում: Սակայն, այս վերջին պայմանը, դժվար թե հատուկ պարզաբանման կարիք ունենա, քանի որ ըստ էության, այն իրականացվում է դատարանի կողմից բացը լրացնելու իր իրավունքի օգտագործման յուրաքանչյուր դեպքում: Քրեական դատավարությունում անալոգիայի օգտագործման պայմանների բոլոր դիտարկված տարբերակները ցույց են տալիս, որ ամեն դեպքում, իրավապահ մարմինների գործողությունները, երբ հայտաբերվում է օրենքի բացը, ներառում է երեք փուլ՝ բացը հայտարարելը, իրավունքում նման իրավահարաբերությունները կարգավորող նորմի որոնումը, կողմերի իրավունքների և պարտականությունների որոշումը՝ ելնելով այդ համանման նորմից կամ (դրա բացակայության դեպքում)՝ օրենսդրության սկզբունքներից և իմաստից: Անալոգիայի օգտագործման հետագա քայլը հատուկ տրամաբանական և իրավական տեխնիկայի կիրառումն է, որը թույլ է տալիս իրականացնել վերը նշված գործողությունները: Է.Վ.Վասկովսկին, վերլուծելով նման տեխնիկան, նշել է, որ անալոգիայի միջոցով եզրակացության ճշգրտության համար անհրաժեշտ երկու պայմանների առկայությունը՝ դուք պետք է իմանաք, թե որ սեռին է պատկանում այն տեսակը, որի համար տրվում է նորմը, պետք է հաստատվի, որ այս նորմը որոշվում է այնպիսի նշաններով, որոնք բնորոշ են համեմատվող տեսակներին՝:

Վերոգրյալ դիտարկումների հաշվառմամբ կարող ենք նշել, որ ՀՀ-ում իրավունքի ներպետական տեսության մեջ երկար տարիներ գերակշռում էր այն տեսակետը, ըստ որի՝ դատարանները կարող էին իրականացնել միայն օրենքի պաշտոնական մեկնաբանություն՝ առանց նոր նորմեր ստեղծելու, քանի որ գործող օրենսդրությամբ օժտված չեն գործող օրենսդրությամբ նորմեր ստեղծող գործառնություն և իրենց բնույթով իրավապահ մարմիններն են, մինչդեռ իրավաստեղծ գործունեությունը մնում է օրենսդիր մարմինների իրավասությանը: Այնուամենայնիվ, վերջին տարիներին իրավական գրականության մեջ ավելի ու ավելի է խոսվում այն մասին, որ դատական նախադեպը, որպես իրավունքի աղբյուր, իրավունք ունի գոյություն ունենալ ՀՀ իրավական համակարգում: Ավելին, այս հարցը ծագում է հիմնական քաղաքացիական, վարչական և այլ գործերի որոշակի կատեգորիաների գործերի քննության առնչությամբ՝ իրավունքի բացերի առ-

կայության դեպքում: Շարադրված դիտարկումների հիման վրա կարող ենք նշել, որ նախ՝ դատական մարմինների կողմից օրինաստեղծ գործառնությունների ճանաչումը, կարծես կհանգեցնի դատական գործունեության մեջ անալոգիայի իմաստիտուտի օգտագործման որոշակի կարգի և կրճատման, քանի որ բարձրագույն դատական մարմինների որոշումներին պարտադիր ուժ տալը կբացառի նմանատիպ գործերով տարբեր որոշումներ կայացնելու հանրավորությունը, երկրորդ՝ դատարաններին օրինաստեղծ լիազորություններով օժտելը կընդլայնի դատարանների ազդեցության շրջանակը հասարակական հարաբերությունների վրա, կարելի է ենթադրել, որ այս դեպքում կարող են լրացվել իրավական կարգավորման ցանկացած բացեր, այդ թվում նրանք, որոնք մենք նշել ենք որպես որակյալ բացեր: Դժվար չէ ենթադրել, որ իրավաբանների տարբեր վերաբերմունքը դատական իրավունքի ստեղծման խնդրի նկատմամբ մեծապես պայմանավորված է մեր ժամանակի երկու հիմնական իրավական համակարգերից՝ մայրցամաքային և ընդհանուր իրավունքին բնորոշ իրավական ընթերցման տարբերությամբ: Այնուամենայնիվ, ներկայումս, ինչպես նշում են իրավաբանները, արդարադատության մերժումը կանխելու համար, օրենսդրական կարգավորման բացերը լրացնելու համար դատական օրենսդրությունը լայնորեն ճանաչված է մայրցամաքային իրավունքում, ինչը ցույց է տալիս իրավական համակարգերի էվոլյուցիայի ընդհանուր միտումները դեպի դրանց մերձեցումը: Հավանաբար, դատարանների կողմից օրինաստեղծ գործառնությունների ճանաչման դեպքում օրենսդրության բացերը լրացնելու սահմանների հարցն այլևս այդքան սուր չի լինի: Մինչդեռ, ներկայիս պայմաններում, թվում է, որ սահմաններ սահմանելու համար, որոնց շրջանակներում իրավապահ մարմինները կարող են լուծել բացերը լրացնելու հարցը, իրավական դոկտրինում պետք է մշակվեն որոշակի ուղեցիկներ: Թվում է, որ նման ուղեցիկներից մեկը կարող է լինել իրավակարգավորման հիմքերի անփոփոխությունը: Այսինքն՝ բացերը լրացնելու գործընթացում ստեղծված իրավական նախադեպերը չպետք է իրավական համակարգի նորմատիվ բովանդակություն մտցնեն նոր տարրեր, որոնք կարող են փոխել կարգավորման նորմատիվ հիմքերը:

Վերոգրյալը նշանակում է, որ բացը հաղթահարելու գործընթացում իրավակիրառ մարմինների կողմից ընդունված որոշումը պետք է ամբողջությամբ հանգի կոնկրետ իրավիճակի լուծմանը: Հենց բացը լրացնելու սահմանների այս ըմբռնումն է առավելագույնս համապատասխանում իրավական դոկտրինում իրավապահ մարմինների ամենատարածված մեկնաբանությանը, որը, ըստ Ս.Ս.Ալեքսևի սահմանման, ուժային անհատական

իրավական գործունեություն է, որն ուղղված է իրավական գործերի լուծմանը: Այս գործունեության արդյունքում իրավական համակարգի կառուցվածքում ընդգրկվում են տարրեր՝ անհատական կանոնակարգեր: Բայց այդ կանոնակարգերը, ինչպես նշվեց վերևում, կարող են ունենալ բացառապես անհատական ուղղվածություն և չպետք է փոխեն իրավական կարգավորման հիմքերը որպես ամբողջություն:

Ամփոփելով վերոշարադրյալ դիտարկումներն ու կատարված վերլուծությունները՝ կարող ենք նշել, որ իրավունքի բացերի վերաբերյալ տեսական գրականության մեջ առկա է էական տերմինաբանական շփոթություն՝ «վերացնել», «լրացնել», «հաղթահարել» հասկացությունների օգտագործման մեջ: Նշենք, որ այս վեճը զուտ տերմինաբանական է, քանի որ այն իրականացվում է հիմնականում տերմինների օգտագործման, այլ ոչ թե երևույթների էության վերաբերյալ: Այն որոշակի նշանակություն է ստանում միայն այն դեպքում, եթե լուծում է այն հարցը, թե ո՞րն է դատարանների կողմից բացերի լրացումը՝ իրավաստեղծ կամ իրավակիրառման տարր: Հետևաբար, կարծում ենք, որ «բացերը լրացնել» ասելով՝ նկատի է առնվում իրավասու պետական մարմնի (դատարանի) կողմից փճահարույց իրավահարաբերությունների վերաբերյալ հատուկ որոշման ընդունումը՝ օրենսդրության կամ իրավունքի բացը բացահայտելու պայմաններում: «Բացերի վերացում» հասկացությունը, որը ենթադրում է դրանց ամբողջական վերացում իրավունքի և օրենքի համակարգում, իրականացնում են իրավասու իրավաստեղծ մարմինները՝ օրենսդիր, գործադիր և այլն: Բացերի վերացումը կատարվում է լրացումների միջոցով, բացի լրացումը իրավաստեղծ մարմինների լիազորությունն է և իրենից ներկայացնում է չրավականացնող իրավունքի նորմի մշակում: Ինչ վերաբերում է «բացերի հաղթահարում» տերմինին, ապա մեր կարծիքով, այն ունի իր կիրառման ոլորտը՝ սա իրավասու պետական մարմինների գործունեությունն է, որոնք ստիպված են լինում հաճախ իրենց գործունեության ընթացքում լուծել այն հարցը, թե ինչպես պետք է վարվել իրավական կարգավորման բացերի հայտնաբերման դեպքում: Ներկայացվածի վերլուծության և հետազոտության արդյունքում կարող ենք հստակ արձանագրել, որ իրավունքի բացի լրացման լավագույն ձևը իրավաստեղծագործության միջոցով այն վերացնելն է: Մակայն իրավաստեղծագործության ճանապարհով բացի վերացումը շատ դանդաղաշարժ գործընթաց է, հետևաբար, քանի դեռ իրավունքի բացը չի վերացվել իրավաստեղծ մարմնի կողմից, իրավակիրառ գործունեության ընթացքում ժամանակավոր ծագում է դրա հաղթահարման անհրաժեշտությունը: Հենց այստեղ էլ առաջ է քաշվել իրավունքի բացի

հաղթահարման մեկ այլ եղանակ՝ անալոգիան: Անալոգիա (հունարեն՝ analogia) նշանակում է գործընթացի հատկանիշների վերագրումը նման մեկ այլ գործընթացի: Իրավունքի անալոգիան իրավունքի բացերի ժամանակավոր, եզակի հաղթահարման եղանակն է: Գոյություն ունի անալոգիայի երկու տեսակ՝ օրենքի անալոգիա և իրավունքի անալոգիա: Օրենքի անալոգիան կիրառվում է այն դեպքում, երբ չկա իրավունքի նորմ, որը կարագավորում է կոնկրետ կյանքի գործը, սակայն օրենսդրության մեջ կա մեկ այլ կանոն, որը կարագավորում է դրան նման հարաբերությունները: Իսկ իրավունքի անալոգիան կիրառվում է, երբ օրենսդրությունը չի պարունակում նմանատիպ գործը կարգավորող իրավունքի գերակայություն, և գործը լուծվում է իրավունքի ընդհանուր սկզբունքների հիման վրա: Ընդհանրացնելով ներկայացված ուսումնասիրությունները կարող ենք փաստել, որ իրավունքը դիմամիկ զարգացող երևույթ է, և ըստ էության հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ օրենսդիրն ընդունում է նոր իրավական ակտեր, որոնք ուղղված են փոփոխված հասարակական հարաբերությունների կարագավորմանը: Մակայն լինում են իրավիճակներ, երբ արդեն իսկ ձևավորված և առկա հասարակական հարաբերությունների պայմաններում բացակայում են այդ հարաբերությունները կարագավորող իրավական նորմերը, հետևաբար, նշված դեպքերի հաղթահարման համար օգնության է հասնում անալոգիան: Բացի այդ, հատկանշական է այն, որ իրավագիտության մեջ բացերը հաղթահարելու (վերացնելու) վերը թվարկված եղանակներից կա ևս մեկը. այն է՝ իրավունքի սուբսիդար կիրառումը: Իրավունքի սուբսիդար կիրառումը միասնականացնում է իրավական կարգավորումը, որովհետև կանխում է կարգավորման առարկայով և ձևավորման մեթոդով նման հարաբերությունները կարգավորող նորմերի կրկնությունը, այն բացառապես չի սահմանափակվում իրավական բացերի հաղթահարումով, քանի որ կարող է տեղի ունենալ նաև այն դեպքերում, երբ օրենսդրության մեջ նաև բացեր չկան:

- ¹ Տե՛ս, Протасов В. Н., Теория государства и права. Проблемы общей теории права и государства. М., 2001, С. 33.
- ² Տե՛ս, Общая теория государства и права. Акад. урс. Изд. 2-е. Отв. ред. М. Н. Марченко. Т. 3, М.: Изд. Зерцало, 2001, С. 407.
- ³ Տե՛ս, Ներսեսյանց Վ. Ս., Իրավունքի և պետության տեսություն, Եր., 2001, էջ 29:
- ⁴ Տե՛ս, Марченко М. Н., Источники права, М., 2005, С. 24:
- ⁵ Տե՛ս, Գանիելյան Գ., Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համանմանության) և իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները, Պետության և իրավունքի տեսություն, http://ysu.am/files/01G_Danielyan-1476101269-.pdf /մուտք՝ 30.01.2023թ./:
- ⁶ Տե՛ս, Лихачев В. Н., Установление пробелов в современном международном праве, К., 1989, С. 7:
- ⁷ Տե՛ս, Акимов В. И., Понятие пробела в праве. Правоведение, 1969, N 3, С. 110:
- ⁸ Տե՛ս, Лазарев В. В., Пробелы в праве и пути их устранения, М., Юрид. лит. 1974, С. 40:
- ⁹ Տե՛ս, Лазарев В. В., О видах пробелов в праве, Правоведение, 1969. N 6, С. 35:
- ¹⁰ Տե՛ս, Бачиашвили И. М., Зоидзе В.И., Капанадзе Т. Ш. и др., Актуальные проблемы советского права. Тбилиси, Мецниереба, 1988, С. 239:
- ¹¹ Տե՛ս, նույն տեղում:
- ¹² Տե՛ս, նույն տեղում:
- ¹³ Տե՛ս, Белкин А. А., Аналогия в государственном праве // Правоведение. 1992. N 6, С. 90:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում:
2. Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենք, ՀՀՊՏ 2018.03.28/23(1381):
3. Գանիելյան Գ., Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համանմանության) և իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները, Պետության և իրավունքի տեսություն, http://ysu.am/files/01G_Danielyan-1476101269-.pdf /մուտք՝ 30.01.2023թ./:
4. Ներսեսյանց Վ. Ս., Իրավունքի և պետության տեսություն, Եր., 2001:
5. Акимов В. И., Понятие пробела в праве. Правоведение, 1969, N 3.
6. Бачиашвили И. М., Зоидзе В. И., Капанадзе Т. Ш. и др., Актуальные проблемы советского права. Тбилиси, Мецниереба, 1988.
7. Белкин А. А., Аналогия в государственном праве // Правоведение. 1992. N 6.
8. Протасов В. Н., Теория государства и права. Проблемы общей теории права и государства. М., 2001.
9. Марченко М. Н., Общая теория государства и права. Акад. Курс. Изд. 2-е. Отв. ред. Т. 3, М.: Изд. Зерцало, 2001.
10. Марченко М. Н., Источники права, М., 2005.
11. Лихачев В. Н., Установление пробелов в современном международном праве, К., 1989.
12. Лазарев В. В., Пробелы в праве и пути их устранения, М., Юрид. лит. 1974.
13. Лазарев В. В., О видах пробелов в праве, Правоведение, 1969. N 6.

Армен Асатрян

Первый заместитель председателя Палаты адвокатов РА,
преподаватель кафедры теории государства и права и истории ЕГУ,
кандидат юридических наук, доцент

РЕЗЮМЕ

Правовые способы восполнения пробелов в правоприменительной деятельности и методы выявления пробелов

В рамках статьи рассмотрены и проанализированы вопросы правовых способов восполнения пробелов в праве при осуществлении правоприменительной деятельности. В результате изучения и анализа указанной проблемы можно констатировать, что противоречия, недостатки или неполнота правовых норм могут быть выявлены только в ходе правоприменительной деятельности, а для их завершения большое значение имеет правотворческая деятельность, а также разрешение того или иного правового спора в суде или, при необходимости, урегулирование конкретного правового вопроса другими компетентными органами. Поэтому суд будет последней инстанцией, имеющей полномочия подтвердить наличие пробелов. При возникновении такой ситуации суду необходимо разрешить дело по существу, то есть восполнить пробел. Таким образом, можно констатировать, что создание и преодоление пробелов следует рассматривать как два неразрывно связанных этапа профессиональной интеллектуальной деятельности сотрудника правоохранительных органов. Компетентный орган не может отказать в защите чьих-либо прав, он обязан решать конкретное дело по существу, то есть правоприменитель в соответствии с объективной необходимостью переходит от подтверждения пробела к его преодолению.

Ключевые слова: правоприменительная деятельность, пробел в праве, аналогия права, аналогия закона, преодоление пробелов, восполнение пробелов.

Armen Asatryan

First Deputy Chairman of The Chamber of Advocates of RA,
Lecturer of the YSU Chair of History and Theory of State and Law,
Candidate of Law, Associate Professor

SUMMARY

Legal ways to fill gaps in law - enforcement activities and methods for identifying gaps

In the article, the issues of legal ways of filling the gaps in the law during law-enforcement activities where discussed and analyzed. As a result of the study and analysis of the mentioned problem, we can state that the contradictions, defects or incompleteness of legal norms can be detected only in the course of law-enforcement activities, and for their completion, the law-making activity is of great importance, as well as the specific resolution of this or that legal dispute in the court or, if necessary, settling it. the legal issue by other competent authorities. Therefore, the court will be the last instance that has the authority to confirm the existence of gaps. In the event of such a situation, the court needs to resolve the case on its merits, that is, to fill the gap. Therefore, we can record that the creation and overcoming of gaps should be considered as two inextricably linked stages of the professional intellectual activity of a law enforcement officer. The competent body cannot refuse to protect someone's rights, it is obliged to solve the specific case essentially, that is, the law enforcement officer, according to the objective necessity, proceeds from confirming the gap to overcoming it.

Key words: law - enforcement activity, law gap, law analogy, overcoming gaps, filling gaps.

Բնագիրը ներկայացվել է 14.02.2023թ.

Ընդունվել է տպագրության 17.04.2023թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ծատուրյանը

ՈՌԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կրթության և գիտելիքի վարչություն, Բարձրագույն
կրթության քաղաքականության բաժնի ղեկավար,
Աբու Դաբի, Արաբական Միացյալ Էմիրություններ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ԲՈՒՀԵՐԻ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԵՐԻ
ԴԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Բարձրագույն կրթությունը պետության սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովող հիմնարար գործոններից է: Բարձրագույն ուսումնական հաստատությունները հանդես են գալիս որպես գիտելիքների պահպանման ու փոխանցման, նոր գիտելիքների ստեղծման և տարածման հիմնարար կենտրոններ, որոնք մարդկային կապիտալի ձևավորմամբ նպաստում են պետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը: Հետևապես, բարձրագույն ուսումնական հաստատությունների առաջնահերթ խնդիրներից է դառնում կրթության որակի շարունակական բարելավումը (Donlagić et. al 2015: 39): Որակի շարունակական բարելավումը բուհերի գործունեության բոլոր առանցքային ոլորտներին սերտորեն փոխկապակցված գործընթացների համալիր է, որի նպատակն է ամրապնդել բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավման մշակույթը և այդպիսով խթանել բարձրագույն կրթության մրցունակությունը:

Գիտելիքահենք տնտեսությունում կրթության որակի կառավարման դերն ու նշանակությունը շարունակաբար ավելի է կարևորվում բուհի մրցունակության ապահովման տեսանկյունից: Գիտելիքահենք տնտեսությունը սոցիալ-տնտեսական, կրթագիտական, տեխնոլոգիական նոր մարտահրավերներ է առաջադրում գլոբալ մրցակցային միջավայրում գործող բուհերին: Բուհերը փորձում են այդ մարտահրավերներին ընդառաջ գնալով՝ բարելավել իրենց գործունեության արդյունքները և ավելի արդյունավետ և շահակիցներին միտված դարձնել իրենց գործունեությունը՝ առաջնահերթորեն կարևորելով կրթության որակի բարելավումը (Sahney et al 2008): Բուհերում իրականացվող կրթական և հետազոտական գործունեության որակը վճռորոշ նշանակություն ունի աշխատանքային ու կրթական ծառայությունների շուկայում բուհերի մրցունակության ապահովման գործում: Բուհերի մրցունակությունը վճռորոշ գործոն է նաև դրանց հեղինակության բարձրացման, դիրքի ամրապնդման և երկարաժամկետ զարգացման տեսանկյունից:

Սույն հոդվածում քննարկվում են բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի հասկացութային շրջանակը, որակի ներքին ապահովման համակարգերի և դրանց փոխկապակցված բարձրագույն կրթության մրցունակության առանձնահատկություններն ու այդ մրցունակության գնահատման ցուցանիշները: Հոդվածի շրջանակներում ուսումնասիրված որակի կառավարման համակարգերի ընդհանրությունների ու արդյունավետությունը պայմանավորող գործոնների ուսումնասիրությունը թույլ է տալիս հիմնավորել այս հայեցակարգի կիրառելիության նպատակահարմարությունը բուհերի ռազմավարական կառավարման շրջանակներում:

Հիմնաբառեր - գիտելիքահենք տնտեսություն, բարձրագույն կրթության մրցունակություն, բուհի մրցունակություն, բարձրագույն կրթության որակ, որակի ներքին ապահովման համակարգ:

Սույն հոդվածի արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխություններով, ազգային մակարդակում բուհերի թվաքանակի աճով և զարգացմամբ, ՀՀ-ի՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին (այսուհետ՝ ԵԲԿՏ) ինտեգրմամբ: Կրթության որակի բարձրացման հիմնախնդիրները յուրաքանչյուր պետության պետական քաղաքականության կարևորագույն բաղկացուցիչներից են, ինչպես նաև կրթության բնագավառում միջազգային կառույցների (ՅՈՒՆԵՍԿՕ, ՄԱԿ, ԵՄ) հիմնական կողմնորոշիչներից են: Բոլորնիայի գործընթացի համատեքստում ԵԲԿՏ-ի ձևավորմանն ուղղված գործընթացներում բարձրագույն կրթության որակի

ապահովման հիմնախնդիրներն առանցքային տեղ են զբաղեցնում, և դրանցից ոչ բոլորն են դեռևս լիարժեք լուծված համարվում: Ուստի, ոլորտային հետազոտությունների իրականացումն անհրաժեշտ հիմք է ստեղծում այդ խնդիրների թիրախային և այլընտրանքային լուծումների մշակման և իրականացման համար:

Գիտատեսական հիմքերի ապահովմամբ արժարժվող հիմնախնդիրները պրոյեկտվում են նաև ՀՀ բուհերի գործունեության համատեքստում, և համակարգված ու միաժամանակ բազմակողմանի մոտեցմամբ վերլուծության են ենթարկվում որակի կառավարման մի շարք միջազգային մոդելներ: Մասնավորապես՝ ոլորտային խնդիրների վերահսման և վերլուծության նպատակով ուսումնասիրվել

են մի շարք մասնագիտական գրականության աղբյուրներ, որակի կառավարման ոլորտում ՀՀ 20 պետական բուհերի փորձառությունն ու ռազմավարությունները, որակի կառավարման քաղաքականությունն արտացոլող մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ հաշվետվություններ, ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծություններ ու փորձագիտական զեկույցներ: Սույն հետազոտությունը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այս հոդվածում արտահայտված է հեղինակի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Բուհի մրցունակությունը սահմանվում է որպես տվյալ հաստատության կազմակերպական ներունակության և կարողությունների այն մակարդակը, որը ներառում է փոխկապակցված մի շարք գործոններ: Վերջիններիս շարքում հարկավոր է առանձնահատուկ կերպով շեշտադրել՝ բուհի ակադեմիական հեղինակությունը, կրթության որակը, գիտահետազոտական արդյունքները և ձեռքբերումները, մրցակցային նորարարություններն ու պատենտները, մարդկային (այդ թվում՝ կազմակերպական գիտելիք՝ աշխատակազմի գիտելիքները և հմտությունները), ֆինանսական և նյութատեխնիկական ռեսուրսները, ուսումնառողներին ու պրոֆեսորադասախոսական (ՊԴ) կազմին տրամադրվող աջակցության ծառայությունները, ռազմավարական ու գործառնական կառավարման համակարգերը, առանցքային շահակիցների հետ հաղորդակցության և հետադարձ կապի ապահովումը: Մրցունակությունը բնորոշվում է որպես տվյալ հաստատության՝ մրցակցությունը հաղթահարելու կարողունակությունը: Լինել մրցունակ նշանակում է ներքին և արտաքին շուկաներում ու հատույթներում գրավել գերիշխող դիրք՝ վերլուծելով սեփական առավելություններն ու կիրառելով համապատասխան մրցունակ մեթոդներ ու տեխնոլոգիաներ՝ սահմանված նպատակներին հասնելու համար (Kireeva et al. 2018:16):

Որակի ներքին ապահովման համակարգերը նախատեսված են երաշխավորելու, որ բուհերը արդյունավետորեն իրականացնում են իրենց կանոնադրական գործառնություններն ու ռազմավարական նպատակները, ինչպես նաև բարձրորակ կրթություն և այլ կրթական ծառայություններ են տրամադրում իրենց ուսումնառողներին և հասարակությանը: Որակի ներքին ապահովման համակարգերը կարող են խթանել բարձրագույն կրթության մրցունակությունը որակի շարունակական բարելավման մշակույթի ամրապնդման միջոցով: Պարբերաբար գնահատելով և մշտադիտարկելով իրենց կրթական ծրագրերի, հետազոտությունների և այլ ծառայությունների որակը՝ բուհերը կարող են

կանխատեսել ռիսկերը, բացահայտել բարելավման ենթակա ոլորտները և փոփոխություններ իրականացնել: Սա կարող է նպաստել առանցքային շահակիցների գոհունակության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև բուհի դրական համբավի ձևավորմանն ու ամրապնդմանը: Որակի ներքին ապահովման համակարգերի կարևորագույն գործառնություններից է նաև ազգային չափանիշներին և միջազգային լավագույն փորձին բուհերի գործունեության համապատասխանության ապահովումը, որի շնորհիվ բուհերը կարող են առանձնանալ որակյալ կրթություն տրամադրելու իրենց հանձնառությամբ ու ակադեմիական գերազանցությունը խթանելու հեղինակությամբ:

Որակի ներքին ապահովման համակարգերը նաև առանցքային դեր են խաղում բուհերում թափանցիկության և հաշվետվողականության խթանման գործում: Պարբերաբար հաշվետու լինելով իրենց կրթական ծառայությունների որակի և դրանց գնահատման արդյունքների վերաբերյալ՝ բուհերը կարող են ներկայացնել թափանցիկության և հաշվետվողականության նկատմամբ իրենց քաղաքականություններն ու բուհի մրցունակությունը փաստող տեղեկություն տրամադրել առանցքային շահակիցներին, ներառյալ՝ ֆինանսավորող գործակալություններին և հավատարմագրող մարմիններին, ինչպես նաև ընդլայնել համագործակցության շրջանակը՝ ընդգրկելով նոր գործընկերներ: Բարձրագույն կրթության որակ հասկացության նկատմամբ հետաքրքրությունն առավել մեծացել է վերջին երեք տասնամյակների ընթացքում: Թեև որակ հասկացության հստակ սահմանումն ու բնորոշումը, որակի ապահովումը և բարելավումը հաճախ կարող են բարդ ու խնդրահարույց լինել, նշված հասկացությունների վերաբերյալ լայն հետաքրքրությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից կարելի է հատկապես առանձնացնել բուհերի մատուցած կրթության որակի մասին ճշգրիտ ու արժանահավատ տեղեկություն և տվյալներ ստանալու պահանջը: Ընդ որում, այդ պահանջը մի կողմից առաջադրվում է կառավարության և այլ պատկան մարմինների կողմից՝ կրթության պետական քաղաքականության մշակման և ֆինանսավորման համար անհրաժեշտ հիմքեր ապահովելու նպատակով, մյուս կողմից թույլ է տալիս դիմորդներին և ուսումնառողներին ընտրություն կատարել տարբեր բուհերի միջև, իսկ բուհերի տեսանկյունից՝ մշտադիտարկել ու շարունակաբար բարելավել մատուցվող կրթական ծրագրերն ու ծառայությունները, գործունեության առանցքային ոլորտներում կատարողականի արդյունքները: Ընդհանուր առմամբ, բարձրագույն կրթության որակի ապահովման պահանջը բխում է բարձրագույն կրթության առանցքային շահակիցների, կրթական և աշխատանքային շուկաների կարիքներ-

րից ու պահանջներից:

Բարձրագույն կրթության որակը, թեև լայն քննարկման ալիք է ստեղծել ակադեմիական շրջանակներում, սակայն այն չունի համընդհանուր սահմանում: Բարձրագույն կրթության համատեքստում որակ հասկացությունը տարբեր տեսաբանների կողմից ստացել է տարատեսակ բնորոշումներ: Բրոքերհոֆին ու նրա համախոհները (Brockerhoff, Huisman, and Laufer 2015) կարծում են, որ հստակ չէ, թե ինչպես է որակ հասկացությունը մեկնաբանվում բարձրագույն կրթության համատեքստում: Այն սահմանվում է որպես բազմաչափ եզրույթ (Krause 2012), որը միևնույն ժամանակ ունի դինամիկ և ենթատեքստային բնույթ, սակայն կարող է նաև ընկալվել տարբեր կերպ տարբեր շահակիցների կողմից (Schindler et al. 2015): Կրթության որակը ձևավորվում է այնպիսի բաղադրիչներից, ինչպիսիք են՝ բուհի ռազմավարությունը և դրա իրականացման գնահատման արդյունքները, կրթական ծրագրերի, կադրային և գիտական ներուժի որակը, որոնք ազդում են կրթական գործընթացների, ուսումնառողների, կրթական միջավայրի ու ռեսուրսների, կրթական ու նորարարական տեխնոլոգիաների և կրթության որակն ապահովող այլ առանցքային տարրերի վրա:

Բարձրագույն կրթության որակը սահմանվում է որպես բուհի կրթագիտական գործունեության համապատասխանություն պետական չափորոշիչներին, հասարակության ու պետության սոցիալ-տնտեսական պահանջներին և մշակութային պահանջմունքներին: Բարձրագույն կրթության որակի կառավարումը բուհի գործունեության արդյունավետության և ճանաչելիության տեսանկյունից ունի առանցքային նշանակություն: Բարձրագույն կրթության որակի կառավարումը բնութագրվում է որպես պետության կրթության կառավարման մարմինների և կրթության գործընթացում ներգրավված սուբյեկտների միջև համագործակցության համակարգ, որը երաշխավորում է տվյալ պետության կրթական համակարգի արդյունավետ գործառնությունն ու ինտեգրումը համաշխարհային կամ տարածաշրջանային կրթության տարածքներին՝ զուգահեռաբար ապահովելով սովորողների և շրջանավարտների մասնագիտական որակներն ու կարողությունները, աշխատաշուկայի կարիքներին համապատասխան մարդկային կապիտալը և դրա արդյունավետ կիրառման հնարավորությունները, ինչպես նաև բարձրագույն կրթության առանցքային դերակատարների ու շահակիցների վստահությունն ուսումնական գործընթացի և ուսումնառության վերջնարդյունքների նկատմամբ:

Յուրաքանչյուր ուսումնական հաստատություն զարգացող համակարգ է, և որակի կառավարման տեսանկյունից այն պետք է դիտարկվի իր եզակիության և ամբողջականության մեջ: Կրթու-

թյան որակի ապահովումը բուհի կամ կրթական ծրագրի որակի գնահատման, վերահսկման, պահպանման և բարելավման շարունակական գործընթաց է: Իսկ որակի կառավարումը բուհի կամ կրթական ծրագրի մակարդակում կանոնավոր իրականացվող կառավարչական գործընթացների ու միջոցառումների համակցություն է: Բարձրագույն կրթության որակի գնահատումն ու բարելավումն այն գործընթացներն են, որոնք էապես ազդում են բուհի մրցունակության և ազգային ու միջազգային մակարդակներում բուհի հեղինակության բարձրացման վրա: Բարձրագույն կրթության որակի կառավարումը դիտարկվում է որպես նպատակաուղղված, ամբողջական, համակարգված ներազդեցություն կրթական գործընթացի ընթացքի և դրա արդյունքների վրա՝ ուղղված բուհի վերջնարդյունքների և սահմանված չափանիշների ու չափորոշիչների միջև առավելագույն համապատասխանության ապահովմանը: Կրթության որակի կառավարումը մեթոդների և գործունեության տեսակների բազմամակարդակ համակարգ է, որն ապահովում է կրթության որակի հայտորոշման ու անհրաժեշտ փոփոխությունների իրականացումը: Որակի կառավարման համար հիմք են հանդիսանում արտաքին շահակիցների մշտադիտարկման արդյունքները և շրջանավարտների մասնագիտական որակների և հասարակության ու պետության կարիքների միջև համապատասխանության վերլուծությունը: Այսպիսով, մասնագիտական քննարկումների լայն շրջանակում դիտարկելով կրթության որակի կառավարման հասկացությունը՝ այն կարելի է սահմանել որպես պետության, կրթության կառավարման մարմինների, կրթության գործընթացի սուբյեկտների միջև կայուն համագործակցության համակարգ, որն ապահովում է տվյալ պետության կրթության համակարգի արդյունավետ գործառնությունն ու զարգացումը, հետևաբար նաև ուսումնառողների և շրջանավարտների մասնագիտական կոմպետենտությունն ու մրցունակությունը:

Ներկայումս ազգային և միջազգային մակարդակներում կրթության որակի կառավարման տարաբնույթ հայեցակետեր են ուսումնասիրվում: Չնայած կրթության որակի տարաբնույթ մեկնաբանություններին՝ սահմանումներում առկա են ընդհանրություններ, որոնք ամբողջացնելով՝ կրթության որակի ապահովումը պետք է դիտարկել որպես.

- համապատասխանություն պետական չափանիշներին, չափորոշիչներին և առաջնահերթություններին,
- բուհի կանոնադրական նպատակների և կրթական ծառայությունների միջև համապատասխանություն,
- կրթության սպառողների կամ առանցքային ներքին (ուսումնառողներ, ժող. կազմ) և արտաքին

(դիմորդներ, շրջանավարտներ, գործատուներ և այլն) շահակիցների գոհունակությունը:

Հարկ է նշել, որ գիտելիքահենք տնտեսության զարգացման և միջազգային զարգացման համատեքստում մրցունակ կրթության համակարգ համակարգ ու բուհեր ունենալու համար առաջնահերթ են համարվում հետևյալ երկու գործոնները՝ կրթության որակի կառավարման մրցունակ համակարգն ու գերազանցությունը խթանող կրթության որակի մշակույթը: Ստորև ներկայացված են այն հիմնական հատկանիշները, որոնք մրցունակ բուհ համարվելու կարևորագույն նախապայմաններից են (Altbach 2003). լավագույն ՊԴ կազմի ներգրավումն ու աշխատանքային լավագույն պայմանների ապահովումը, հետազոտություններում գերազանցության ապահովումը, ակադեմիական ազատությունն ու մտավոր գործունեության գրավչությունը, բուհի հիմնախնդիրների կարգավորման գործընթացում ակադեմիական հանրության ներգրավվածությունն ապահովող կառավարման գործուն համակարգը, կրթության, հետազոտության և գիտության ոլորտների համակցումը, ինչպես նաև բուհի մնացյալ գործառույթները ֆինանսավորելու բավարար միջոցները, ուսումնառողների և շրջանավարտների զբաղվածության բարձր մակարդակը:

Յուրաքանչյուր բուհի գործունեության արդյունավետության բարձրացման կարևորագույն պայմաններից է մատուցվող կրթական ծառայությունների մրցունակության բարձրացումը: Հետևապես կարևոր է նաև մրցունակություն հասկացության մեկնաբանությունը: Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը փաստում է, որ բուհի մրցունակություն հասկացության մեկնաբանման վերաբերյալ բացակայում է համընդհանուր մոտեցումը: Ըստ Ռոմանովայի (Романова 2005: 61)՝ բարձրագույն ուսումնական հաստատության մրցունակությունը սահմանվում է որպես բուհի առաջընթացն ապահովող կարևորագույն գործոն, որի միջոցով որոշվում է վերջինիս դերը կրթական ծառայությունների շուկայում և նմանատիպ ծառայություններ մատուցող այլ հաստատությունների շրջանակում: Անկախ այն հանգամանքից, թե մրցունակությունը որ օբյեկտի բնութագրման համար է կիրառվում, այն օգտագործվում է որպես այդ օբյեկտի՝ մրցակցությանը դիմակայելու ներուժ և/կամ իրական ունակությունների ամբողջություն: Մրցունակությունը տվյալ արտադրանքի և/կամ ծառայության ունակությունն է դիմակայելու մրցակցությանը շուկայում նմանօրինակ այլ արտադրանքների և/կամ ծառայությունների հետ համեմատության պայմաններում (Зайцева 2018: 13):

Մրցունակությունը բուհի կրթական գործունեության առաջատար ցուցանիշներից է, որը վճռորոշ է բուհի ներկա և հեռանկարային վիճակը գնա-

հատելու և շուկայի թիրախավորված հատվածներում առաջատարի դերն ու դիրքը պահպանելու գործում: Բարձրագույն ուսումնական հաստատության մրցունակությունը վերջինիս ներունակությունն է.

- պատրաստելու այնպիսի մասնագետներ, որոնք մրցունակ են իրենց մասնագիտական գիտելիքներով, հմտություններով ու ֆունկցիոնալ գրագիտությամբ և մի շարք այլ մրցակցային առավելություններով կարող են մասնագիտական գործունեություն ծավալել ներքին և արտաքին աշխատաշուկաներում.

- հանդես գալու տվյալ ոլորտում մրցակցային նորարարությունների մշակմամբ և առաջադրմամբ.

- վարելու արդյունավետ քաղաքականություն գործունեության տվյալ ոլորտում:

Բարձրագույն կրթության մրցունակության որոշ բաղադրիչներ էապես նպաստում են բուհերի հաջողության ապահովմանը: Դրանցից են.

- *ակադեմիական համբավը*, որը վերաբերում է ակադեմիական հանրության ներկայացուցիչների, գործատուների, ուսումնառողների և բուհերի այլ առանցքային շահակիցների շրջանում տվյալ ուսումնական հաստատության ընկալմանը և բարի համբավի պահպանմանը.

- *հետազոտական արդյունքները*, որոնք ներառում են բուհի գիտահետազոտական արդյունքների, արտոնագրերի, գիտության ֆինանսավորման որակն ու ծավալը, ներառյալ գիտական հետազոտությունների քանակը, որակը և ազդեցությունը՝ ազդեցության բարձր գործակից ունեցող պարբերականներում կամ ամսագրերում հրապարակումները, հրապարակումների մեջբերումների ինդեքսը, գիտական դրամաշնորհները և մրցանակները.

- *դասավանդման որակը*, որը ներառում է ՊԴ կազմի որակավորումները, ուսումնառողներին տրամադրվող կրթական ծառայությունների ու աջակցության մակարդակը, կրթական ծրագրերի արդիականությունն ու արդյունավետությունն ապահովող մասնագիտական մեթոդներն ու մոտեցումները.

- *հասարակական պատասխանատվությունը և առաջնորդությունը*, որը ներառում է մասնագիտական ներդրումներն ակադեմիական համայնքում և դրա զարգացմանը միտված նախաձեռնություններում, օրինակ՝ հանձնաժողովներում, խմբագրական խորհուրդներում կամ մասնագիտական կազմակերպություններում գործունեությունը, ուսումնառողներին և գործընկերներին մենթորության տրամադրումն ու կրթագիտական գործունեության իրականացումը.

- *կրթական միջավայրի առկա բաղադրիչները*. ֆինանսական ռեսուրսները, ինստիտուցիոնալ

ռեսուրսները տեխնոլոգիաները և ենթակառուցվածքները.

- **ուսումնառողներին և պրոֆեսորադասախոսական կազմին տրամադրվող աջակցության մակարդակը և որակը**, ներառյալ կարիերայի ուղղորդումը, խորհրդատվությունը, մենթորությունը և մասնագիտական զարգացումը.

- **լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու բուհի ներուժակությունը**, որը ենթադրում է ֆոնդիայթախթման ջանքերը, անձեռնմխելի ֆոնդերը, հետազոտական դրամաշնորհները, արդյունաբերության ոլորտի հետ համագործակցությունն ու արտաքին ֆինանսավորման այլ ձևերը:

Բուհի մրցունակությունը պետք է դիտարկել որպես տվյալ ժամանակահատվածում հաստատության համընդհանուր բնութագիր, որը ենթադրում է հետևյալ հինգ փոխկապակցված բաղադրիչների՝ կադրային, ֆինանսատնտեսական, մարքեթինգային, նյութատեխնիկական, սոցիալ-քաղաքական ցուցանիշների ամբողջություն և դրանց ապահովման բավարար մակարդակ: Մրցունակությունը ենթադրում է նաև այն, որ բուհը կարողանում է արագորեն հարմարվել և արձագանքել արտաքին միջավայրի գործոններին և խուսափել ներքին ճգնաժամներից:

Պետական մակարդակում բարձրագույն կրթության մրցունակության գնահատումը բարդ խնդիր է, որը ներառում է մի քանի փոխկապակցված գործոն: Այդ մրցունակությունը գնահատելու միասնական մեթոդաբանություն կիրառելը դժվար է, սակայն մի քանի չափումներ և ցուցանիշներ կարող են օգտագործվել պետության բարձրագույն կրթության համակարգի ընդհանուր մրցունակությունը գնահատելու համար: Մասնավորապես ակադեմիական հեղինակությունը գնահատելու տարբեր գործիքներ կան, որոնցից են.

- **համաշխարհային բուհերի վարկանիշները**. այս վարկանիշները ամեն տարի հրապարակվում են տարբեր կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են QS World University Rankings, Times Higher Education World University Rankings և Academic Ranking of World Universities (ARWU) գլոբալ վարկանշային ցանցերը: Վերջիններիս ցանկում բուհերի ընդգրկման ժամանակ հաշվի են առնվում տարբեր գործոններ, ինչպիսիք են հետազոտության արդյունքները, ՊԴ կազմի որակը, ինստիտուցիոնալ ռեսուրսները և հեղինակությունը.

- **հետազոտության արդյունքների մեջբերումները**. մեջբերումները հետազոտության արդյունքների ազդեցության և որակի չափման միավորներ են: Բուհերը, որոնք աչքի են ընկնում բարձրակարգ և բարձր ազդեցության գործակից ունեցող ամսագրերում մեջբերումների մեծ քանակությամբ, համարվում են բարձր վարկանիշ ունեցող ուսումնական հաստատություններ.

- **փոխգնահատման հարցումները**. այս հարցումներն անցկացվում են այնպիսի կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են US News & World Report-ը և QS World University Rankings-ը: Դրանք ներառում են ակադեմիական հանրության ներկայացուցիչների և փորձագետների շրջանում անցկացված հարցումների արդյունքները, որոնք հիմնված են հետազոտության և դասավանդման ոլորտներում բուհերի հեղինակության վրա.

- **գործատուների հարցումները**. այս հարցումների շրջանակում գործատուները գնահատում են բուհերին՝ հիմնվելով շրջանավարտների որակի և նրանց հետ աշխատելու իրենց փորձի վրա, ինչպես նաև գնահատելով կրթական ծրագրերի արդիականությունը, դրանց համապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին, այդ ծրագրերի հեռանկարները կադրային պահանջարկի տեսանկյունից: Գործատուների ներգրավվածությունը կարող է օգտագործվել որպես բուհի գործունեության, այդ թվում՝ հետազոտության և դասավանդման արդյունքների նկատմամբ հետաքրքրության և ներգրավվածության մակարդակի ցուցանիշ.

- **ուսումնառողների գոհունակության վերաբերյալ հարցումները**. այս հարցումների շրջանակում ուսումնառողները գնահատում են իրենց բուհը՝ հաշվի առնելով կրթական ծրագրերի (նրա առանձին դասընթացների) բովանդակությունից, դասավանդման որակից, ռեսուրսներից և օժանդակ ծառայություններից իրենց բավարարվածության (գոհունակության) մակարդակը.

- **միջազգայնացման չափումները**. սա ենթադրում է բուհի միջազգային գործընկերության մակարդակի, միջազգային ուսումնառողների թվաքանակի և միջազգային հետազոտական համագործակցության մակարդակի վերլուծությունը:

Բուհերի մրցունակությունը գնահատվում է ոչ միայն կրթական ծառայությունները սպառողների (ուսումնառողներ, ծնողներ, շրջանավարտներ, գործատուներ), այլև այն արտադրողների (պրոֆեսորադասախոսական և վարչական կազմ) կողմից: Գործնականում բուհերի մրցունակությունը գնահատվում է հետևյալ հիմնական չափանիշներով, որոնց համառոտ բնութագրերը ներկայացված են ստորև.

- **մասնագետների պատրաստման գործընթացի վրա ազդող պայմանների որակ**. այն ենթադրում է աշխատակազմի և հատկապես ՊԴ կազմի մասնագիտական և մանկավարժական պատրաստվածությունն ու դրա ազդեցությունը կրթության որակի վրա, բուհի տեղեկատվական, գիտամեթոդական, նորմատիվ-իրավական և նյութատեխնիկական հագեցվածությունը, կրթական և կառավարչական գործընթացներն ապահովող ակադեմիական միջավայրի այլ առանցքային ցուցանիշներ.

• **պետական կրթական չափորոշիչների ապահովման որակը.** պետական կրթական չափորոշիչը նորմատիվ է, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները: Այս համատեքստում պետական կրթական չափորոշիչները կրթության որակի գնահատման հիմքն են և կրթության որակի կառավարման գործիք: Ուսումնական գործընթացներում պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ապահովման արդյունավետության գնահատման եղանակներից են՝ կրթական ծրագրերի վերլուծությունը, տվյալ ոլորտի մասնագետներից կազմված անկախ փորձագիտական խմբերի կողմից կրթության բովանդակության գնահատումն ու դրա նկատմամբ վերահսկողությունը:

• **աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագետների պատրաստման որակը** այս ոլորտում գնահատումը կարող է իրականացվել հաշվի առնելով բուհի շրջանավարտների որակավորման մակարդակը: Որակավորումն ամփոփիչ ատեստավորման արդյունքում մասնագիտական որակավորման բնութագրին անձի համապատասխանությունը հավաստող կարգավիճակ է, որը շնորհվում է համապատասխան փաստաթղթով: Որակավորման գնահատումը հնարավոր է իրականացնել հատուկ մասնագիտական քննությունների ընթացքում, որի պահանջները որոշվում են մասնագիտական գործունեության առանձնահատկություններով և գործնական աշխատանքին անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների տիրապետման մակարդակով: Առավել հստակ գնահատական կարելի է ստանալ գործունեության արդյունավետության առանցքային ցուցանիշների միջոցով:

Անդրադառնալով բուհի մրցունակության հիմնահարցերին՝ պետք է նշել, որ մրցունակությունը ձևավորող հատկանիշներից է մատուցվող ծառայությունների գրավչությունը: Դա ծառայությունների հատկանիշների ամբողջությունն է՝ գրավելու սպառողների ուշադրությունը և դրական վերաբերմունք ձևավորելու այդ ծառայությունների նկատմամբ: Ըստ այդմ, ծառայության գրավչությունը կարելի է ներկայացնել սպառողների կողմից ներկայացվող գնի և ծառայության իրական գնի հարաբերակցությամբ.

$$Գ_գ = \frac{\text{Պ}_գ}{\text{Ծ}_գ}$$

որտեղ՝

Գ_գ - ծառայության գրավչության գործակից

Ժ_գ - սպառողների կողմից ներկայացվող գին (պահանջարկի գին)

Ծ_գ - ծառայության իրական գին

Այլ կերպ ասած՝ ծառայության գրավչությունը

ներկայացնում է տվյալ ծառայության որակը վճարված գումարի դիմաց: Որքան բարձր է այդ ծառայության որակը, և ցածր է գինը, այնքան այն ավելի գրավիչ է սպառողների համար: Մատուցվող կրթական ծառայությունների մրցունակությունն ու սպառողների բավարարվածությունը փոխկապակցված ցուցանիշներ են: Պետք է նշել, որ ծառայությունների մրցունակությունը սպառողների համար տվյալ հաստատության կողմից մատուցվող ծառայությունների բարձր գրավչությունն է նմանատիպ ծառայություններ մատուցող այլ հաստատությունների հետ համեմատության պայմաններում:

Պարբերաբար վերանայելով և արդիականացնելով որակի ապահովման ներքին համակարգերը՝ բուհերը կարող են ամրապնդել իրենց մրցունակ դիրքերն ու շարունակել բարձրորակ կրթություն տրամադրել ուսումնառողներին: Բուհի որակի ներքին ապահովման համակարգերի մրցունակությունը գնահատելու հատուկ միասնական բանաձև չկա, քանի որ գնահատման գործընթացը կարող է տարբեր լինել՝ կախված գնահատման համատեքստից և նպատակներից: Այնուամենայնիվ, առկա են որոշ ընդհանուր բաղադրիչներ, որոնք կարելի է հաշվի առնել՝ բուհի որակի ներքին ապահովման համակարգերի արդյունավետությունն ու մրցունակությունը գնահատելիս: Դրանք են.

• **նպատակներ և խնդիրներ.** բուհի որակի ներքին ապահովման համակարգի նպատակների և խնդիրների սահմանում: Սա ներառում է բուհի առաքելության, տեսլականի և արժեքների, ինչպես նաև որակի ապահովման հատուկ նպատակների և խնդիրների ընկալումը.

• **որակի չափանիշներ և ցուցանիշներ.** որակի չափանիշների և ցուցանիշների սահմանում: Սա կարող է ներառել այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են առանցքային շահակիցների գոհունակությունը մատուցվող կրթական ծառայություններից, կրթական վերջնարդյունքները, հետազոտության արդյունքները և հավատարմագրման կարգավիճակը.

• **գնահատման մեթոդներ.** գնահատման համապատասխան մեթոդաբանության մշակումն ու մեթոդների որոշում: Սա կարող է ներառել հարցումներ, հարցազրույցներ, ֆոկուս խմբեր, տվյալների վերլուծություն և այլ բուհերի հետ համեմատական վերլուծություններ (բենչմարքինգ).

• **շարունակական բարելավում.** որակի ներքին ապահովման մրցունակ համակարգի հիմնական բաղադրիչը շարունակական բարելավման վրա կենտրոնացումն է: Սա ենթադրում է համակարգի կանոնավոր վերանայում, արդիականացում և բարելավում՝ երաշխավորելու, որ այն արդյունավետ է և համապատասխան բուհի առաքելությանը, ռազմավարական նպատակներին և խնդիրներին.

• *շահակիցների ներգրավվածություն*. բուհի որակի ներքին ապահովման համակարգի մրցունակության գնահատման մեկ այլ կարևոր բաղադրիչ է հաղորդակցումը և հետադարձ կապը շահակիցների հետ: Շահակիցների հետադարձ կապը կարող է հստակ պատկերացումներ տալ համակարգի արդյունավետության մակարդակի և բարելավման ենթակա ոլորտների վերաբերյալ: Այդ նպատակով՝ բուհը պետք է ապահովի իր առանցքային շահակիցների ներգրավվածությունը կրթական և կառավարչական գործունեության վերանայման, գնահատման ու բարելավման գործընթացներում (այդ թվում՝ որոշումների կայացման գործընթացում):

Հարկ է նշել, որ որակյալ կրթության վերաբերյալ պատկերացումները խիստ տարբեր են մաս կրթության շահակիցների շրջանում: Կրթական ծառայություններ սպառողները և արտադրողները օգտագործում են վերջնարդյունքների գնահատման տարբեր չափանիշներ: Կրթության համակարգը՝ որպես տնտեսության մրցունակությունը ձևավորող օղակ, պետք է հաշվի առնի հատկապես տնտեսության զարգացման մակարդակի պահանջները, և այս առումով ապահովի գիտելիքների, կարողությունների և հմտությունների բավարար մակարդակը, մասնագետների պահանջվող քանակի վերաբերյալ աշխատաշուկայի կարիքները, դիմորդների կարիքներն ու պահանջները:

Պետք է նշել, որ կրթական ծառայությունների պլանավորումն ու իրականացումը բավարար չեն երաշխավորելու համար, որ բուհն իր կողմից իրականացվող կրթական ծրագրերով կարող է ապահովել մրցունակության բավարար մակարդակ: Հետևապես, բուհի մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք գործառնություններ, որոնք մասնավորապես ուղղված են սպառողների պահանջների ու կարիքների բավարարմանը:

Դիտարկելով բուհի մրցունակությանն առնչվող տեսական դրույթներն ու գործնական մոտեցումները՝ պետք է նշել, որ այդ պահանջները հիմնականում համընկնում են: Դրանցից են՝ մատուցվող ծառայությունների որակը, բուհերի և առանձին դեպքերում կրթական ծառայությունների համբավը և վարկանիշը, մատուցվող կրթական ծառայությունների տարբերակվածությունը, յուրօրինակությունն ու բազմազանությունը, կրթական ծառայությունների արժեքը, կրթական և գիտական գործընթացների նյութական և մեթոդական օժանդակությունը:

Կրթական ծառայություններ մատուցող հաստատությունների միջև մրցակցության սրումը ձևավորում է անհրաժեշտություն ոչ միայն հաշվի առնելու շահակիցների կարիքներն ու պահանջմունքները, այլև մատուցվող ծառայությունների մի-

ջոցով ազդելու նրանց գոհունակության մակարդակի վրա: Սա նշանակում է կրթական ծառայություններ արտադրողների և սպառողների միջև ակտիվ համագործակցությունը կարևոր է կրթական ծառայությունների որակի ապահովման տարբեր բաղադրիչների բարելավման գործընթացում:

Ուսումնառողների գոհունակության/բավարարվածության դինամիկան կրթական ծառայությունների գնահատման կարևորագույն կողմնորոշիչներից է: Ուսումնառության նախնական փուլում ուսումնառողները չեն կարող լիարժեք կերպով իրենց կարիքների և կրթական ծառայությունների միջև համեմատություն իրականացնել, մինչդեռ ուսումնառության ավարտին գոհունակությունը կարող է ձևավորվել հետևյալ բաղադրիչների ամբողջության վերլուծության արդյունքում՝ կրթության բովանդակության յուրացում, ուսումնառության արդյունքում ուսումնառողների կարողությունների և հմտությունների զարգացում, սպառողների բավարարվածություն ընտրված կրթական ծրագրից, կրթական ծրագրի՝ ռեսուրսներով ապահովվածություն, բուհի համբավ և վարկանիշ:

Որակի ներքին ապահովման համակարգերն էական նշանակություն ունեն բարձրագույն կրթության մրցունակության ապահովման գործում: Նպաստելով որակի շարունակական բարելավման մշակույթի ամրապնդմանը, ապահովելով համապատասխանությունը չափանիշներին և կանոնակարգերին, ինչպես նաև խթանելով թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ բուհերը կարող են բարձրացնել ակադեմիական գերազանցության իրենց համբավը, ներգրավել և պահպանել լավագույն տաղանդներին և մնալ մրցունակ համաշխարհային բարձրագույն կրթության տարածքում:

Բուհի որակի ներքին ապահովման համակարգերի արդյունավետության գնահատումը չափազանց կարևոր է՝ երաշխավորելու, որ հաստատությունը բարձրորակ կրթություն է իրականացնում և շուկայում պահպանում է իր մրցակցային դիրքերը: Այդ համակարգերի արդյունավետությունը գնահատելիս հարկ է հաշվի առնել մի քանի հիմնական գործոններ և առաջնահերթորեն ուսումնասիրել բուհի քաղաքականությունն ու ընթացակարգերը՝ վստահեցնելու, որ դրանք հստակորեն սահմանված են և համահունչ են հաստատության նպատակներին: Այդ քաղաքականությունները և ընթացակարգերը պետք է պարբերաբար վերանայվեն և լրամշակվեն՝ երաշխավորելու, որ դրանք համապատասխան և արդյունավետ են՝ սահմանված արդյունքներին հասնելու համար: Բացի այդ, կարևոր է գնահատել բուհի որակի ներքին ապահովման համակարգերի արդյունավետությունը՝ ելնելով դրա արձանագրած արդյունքներից: Սա ենթադրում է ներքին աուդիտի և մշտադիտարկումներ-

րի արդյունքների ուսումնասիրությունը՝ բացահայտելու բարելավման ենթակա ոլորտները: Այն մասներառում է ուսումնառողների արձագանքների և այլ համապատասխան տվյալների վերլուծություն՝ գնահատելու բուհում դասավանդման և ուսման գործընթացների արդյունավետությունը: Ավելին, պետք է գնահատվի բուհի կարողությունը՝ արձագանքելու արտաքին այնպիսի փոփոխություններին և մարտահրավերներին, ինչպիսիք են պետական քաղաքականության փոփոխությունները կամ նոր տեխնոլոգիաների ի հայտ գալը: Ընդհանուր առմամբ, բուհի որակի ներքին ապահովման համակարգերի արդյունավետության խորքային գնահատումը կարող է երաշխավորել, որ հաստատությունը մրցունակ է, ներգրավում և պահպանում է բարձրակարգ ուսումնառողների, ինչպես նաև թողարկում է շրջանավարտներ, որոնք աշխատաշուկայում կլինեն կարողունակ և մրցունակ մասնագետներ:

Հարկ է նշել նաև, որ բուհերի որակի ներքին ապահովման համակարգերի արդյունավետության

գնահատումը միտված է երաշխավորելու, որ բուհերը բարձրորակ կրթական ծառայություններ են մատուցում և շուկայում մրցակցային դիրքերն է պահպանում: Սա ներառում է բուհերի քաղաքականության և ընթացակարգերի, որակի ներքին ապահովման անձնակազմի հմտությունների ու ռեսուրսների, ինչպես նաև սահմանված արդյունքներին հասնելու համար որակի ապահովման համակարգերի արդյունավետության գնահատումը: Կարևոր է նաև հաշվի առնել արտաքին գործոնները, որոնք կարող են ազդել բուհերի՝ որակյալ կրթություն տրամադրելու ներուժակության վրա: Այս գործոնների խորքային և պարբերական գնահատումը կարող է օգնել բուհերին բացահայտել բարելավման ենթակա ոլորտները և կատարել անհրաժեշտ փոփոխություններ՝ կրթության և կրթական ծառայությունների որակը բարձրացնելու համար՝ այդպիսով խթանելով բարձրագույն կրթության մրցունակությունը և մրցակցային դաշտում բուհերի կայուն դիրքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԱՆԿ

1. Altbach P. G., The Costs and Benefits of World-Class Universities, International Higher Education, Fall 2003.
2. Brockerhoff, L., J. Huisman, and M. Laufer. 2015. Quality in Higher Education: A Literature Review. Ghent: Centre for Higher Education Governance.
3. Đonlagić S., Fazlić S., Quality Assessment in Higher Education using the SERVQUAL Model, Management 20(1), 2015, pp. 39-57.
4. Kireeva, N.S., Slepenskova, E.V., Shipunova, T.S. 2017. Competitiveness of the National Education System as a Factor Ensuring the Global Competitiveness of the Country. Economics of Education. Number 6.
5. Krause, K.-L. 2012. Addressing the Wicked Problem of Quality in Higher Education: Theoretical Approaches and Implications. Higher Education Research and Development 31 (3).
6. Sahney S., Banwet D. K., Karunes S., An Integrated Framework of Indices for Quality Management in Education: A Faculty Perspective, The TQM Journal 20 (5), 2008, pp. 502-519.
7. Schindler, L., S. Puls-Elvidge, H. Welzant, and L. Crawford. 2015. Definitions of Quality in Higher Education: A Synthesis of the Literature. Higher Learning Research Communications 5 (3).
8. Зайцева С.А., Управление качеством, Москва, Кнорус, 2018, 422 с.
9. Романова И. Б., Управление конкурентоспособностью высшего учебного заведения, Ульяновск, Средневолжский научный центр, 2005.

Роберт Хачатрян

Департамент образования и знаний, Абу-Даби (АДЕ), ОАЭ
Начальник отдела политики высшего образования,
кандидат филологических наук, доцент

РЕЗЮМЕ

*Роль систем управления качеством вуза в обеспечении
конкурентоспособности высшего образования*

Роль высшего образования в стимулировании социально-экономического развития является крайне важной, так как вузы выступают в качестве центров создания, распространения и сохранения знаний. С целью развития человеческого капитала и поддержки устойчивого развития, вузы должны стремиться к улучшению качества образования. Это подразумевает комплексный процесс, охватывающий все аспекты высшего образования и направленный на культуру непрерывного совершенствования и укрепления конкурентоспособности вузов. В экономике, основанной на знаниях, управление качеством образования становится весьма значимым, особенно в обеспечении конкурентоспособности вузов. Сталкиваясь с новыми вызовами на глобальном уровне, университеты стремятся повысить свою эффективность и уделять приоритетное внимание качеству образования для преодоления данных препятствий. Масштаб образовательных и научно-исследовательских мероприятий имеет жизненно важное значение для конкурентоспособности университетов на рынке труда и образовательных услуг, а также для укрепления их репутации и долгосрочного развития. В данной статье исследуются теоретические принципы обеспечения качества в высшем образовании, а также анализируются характеристики конкурентоспособности высшего образования и их взаимосвязь с внутренними системами обеспечения качества. Кроме того, статья рассматривает общие черты и факторы, определяющие эффективность систем управления качеством в вузах, акцентируя внимание на актуальности данного понятия в рамках стратегического управления вузов.

Ключевые слова: экономика знаний, конкурентоспособность высшего образования, конкурентоспособность вуза, качество высшего образования, внутренняя система обеспечения качества.

Robert Khachatryan

The Abu Dhabi Department of Education and Knowledge (ADEK)
Manager of Higher Education Policy Section, UAE,
PhD, Associate Professor

SUMMARY

*The role of universities quality management systems in ensuring
the competitiveness of higher education*

The role of higher education in fostering socio-economic growth is crucial, as universities function as hubs for generating, disseminating, and preserving knowledge. To cultivate human capital and encourage sustainable development, higher education institutions (HEIs) must persistently endeavor to elevate educational quality. This entails a multifaceted process encompassing all aspects of higher education, aiming to a culture of continuous improvement and boost the competitiveness of the HEIs. In knowledge-driven economies, managing educational quality has gained paramount importance, particularly in securing the competitiveness of universities. As universities confront novel challenges in the global landscape of competitiveness, they strive to enhance their performance and prioritize educational quality to tackle these hurdles. The caliber of educational and research endeavors is vital for universities' competitiveness in the labor and education services market, as well as for augmenting their reputation and long-term development. This article explores the theoretical underpinnings of quality assurance in higher education, scrutinizing the attributes of competitiveness in higher education and their connections to internal quality assurance systems. Additionally, the article explores commonalities and determinants of the efficiency of internal quality management systems at universities, emphasizing the relevance of this notion in university strategic university management.

Key words: knowledge-based economy, competitiveness of higher education, university competitiveness, quality of higher education, internal quality assurance system.

Բնագիրը ներկայացվել է 14.04.2023թ.

Ընդունվել է տպագրության 28.04.2023թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Է. Դազարյանը

ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ,
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ապացուցողական բժշկության մեթոդներին չվստահելով կամ շրջանցելով դրանց մատչելիության և հասանելիության հետ կապված խնդիրները՝ մարդիկ երբեմն նախընտրում են դիմել այլընտրանքային բուժմանը, որը երբեմն ոչ այլ ինչ է, քան խարդախություն, որը կատարվում է պացիենտի խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով: Օրենսդրական համապատասխան հիմքերի և վերջիններիս հիման վրա իրականացվող պատշաճ հսկողության պարագայում բնակչության առողջությունը, մարդու կյանքն ու առողջությունը, ինչպես նաև սեփականության իրավունքը կգտնվեն անհրաժեշտ իրավական պաշտպանության տակ:

Հիմնաբառեր- ապացուցողական բժշկություն, շառլատանիզմ, անբավարար ապացուցված միջոցներ/մեթոդներ, պատրանքային մեթոդներ/միջոցներ:

Ապացուցողական բժշկության մեթոդներին չվստահելով կամ շրջանցելով վերջիններիս մատչելիության և հասանելիության հետ կապված խնդիրները՝ մարդիկ երբեմն նախընտրում են դիմել այլընտրանքային բուժման: Սակայն այլընտրանքային բուժման մեթոդները ոչ միշտ են գիտականորեն հիմնավորված, հաճախ էլ դրանք որևէ առնչություն չունեն հիվանդության և ախտահարվածության իրական բուժման հետ: Այս հանգամանքն առաջացնում է իրավիճակ, երբ այլընտրանքային բժշկության անվան տակ իրականացվում են միջամտություններ, կիրառվում են մեթոդներ, որոնց նպատակը բուժօգնության և բուժսպասարկման դիմած հիվանդից խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գումար վաստակելն է: Նման վարքագիծը ոչ միայն վտանգի տակ է դնում մարդու կյանքն ու առողջությունը, այլև ուղղված է վերջինիս սեփականության իրավունքի դեմ:

1. «Շառլատանիզմ» հասկացությունը: Տարբեր երկրներում բուժման պատրվակով խարդախությամբ, այն է՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով միջամտությունների իրականացումն անվանվում է շառլատանիզմ: Ըստ Էդուարդ Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի՝ «շառլատանը միամիտ մարդկանց հավատը՝ վստահությունը չարաշահող խաբեբան է», իսկ շառլատանիզմը՝ նման վարքագիծը: Չնայած հասկացությունը երբեմն օգտագործվում է

նաև այլ ոլորտներում խարդախությունը բնութագրելու համար (օրինակ՝ քաղաքական շառլատանիզմ), սակայն վերջինս անգլո-սաքսոնական և ռոմանո-գերմանական իրավահամակարգերում մեծապես բնորոշում է խարդախությամբ բժշկական գործառույթի իրականացումը: Երկու վարկած կա «շառլատան» եզրույթի ծագումնաբանության հետ կապված: Առաջինի համաձայն՝ «շառլատան» եզրույթը, որն իտալական ծագում ունի, առաջացել է «ciallare» բառից, որը թարգմանաբար նշանակում է «վերամբարձ խոսել, ճոռոմաբանել», իսկ երկրորդ վարկածի համաձայն՝ եզրույթն առաջացել է իտալերեն «cerretano»՝ Cerreto-ի բնակիչ բառից՝ նկատի ունենալով իտալական Cerreto di Spoleto գյուղի բնակիչներին, ովքեր հանրային վայրերում վաճառում էին դեղամիջոցներ:

2. Պատմական ակնարկ: Շառլատանիզմն առաջին անգամ հիշատակվել է Հիպոկրատի կորպուսի «Սրբազան հիվանդության մասին» (De la maladie sacree) գլխում, որտեղ տարբերակվել են ռացիոնալ բժշկությունն ու կախարդական բժշկությունը: Հեղինակը, կախարդական բժշկության համատեքստում անդրադառնալով էպիլեպսիային նշել է, որ վերջինս կապ չունի «աստվածային տիրապետության» հետ և բնական պատճառներ ունի: Նա գրել է. «Իմ կարծիքով, նրանք, ովքեր առաջինը վերագրեցին այս հիվանդությանը սուրբ բնույթ, մարդիկ էին, որոնք համեմատելի էին այն մարդկանց հետ, ովքեր այսօր մոգեր են, մոլորյալ քահանաներ և շառլատաններ, մարդիկ, ովքեր ցանկա-

նում են լինել բարեպաշտ և բարձրագույն գիտելիքների տիրապետող»²: Տարբեր ժամանակաշրջաններում հիպոկրատյան տեքստում առանձնացվող ռացիոնալ ու կախարդական բժշկությունները միմյանց կողք կողքի են զարգացել: Օրինակ՝ հին եգիպտական բժշկությունը բաղկացած էր ոչ միայն դեղաբույսերով բուժումից և վիրաբուժությունից (Էբերսի /մ.թ.ա. 1550-ական թթ./ և Էդվին Սմիթի /մ.թ.ա. 1500-ական թթ./ բժշկական պապիրուսներում), այլև մոգությունից, աստղագուշակությունից, հմայքներից, ամուլետներով բուժումից և արտաթորանքներից պատրաստված դեղամիջոցներից³: Շառլատաններին, կախարդներին և նրանց պատժի ձևերին է վերաբերում Դոմինիկյան միաբանության անդամներ, գերմանացի կաթոլիկ աստվածաբաններ Հայնրիխ Կրամերի և Յակոբ Շպրենգերի դիվաբանությանը նվիրված «Վիուկների մուրճ» (Malleus maleficarum) աշխատությունը⁴ /1486թ./, որտեղ նշվում է, որ շառլատաններն ու կախարդներն իրենց գործունեության ընթացքում օգտագործում էին քարեր, խոտաբույսեր, ծառեր, կենդանիներ, երգեր և երաժշտական գործիքներ: Երբեմն էլ զարգացող բժշկական ընթացակարգերը պարունակել են գիտական բժշկության մեթոդներ, սակայն վերջիններս օգտագործվել են ոչ նպատակային կերպով: Օրինակ՝ 16-17-րդ դարերում տարածված էր հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց գլխից «խելագարության քարը» հանելու նպատակով զանգի տրեպանացիայի՝ կատարումը: Պատահել է, որ զարգացող բժշկական մեթոդը հիմք է դրել ներկայիս բժշկական նպատակներով կիրառվող մեթոդի: Այսպես, 17-րդ դարում զարգանում էր բժշկության նոր մեթոդ՝ մեամերիզմը, որը մերօրյա հիպնոտիզմի նախատիպն էր: Ըստ մեամերիզմի՝ մոլորակների գրավիտացիոն դաշտերն ազդում են մարդկանց առողջության և նրանց մարմիններում հոսող «անտեսանելի մագնիսական հեղուկի» վրա («կենդանական մագնետիզմ»), և հիվանդություններն առաջանում են հեղուկի համաչափ հոսքի ցանկացած խափանման ժամանակ, և մարդն առողջանում է հեղուկի հոսքի բնականոն ընթացքը վերականգնելուց հետո: Հեղուկի բնականոն հոսքը վերականգնելու համար՝ բազմաթիվ մեթոդներ էին մշակվել: Օրինակ՝ հիստերիայով պացիենտը (թերապիան կիրառվում էր հիմնականում հոգեբուժաբանիկ խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ) երկաթե շիճուկ էր կուլ տալիս, որից հետո Մեսմերը մագնիսներ էր կցում նրա մարմնի տարբեր մասերին⁵ և կարգավորում էներգիան: Հետագայում, այս թերապիան կիրառելիս, Մեսմերի աշակերտը հայտնաբերեց տարօրինակ քնի տեսակ, որը Մարկիզ դը Պուսեգուրն (1751-1825թթ.) անվանում է «մագնիսական սոմնամբուլիզմ»: Այսօր հիպնոթերապիան իր արդյունավետության որոշակի մակարդակի վերաբերյալ ապացույցների

բացակայության պատճառով համարվում է այլընտրանքային բժշկության տեսակ: Վերոգրյալի դիտարկման արդյունքում տեսնում ենք, որ նախկինում հավատամքի և բժշկության սահմանները հաճախ համընկել են, ինչն ավելի խոցելի էր դարձնում հիվանդին, ով դիմում էր բուժօգնության և բժշկական սպասարկման: Նման իրավիճակներում պացիենտին մնում է ապավինել բուժօգնություն և բժշկական սպասարկում իրականացնողների բարեխղճությանը:

Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա արհմիությունների և կոլեկտիվ խմբավորումների պահանջների ճնշումից ազատվելու նպատակով Ֆրանսիայում 1791 թվականի հունիսի 14-ին ընդունվել էր «Միևնույն արհեստ և մասնագիտություն ունեցող արհեստավորների և աշխատողների միավորումների մասին» օրենքը (Շապլյեի օրենք)⁶, որով արգելվել էր ցանկացած մասնագիտական խմբավորման ստեղծումն ու գոյությունը: Այս համատեքստում էլ, որ 1792 թվականի օգոստոսի 18-ի հրամանագրով⁷ վերացվել էին բժշկական համալսարանները և բժշկական մասնագիտության կանոնակարգումը, ինչի հետևանքով յուրաքանչյուր ոք կարողանում էր ազատորեն զբաղվել բժշկությամբ: Այս ժամանակաշրջանում բժշկության անվան տակ տարածվում էր շառլատանիզմը՝ բուժման պատրվակով և վստահությունը չարաշահելու միջոցով խարդախությունները: Նման պայմաններում առաջացել էր բժշկական մասնագիտության վերստեղծման անհրաժեշտությունը: 1803 թվականի մարտի 10-ի օրենքով նախատեսվեց բուժօգնության և բուժապասարկման ոլորտում աշխատողների 2 կատեգորիա՝ «բժիշկներ» (docteurs en médecine) և «առողջապահության աշխատակիցներ» (officiers de santé): Առողջապահության աշխատակիցներն անցումային դեր ունեին և կոչված էին իրականացնելու օժանդակ և հարբժշկական գործունեություն: Արդեն 19-րդ դարի վերջին, երբ քրեականացվեց բժշկական ապօրինի գործունեությունը, առողջապահության աշխատակիցների գործունեությունն արգելվեց⁸: Սակայն ապօրինաբար բժշկությամբ զբաղվելն քրեականացնելու հանգամանքը չնպաստեց շառլատանիզմի պրակտիկայի վերացմանը:

3. **Շառլատանիզմի եղանակները:** Շառլատանիզմը երկօբյեկտ երևույթ է: Ամփոփական օբյեկտները բնակչության առողջությունը, մարդու կյանքն ու առողջությունն են, իսկ լրացուցիչ օբյեկտը՝ սեփականության իրավունքը: Ամփոփական օբյեկտի պարագայում բժշկական ծառայություն մատուցողը, կիրառելով գիտականորեն արդյունավետությունը և անվտանգությունը չհաստատված միջոցներ/մեթոդներ, ուղղակիորեն վտանգում է մարդու կյանքը կամ առողջությունը: Ինչ վերաբերում է պատրանքային միջոցներին/մեթոդներին, ապա

մարդու կյանքը կամ առողջությունը դիտավորությանը վտանգի տակ է դրվում այն առումով, որ մարդը կորցնում է իրապես բուժում ստանալու ժամանակն ու հնարավորությունը, ինչը կարող է հանգեցնել հիվանդության, համախտանիշի կամ կլինիկական վիճակի բարդությունների, սրման, հիվանդության հետագա ընթացքը կանխելու հնարավորության կորստի, անգործությանը առողջությանը պատճառված վնասի, ընդհուպ՝ մահվան: Ինչ վերաբերում է ոչ անմիջական լրացուցիչ օբյեկտին, ապա տվյալ դեպքում անձը ոչ միայն բուժում չի ստանում կամ մարդու կյանքին/առողջությանը պատճառվում է վնաս, այլև պացիենտն իր վստահությունը շահած անձի կողմից մատուցած «ծառայությունների» համար վճարում է, ինչը տվյալ բուժումն իրականացնող անձի հիմնական նպատակն է:

Հաշվի առնելով բժշկության ոլորտի առանձնահատկությունները՝ շառլատանիզմը կարող է դրսևորվել երկու եղանակով՝ 1) անբավարար ապացուցված միջոցների/մեթոդների կիրառմամբ շառլատանիզմ, 2) պատրանքային միջոցների/մեթոդների կիրառմամբ շառլատանիզմ, երբ թե՛ անբավարար ապացուցված միջոցներ/մեթոդները, թե՛ պատրանքային միջոցներ/մեթոդները ներկայացվում են որպես արդյունավետ և անվնաս: «Անբավարար ապացուցված միջոցներ/մեթոդներ» հասկացությունն ընդգրկում է հետևյալ երկու դեպքերը. 1) Չեն կատարվել բավարար քանակի և մակարդակի հետազոտություններ պարզելու համար միջոցների արդյունավետությունն ու անվնաս լինելու հանգամանքը, 2) Կատարվել են բավարար քանակի և մակարդակի հետազոտություններ պարզելու համար միջոցների արդյունավետությունն ու անվնաս լինելու հանգամանքը, սակայն հետազոտությունների արդյունքում վերջիններս չեն հաստատվել: Օրինակ՝ արջի յուղը խորհուրդ է տրվում որպես օնկոլոգիական (ուռուցքաբանական) հիվանդությունները կանխելու և բուժելու միջոց¹⁴, սակայն վերջինիս արդյունավետությունը և անվնաս լինելու հանգամանքն օնկոլոգիական հիվանդությունների դեպքում բավարար ապացուցված չէ: Պատրանքային միջոցներ/մեթոդները բժշկի կողմից կիրառվող այն միջոցներ/մեթոդներն են, որոնք իրականում ակնհայտորեն որևէ դրական կամ բացասական ազդեցություն չեն ունենում առողջության վրա, այլ կապված են միայն ներշնչվողականության հետ: Օրինակ՝ մարդու մոտ առկա է հիվանդություն, որի բուժման համար առաջարկվում է հմայիլներով, ամուլետներով (թախսմաններով) բուժում¹⁵, որը նախնադարյան և հեթանոսական ժամանակաշրջաններում դիվաբանական (դեմոնոլոգիական) բժշկության եղանակներից էր:

Վերոգրյալ եղանակով կատարվող հանցագործությունների առանձնահատկությունն այն է,

որ վստահությունը չարաշահելու հիմնական բաղադրիչը հիվանդի բուժման արդյունքը երաշխավորելն է: Տվյալ պարագայում անհրաժեշտ է քննարկել երկու հանգամանք՝ 1) բուժող անձի կողմից արդյունքի պարտավորության ստանձնումը որպես պացիենտների վստահությունը շահելու եղանակ, 2) խեղված իրազեկված/տեղեկացված համաձայնություն:

Մինչև բուժող անձի կողմից արդյունքի պարտավորության ստանձնումը որպես վստահությունը շահելու եղանակի քննարկում հարկ է անդրադառնալ արդյունքի պարտավորության հասկացությանը՝ միաժամանակ քննարկելով նաև միջոցի պարտավորության հասկացությունը¹⁶: Վերջիններս բաղադրական իրավունքում հայտնի սկզբունքներ են, որոնք բժշկական իրավունքում կիրառելիս, լավագույնս են արտացոլում միմյանց միջև տարբերությունը և կիրառման հետևանքները: Արդյունքի պարտավորության դեպքում բուժաշխատողը/բուժող անձը պարտավորվում է հասնել պահանջված/նախանշված արդյունքին, որը պացիենտի բուժումն է (պացիենտի ողջամիտ ակնկալիքը): Միջոցի պարտավորության դեպքում բուժաշխատողը պարտավորվում է բոլոր անհրաժեշտ միջոցները, ռեսուրսները և ջանքերն օգտագործել և կատարել իր պարտավորությունները՝ անկախ վերջնական արդյունքից: Տվյալ դեպքում խոսքը միայն պայմանագրով նախատեսված պարտավորությունների մասին չէ: Յուրաքանչյուր հիվանդության, ախտահարվածության, առողջական այլ խնդրի մասով գոյություն ունեն կլինիկական ուղեցույցներ (արձանագրություններ/պրոտոկոլներ), որոնք մանրամասն նկարագրում են անհրաժեշտ գործողություններն ու քայլերը հերթականությամբ, անհրաժեշտ բուժական մեթոդների և դեղորայքի կիրառումը: Ըստ 1996 թվականի մարտի 4-ին ընդունված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի¹⁷, կլինիկական ուղեցույցը լիազոր մարմնի հաստատած բժշկական մասնագիտական հասարակական կազմակերպությունների կամ առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների՝ ապացուցողական բժշկության սկզբունքների հիման վրա մշակված և բուժաշխատողների համար նախատեսված փաստաթուղթ է, որը ներառում է որոշակի հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարման ժամանակակից բժշկագիտության լավագույն փորձը և բավարարում է առողջության հետ կապված որոշակի խնդիր ունեցող պացիենտների կարիքները, որի նպատակը բուժաշխատողների կողմից կլինիկական որոշակի դեպքի համար որոշում կայացնելուն աջակցելն է: Այսինքն՝ բուժաշխատողի կողմից տվյալ հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարման կանոնների պահ-

պանունը նշանակում է միջոցի պարտավորության իրականացում: Պացիենտի համար, ում ողջամիտ ակնկալիքը բուժումն է, դժվար է ընդունել, որ չնայած բժշկի կողմից պահպանվել են կլինիկական ուղեցույցների բոլոր կանոնները, սակայն ի վերջո բուժման արդյունքը չի համապատասխանում իր սպասելիքին: Սա է պատճառը, որ չվստահելով ապացուցողական բժշկությանը կամ սպառելով դրանց մեթոդները՝ պացիենտներն ապավինում են այլընտրանքային բժշկությանը: Այս հանգամանքից օգտվելով՝ մասնագետ հանդիսացող անձինք մշակում են կամ կիրառում են այլընտրանքային բուժման սեփական մեթոդները, պացիենտին երաշխավորելով բուժում, այդպիսով շահելով նրանց վստահությունը:

Անդրադառնալով խեղված տեղեկացված/իրազեկված համաձայնությանը՝ անհրաժեշտ է նախ նշել, որ պացիենտի համաձայնությունը համարվում է տեղեկացված, եթե բուժաշխատողի կողմից տրամադրվում է օբյեկտիվ տեղեկատվություն, որը պետք է պարունակի պլանավորված բուժօգնության, բժշկական միջամտության, դրա/դրանց այլընտրանքների բնույթի և հնարավոր հետևանքների հետ, դիտարկվող բուժօգնության/ միջամտության վերաբերյալ համապատասխան փաստերի, նպատակի, բնույթի և հետևանքների և դրա հետ կապված ռիսկերի, յուրաքանչյուր հիվանդի անհատական հատկությունների հետ կապված ցանկացած ռիսկի (տարիքը կամ այլ պարբերականների առկայությունը) մասին տեղեկություններ: Տվյալ պարագայում, խաբեության կամ վստահությունը չառաջադիմ եղանակով, այլընտրանքային բուժում իրականացնողը, չտրամադրելով օբյեկտիվ տեղեկատվություն և հաճախ միայն վերջնական բուժում երաշխավորելով, իրապես տեղեկացված համաձայնություն չի ստանում պացիենտից և վերջինիս գրկում է նպատակների անհրաժեշտությունն ու օգտակարությունը, միջամտության մեթոդները՝ դրա ռիսկերի և առաջացած անհանգստության կամ ցավի դեմ կշռելու հնարավորությունից:

Այսպիսով, շառլատանիզմին բնորոշ են ծառայությունը մատուցողի կողմից արդյունքի պարտավորության ստանձնումը և պացիենտին լիարժեք ու օբյեկտիվ տեղեկատվության չտրամադրումը, որի պարագայում պացիենտը թեև տալիս է իր համաձայնությունը կատարվելիք բժշկական գործառնություն, սակայն նշված համաձայնությունը բովանդակային առումով չի համապատասխանում ներպետական և միջազգային օրենսդրությամբ պահանջվող իրազեկված/տեղեկացված համաձայնության չափանիշներին, այլ կրում է միայն ձևական բնույթ:

Ուսումնասիրելով լավագույն փորձ ունեցող պետությունների օրենսդրությունը և նախադեպային իրավունքը, անհրաժեշտ է անդրադառնալ

դրանցից ֆրանսիական իրավունքին և ուսումնասիրել շառլատանիզմը որպես իրավախախտում/ հանցագործություն՝ զուգահեռաբար վերլուծություններ կատարելով նաև արարքի որակման հարցերին:

4. Շառլատանիզմի իրավական կարգավորումը Ֆրանսիայում: Շառլատանիզմը Բժշկական դեոնտոլոգիայի կանոնագրքի (Code de déontologie des médecins) 39-րդ հոդվածով սահմանվում է. «Բժշկի կողմից հիվանդին պատրանքային կամ ոչ բավարար ապացուցված միջոցներ առաջարկելը՝ դրանք ներկայացնելով որպես արդյունավետ կամ անվտանգ: Շառլատանիզմի ցանկացած պրակտիկա արգելվում է»¹⁸: Ինչպես տեսնում ենք, Ֆրանսիայի Բժշկական դեոնտոլոգիայի կանոնագիրքը ոչ միայն արգելում է շառլատանիզմի ցանկացած պրակտիկա, այլև այդպիսին է համարում պատրանքային և ոչ բավարար ապացուցված միջոցներ առաջարկելը, այսինքն՝ անձը, ով հիվանդին առաջարկում է վերը նշված միջոցները, խախտում է կանոնագրքային նորմը և կանոնագիրքը տվյալ դեպքում չի կարևորում նման առաջարկի ընդունման հանգամանքը՝ արարքի ավարտման պահի որոշումը թողնելով պատասխանատվություն նախատեսող օրենսգրքերի վրա: Բժշկական դեոնտոլոգիայի կանոնագրքի 39-րդ հոդվածը ներառված է Ֆրանսիայի Հանրապետության Հանրային առողջության օրենսգրքի R. 4127-39 հոդվածում¹⁹: Հանրային առողջության օրենսգրքի R. 4127-39 հոդվածը վերաբերում է բացառապես բժիշկներին (հատուկ սուբյեկտներ), որից հետևում է, որ հոդվածը կիրառելի չէ ցանկացած անձի նկատմամբ: Ֆրանսիայի քրեական օրենսգրքում շառլատանիզմը որպես առանձին հանցակազմ քրեականացված չէ, սակայն որոշակի հանցակազմներ հնարավորություն են տալիս դրա նկատմամբ քրեական պատասխանատվություն սահմանել. օրինակ՝ մեկ ուրիշին դիտավորությամբ վտանգի ենթարկելու (mise en danger délibérée d'autrui), անգոյությունը ֆիզիկական ամբողջականությունը վնասելու (atteinte involontaire à l'intégrité physique), չկանխամտածված սպանության (homicide involontaire) հանցակազմները: Այն դեպքում, երբ շառլատանական գործողություններ են կատարում բժշկությամբ զբաղվող անձինք, չունենալով համապատասխան որակավորում, ապա վերջիններս ենթակա են պատասխանատվության առողջապահական մասնագիտությունների ապօրինի իրականացման համար (օրինակ՝ Հանրային առողջության օրենսգրքի L. 4161-1 հոդվածը վերաբերում է ապօրինի բժշկական գործունեություն իրականացնելուն (exerce illégalement la médecine), L. 4161-2 հոդվածը՝ ապօրինի ատամնաբուժական գործունեություն իրականացնելուն (exerce illégalement l'art dentaire), L. 4161-3 հոդվածը՝ ապօրինի մանկաբարձական

գործունեություն (exerce illégalement la profession de sage-femme) իրականացնելուն):

Անդրադառնալով շառլատանիզմի եղանակներին՝ հարկավոր է նշել, որ դրանք ուղղակիորեն ամրագրված են Բժշկական դեոնտոլոգիայի կանոնագրի (Code de déontologie des médecins) 39-րդ հոդվածով, որի վերլուծությունից երևում է, որ շառլատանիզմը սովորաբար դրսևորվում է 2 եղանակով՝ հիվանդին պատրանքային կամ ոչ բավարար ապացուցված միջոցներ առաջարկելով՝ դրանք ներկայացնելով որպես արդյունավետ կամ անվտանգ:

Ֆրանսիայի Պետական խորհուրդը (Conseil d'État), 2001 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ անդրադառնալով ոչ բավարար ապացուցված միջոցների/մեթոդների կիրառմամբ շառլատանիզմին, որոնք ներկայացվում են որպես արդյունավետ և անվնաս, նշել է, որ պատասխանատվության հարցը լուծելիս իրավասու մարմինը պարտավոր է գնահատել օգտագործված միջոցի ոչ բավարար ապացուցված լինելու հանգամանքը ոչ միայն ²⁰ Ֆրանսիայի, այլև միջազգային տեսանկյունից: Տվյալ դեպքում բժիշկն իր հիվանդներին նշանակել էր հիմնականում արտասահմանյան երկրներից ներմուծված, ներքին շուկայավարման թույլտվություն չունեցող այնպիսի դեղամիջոցներ, ինչպիսիք են Ֆրիդմանի ²¹ պատվաստանյութը՝ D.P.G.՝ Daphne gnidium-ը ²², Bioparyl-ը ²³ և Beljanski ապրանքները ²⁴, որոնց բաղադրությունը երբեմն նույնիսկ իր համար էր անհայտ, բացի այդ՝ դեղամիջոցները երբեք չէին եղել «Կենսաբժշկական հետազոտություններին մասնակցող անձանց պաշտպանության մասին» 1988 թվականի դեկտեմբերի 20-ի օրենքի ²⁵ շրջանակներում կատարված փորձարարական հետազոտությունների առարկա և դրանց արդյունավետությունը և անվտանգությունը հաստատված չէին Ֆրանսիայում: Պետական խորհրդի կողմից ձևավորված դիրքորոշումը կարող է բացատրվել նրանով, որ ապացուցողական բժշկությունն ունի հստակ չափորոշիչներ և բժշկական գործառնության ընթացքում օգտագործված միջոցների/մեթոդների՝ նախկինում տվյալ պետությունից դուրս ըստ այդ չափանիշների բավարար ապացուցված լինելու հանգամանքը կարող է հիմք ծառայել վեճի լուծման համար:

Ֆրանսիայի Պետական խորհուրդը 2007 թվականի նոյեմբերի 26-ի որոշման ²⁶ մեջ քննարկել է անվնաս/անվտանգ պատրանքային միջոց օգտագործելու դեպքում պատասխանատվության հարցը: Տվյալ դեպքում բժիշկը ռևմատիկ հիվանդությանը տառապող իր հիվանդներից մեկին բուժել էր թելի վրա անցկացված ճոճանակը մարմնի վրա սահեցնելով և նախաբազուկին ամպուլա կիրառելով, ինչպես նաև հիվանդին խորհուրդ էր տվել տարբեր գրքեր կարդալ և սոյայի կաթ խմել: Պե-

տական խորհուրդը նշել է, որ չնայած միջոցն անվնաս է եղել, այնուամենայնիվ, միջոցի անվնաս լինելը որևէ հետևանք չի կարող ունենալ բժշկի կողմից թույլ տրված սխալի առկայության վրա: Եթե արարքը փաստացի վնաս չի պատճառել պացիենտին, ապա շառլատանիզմը կարող է որակվել դիտավորյալ ուրիշներին վտանգի ենթարկելու հանցակազմով, այսինքն՝ անձը մահվան կամ առողջական վնաս կրելու անմիջական վտանգի տակ է, որը կարող է հանգեցնել խեղման կամ մշտական հաշմանդամության (Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 223-1 հոդված ²⁷): Վտանգը կարող է առաջանալ պատրանքային դեղամիջոցի ընդունման պատճառով հիվանդի կողմից արդյունավետ բժշկական արտադրանքի կիրառումից կամ ապացուցված թերապիայից հրաժարվելու հետևանքով: Այսպիսով, միջոցի/մեթոդի անվտանգությունը բավարար չէ բժշկին պատասխանատվությունից ազատման համար:

Ծառայությունը մատուցած անձի կողմից ծախսած միջոցների, կատարած գործողությունների և մատուցած ծառայությունների մեծածախս լինելը, ինչպես նաև անվճար ծառայություններ մատուցելու հանգամանքը ևս չեն կարող պատասխանատվությունից ազատման հիմք լինել: Օրինակ՝ Ֆրանսիայի Կաբրիեր համայնքում կոսմետոլոգը, չունենալով համապատասխան որակավորում, միաժամանակ «անբարեխիղճ առևտրային գործունեություն» (pratique commerciale trompeuse) և «ստվերային տնտեսություն» (exécution d'un travail dissimulé) է վարել և «չկանխատեսված վնասվածքներ պատճառել» (blessures involontaires) տուժողներին: Առաջին տուժողի դեպքում կոսմետոլոգը՝ «աչքի եզրագծին բոտոքսի ներարկումներ էր կատարել, որից հետո տուժողի մոտ բարդություններ էին առաջացրել՝ դեմքի այտուց, աչքերի չորություն և գլխացավեր»: Երկրորդ տուժողի դեպքում «շուրթերին հիալուրոնաթթվի ներարկում էր կատարել, որը հանգեցրել էր վարակի»: Իր գործունեության ընթացքում կոսմետոլոգը «հատկապես կիրառել է բոտոքսի և հիալուրոնաթթվի ներարկումներ, տեղային անզգայացմամբ պոլիդիոքսանոնային թելերի տեղադրում, ակվալիքսի ²⁸ ներարկումներ, ինչպես նաև ջրածնի պերօքսիդով ատամների սպիտակեցում, որը միայն 0,1% կամ դրանից պակաս կոնցենտրացիաներով լուծույթների հետ կիրառման դեպքում է ազատ օգտագործելի, դրանից ավելին միայն ատամնաբույժ-վիրաբույժներն են իրավասու նշանակելու և օգտագործելու այս նյութը» ²⁹: Կոսմետոլոգի կողմից տարբեր թանկարժեք կոսմետիկ միջոցների կիրառումը վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատման հիմք չի հանդիսացել, ավելին, վերջինս պայմանական ազատազրկման է դատապարտվել և տուգանվել ապօրինի բժշկական գործունեություն իրականաց-

նելու համար:

Բացի բնակչության առողջության, մարդու կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործություն լինելուց՝ շառլատանիզմը նաև սեփականության դեմ ուղղված հանցագործություն է: Տվյալ պարագայում՝ հանցավորը, խոստանալով պացիենտի վերջնական բուժում և հավաստիացնելով վերջինիս դրանում, շահում է նրա վստահությունը, մատուցում է ծառայություն և դրա դիմաց ստանում գույքային օգուտ: Հաշվի առնելով, որ շառլատանիզմի հանցակազմը Ֆրանսիայի քրեական օրենսգրքում բացակայում է, իսկ նման հանցագործությունը ենթադրում է թե՛ խարդախություն, թե՛ ապօրինի բժշկական գործունեություն, ուստի հաճախ արարքը որակվում է համակցությամբ: Խարդախությունն ըստ Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 313-1-րդ հոդվածի բնութագրվում է որպես «խաբեությամբ և համոզելով ուրիշի գույքն իրենը դարձնելը»: Արարքը համակցությամբ որակելու հարցին անդրադարձել է Ֆրանսիայի վճռաբեկ դատարանը: Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից 2001 թվականի փետրվարի 6-ին որոշում է կայացվել անձին խարդախության և ապօրինի բժշկական գործունեության համար դատապարտելու դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին³⁰: Տվյալ գործում ամբաստանյալը, ներկայանալով որպես «Vitalocéane» ընկերության «բնական բժշկության որակավորված մասնագետ»՝ գովազդային ֆայլեր էր ուղարկել նախապես ընտրված 55-ից բարձր տարիքի անձանց, որտեղ գովազդվում էին 28 խմբաքանակի դեղահաբեր՝ որպես 100% բնական և կենսական սպիտակուցներ պարունակող դեղամիջոցներ՝ պատրաստված կակոամորթների³¹ էքստրակտների՝ փոշուց: Գովազդին կցված էր նաև պատասխան-ձևաթուղթը, որը ստանալուն պես աշխատակիցներն այցելում էին հաճախորդներին և նրանց առողջական վիճակը որոշելու համար կատարում «օրգանոմետրի» թեստավորում: Կախված «արդյունքներից»՝ առաջարկվել էր դեղահաբի որոշակի քանակություն, որին համաձայնելով՝ տուժողները վճարել էին մեծ գումարներ: Մեկ այլ գործում՝ Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2005 թվականի մայիսի 31-ի որոշմամբ³² նախկին բժշկին ապօրինի բժշկությամբ զբաղվելու և խարդախության համար դատապարտելու դատավճիռն օրինական ուժի մեջ է թողնվել: 1978 թվականին իր որդու մահվանից, հոգեբանական շոկ ապրելուց և քաղցկեղով հիվանդանալուց հետո՝ նախկին բժիշկը 1984 թվականին մշակել է «քաղցկեղի երկաթի օրենք»-ի տեսությունը, որի համաձայն՝ քաղցկեղը հոգեբանական շոկի կամ մեկուսացված վիճակում տարած սուր տրավմայի հետևանք է, որը դրսևորվում է գլխուղեղի որոշակի հատվածում համակարգչային շերտագրության միջոցով հայտնաբերելի ուռուցքի օջախի

տեսքով և, հետևաբար, կարող է բուժվել հիվանդների հետ հարցազրույցների և կորտիզոնի³⁴ կիրառման միջոցով, ինչն էլ իրականացնում էր իր պացիենտների նկատմամբ: Այսպիսով ֆրանսիական իրավունքն ընդունելի է համարում շառլատանիզմը որակել թե միայն ապօրինի բժշկությամբ զբաղվելու, թե ապօրինի բժշկությամբ զբաղվելու և խարդախության հանցակազմերի համակցությամբ:

5. Խարդախությամբ բժշկական գործառույթ իրականացնելու համար պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում: Ինչպես մի շարք պետությունների օրենսդրություններում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ «շառլատանիզմի» առանձին հանցակազմ չի նախատեսվում: Սակայն վերոնշյալ չի բացառում բժշկական ոլորտում շառլատանական արարքի համար վրա հասնող պատասխանատվությունը: Այն դեպքում, երբ շառլատանական գործունեություն իրականացնելը հետևանքներ չի առաջացնում, ապա արարքը կարող է որակվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 47-րդ հոդվածով (ապօրինաբար բժշկությամբ զբաղվելը), որը սահմանում է. «Բժշկական պաշտան կրթություն չունեցող և սահմանված կարգով բժշկական գործունեության չթույլատրված անձի կողմից որպես արհեստ բժշկությամբ զբաղվելն առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով»:

Ինչ վերաբերում է քրեական պատասխանատվությանը, ապա 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ գլխում (Բնակչության առողջության դեմ ուղղված այլ հանցագործություններ) տեղ գտած 407-րդ հոդվածով նախատեսվում է բժշկական օգնություն և սպասարկում ապօրինի իրականացնելու համար քրեական պատասխանատվություն՝ միայն համապատասխան հետևանքների առկայության դեպքում /նյութական հանցակազմ/: ՀՀ ՔՕ 407-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Ապացուցողական բժշկության սկզբունքների վրա չհիմնված գործողությամբ կամ համապատասխան բժշկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու համար մասնագիտական գիտելիքների կամ տեխնոլոգիաների շրջանցմամբ բժշկական գործառույթ իրականացնելը, եթե դա անգոյություն միջին կամ թեթև ծանրության վնաս է պատճառել մարդու առողջությանը պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝

մեկից չորս տարի ժամկետով»:

Հանցակազմի վերլուծությունից երևում է, որ վերջինիս օբյեկտիվ կողմը կազմող արարքը երկրորդն է, այսինքն՝ հանցանքի կատարումը կարող է դրսևորվել՝

1) ապացուցողական բժշկության սկզբունքների վրա չհիմնված գործողությամբ բժշկական գործառույթ իրականացնելը,

2) համապատասխան բժշկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու համար մասնագիտական գիտելիքների կամ տեխնոլոգիաների շրջանցմամբ բժշկական գործառույթ իրականացնելը:

Օբյեկտիվ կողմի հետևանքները կարող են դրսևորվել՝

1) մարդու առողջությանը թեթև ծանրության վնաս պատճառելով (ՀՀ ՔՕ 407-րդ հոդվածի 2-րդ մաս),

2) մարդու առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով (ՀՀ ՔՕ 407-րդ հոդվածի 2-րդ մաս),

3) մարդու առողջությանը ծանր վնաս պատճառելով (ՀՀ ՔՕ 407-րդ հոդվածի 3-րդ մաս),

4) այլ ծանր հետևանք առաջացնելով (ՀՀ ՔՕ 407-րդ հոդվածի 3-րդ մաս),

5/ մարդու մահ առաջացնելով (ՀՀ ՔՕ 407-րդ հոդվածի 3-րդ մաս):

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 61-րդ կետի համաձայն՝ «ապացուցողական բժշկությունը բժշկական օգնության և սպասարկման ընթացքում կիրառվող մոտեցում է, որի կանխարգելիչ, ախտորոշիչ և բուժական միջոցների օգտագործման վերաբերյալ որոշումներն ընդունվում են՝ ելնելով դրանց արդյունավետության և անվտանգության վերաբերյալ առկա ապացույցներից, որոնք ի շահ պացիենտի օգտագործելու համար ենթակա են որոնման, համեմատման, ամփոփման և լայնորեն տարածման»: Համապատասխան բժշկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու համար մասնագիտական գիտելիքների կամ տեխնոլոգիաների շրջանցմամբ բժշկական գործառույթ իրականացնելու հասկացության տակ պետք է հասկանալ այն դեպքերը, երբ բժշկական գործառույթն իրականացվում է շրջանցելով այն մասնագիտական գիտելիքները և տեխնոլոգիաները, որոնք համապատասխան բժշկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու հիմք են:

Ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ Հայաստանում շառլատանական գործողությունները կարող են որակվել խարդախության և բժշկական օգնություն և սպասարկում ապօրինի իրականացնելու հանցակազմերի համակցությամբ, քանի դեռ որպես հիմնական հանցակազմի՝ բժշկական օգնու-

թյուն և սպասարկում ապօրինի իրականացնելու հանցակազմի ծանրացնող հանգամանք մյուս հանցակազմը՝ խարդախությունը սահմանված չէ: ՀՀ ՔՕ 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «հանցագործությունների համակցություն է համարվում միևնույն անձի կողմից մեկ կամ մեկից ավելի արարքներով ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, եթե նա դրանցից ոչ մեկի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել»:

ՀՀ ՔՕ 255-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խարդախությունը բնութագրվում է որպես խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակություն: Անձի արարքը խարդախությամբ ապօրինի բժշկությամբ զբաղվել որակելու համար անհրաժեշտ է, որ վերջինս գիտակցի, որ իր մատուցած բուժօգնությունը և բուժապասարկումն արդյունավետ և անվտանգ չէ, սակայն պացիենտի վստահությունը չարաշահելու եղանակով և խաբեությամբ իրականացնի այն:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է, որ ՀՀ ՔՕ-ում որպես 407-րդ հոդվածի 2-րդ մասի ծանրացնող հանգամանք նախատեսել նույն արարքը խարդախությամբ կատարելը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ապացուցողական բժշկության սկզբունքների վրա չհիմնված գործողությամբ կամ համապատասխան բժշկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու համար մասնագիտական գիտելիքների կամ տեխնոլոգիաների շրջանցմամբ բժշկական գործառույթ իրականացնելու հանցագործությունն ուղղված է ոչ միայն բնակչության առողջության, մարդու կյանքի և առողջության, այլև սեփականության դեմ: Բացի այդ՝ առաջարկվում է միևնույն հանցակազմում որպես հետևանք նախատեսել այն հանգամանքը, որ ապացուցողական բժշկության սկզբունքների վրա չհիմնված գործողությամբ կամ համապատասխան բժշկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու համար մասնագիտական գիտելիքների կամ տեխնոլոգիաների շրջանցմամբ բժշկական գործառույթ իրականացնելու հետևանքով հնարավոր չի եղել կանխել հիվանդության հետագա ընթացքը կամ բարդությունների առաջացումը, հաշվի առնելով, որ ծառայություն մատուցողը գիտակցում է, որ վերջինս արդյունավետ չէ, սակայն, այնուամենայնիվ, մատուցում է ծառայությունը՝ այդ կերպ զրկելով պացիենտին ժամանակին արդյունավետ բուժօգնություն և բուժապասարկում ստանալու հնարավորից, ինչի հետևանքով հնարավոր է հետագայում չհաջողվի կանխել հիվանդության հետագա ընթացքը կամ բարդությունների առաջացումը:

- ¹ Տե՛ս, <https://www.cnrtl.fr/lexicographie/Charlatan/0>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023թ.:
- ² Տե՛ս, J.Jouanna, C.Magdelaine, Hippocrate, L'Art de la médecine, Paris, GF Flammarion, 1999, էջեր 35-36:
- ³ Մարդկային ծագում ունեցող դեղամիջոցներից Հին Հռոմում գլադիատորի արյունն էր օգտագործվում որպես էպիլեպսիայի դեմ դեղամիջոց:
- ⁴ Տե՛ս, <https://www.magicgatebg.com/Books/MalleusAcrobat.pdf>, վերջին այցելությունը՝ 23.03.2023:
- ⁵ Տրեսանագիա, կրանիոէկտոմիա, զանգահատում - զանգի վրա վիրաբուժական բացվածքներ անել:
- ⁶ Տե՛ս, V.Jordi, Great Masters of Western Art, Watson-Guptill, 2002, էջ 71:
- ⁷ Կոչվել է հիմնադրի՝ գերմանացի բժիշկ Ֆրանց Ֆրիդրիխ Անտոն Մեսմերի անունով:
- ⁸ Ուսմունք հիպնոսի երևույթների մասին:
- ⁹ Շուտով Մեսմերը հայտնաբերում է, որ կարողանում է հասնել նույն արդյունքին միայն իր ձեռքերով պացիենտներին դիպելու եղանակով, առանց ավելորդ երկաթե շիճուկի կամ մագնիսների օգտագործման:
- ¹⁰ Տե՛ս, Loi relative aux assemblées d'ouvriers et artisans de même état et profession, La loi Le Chapelier, http://hgsem-pai.fr/doc_clic/fra_nouvelle/data/loiChapelier.pdf, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:
- ¹¹ Տե՛ս, Décret relatif à la suppression des congrégations séculières et des confréries, 18 août 1792, http://rhe.ish-lyon.cnrs.fr/fichiers_pdf/toformation/17920818.pdf, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:
- ¹² Տե՛ս, B.Hoerni, "La loi du 30 novembre 1892", Histoire des sciences médicales, Tome XXXII, n°1, pages 63-67, <https://www.biusante.parisdescartes.fr/sfhm/hsm/HSMx1998x032x001/HSMx1998x032x001x0063.pdf>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:
- ¹³ Օրինակ՝ քաղցկեղի բուժումը հնարավոր է հիվանդության սկզբնական փուլերում (տե՛ս <https://nih.am/am/news/14>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023), տվյալ ժամանակահատվածը բաց թողնելու և համապատասխան բուժում չստանալու դեպքում կարող են անդառնալի հետևանքներ առաջանալ:
- ¹⁴ Տե՛ս, <https://tltaudit.ru/hy/medicinal-plants/medvezhii-zhir-lechebnye-svoistva-i-primenenie-medvezhii-zhir-lechebnye-svoistva-i/>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023: Վերջինս ազատ վաճառքում է՝ <https://www.list.am/category?q=%D5%A1%D6%80%D5%BB%D5%AB+%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:
- ¹⁵ Տե՛ս, https://www.amulettes.fr/contents/fr/d5567659_Amulettes_pour_la_Sant%C3%A9- Talismans_contre_la_mal-adie.html, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:
- ¹⁶ Բժշկության ոլորտում արդյունքի և միջոցի պարտավորություններն առաջին անգամ քննարկվել են Ֆրանսիայի վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից Մեդսիեի վերաբերյալ 1936 թվականի մայիսի 20-ի որոշման մեջ (Cour de cassation, Chambre civile, 20 mai 1936, arrêt Mercier):
- ¹⁷ Կլինիկական ուղեցույցի հասկացությունը սահմանող կետն ավելացվել է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին 2020 թվականի մայիսի 6-ին ընդունված թիվ ՀՕ-268-Ն ՀՀ օրենքով:
- ¹⁸ Տե՛ս, <https://www.conseil-national.medecin.fr/code-deontologie/devoirs-patients-art-32-55/article-39-charlatanisme>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:
- ¹⁹ Տե՛ս, https://www.legifrance.gouv.fr/codes/section_lc/LEGITEXT000006072665/LEGISCTA000006190547/, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:
- ²⁰ Տե՛ս, Conseil d'État, 19 octobre 2001 (n° 210590), <https://www.legifrance.gouv.fr/ceta/id/CETATEXT000008016841>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:
- ²¹ Ֆրիդմանի պատվաստանյութ (vaccin de Friedman) - ակտիվ մոլեկուլը մեկուսացված է ծովային կրիայից, օգտագործվել է տուբեռկուլոզի դեմ: Տե՛ս <https://www.rts.ch/archives/radio/divers/emission-sans-nom/13347854-le-vaccin-friedmann-imposture-ou-injustice-01-01-1953.html>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:
- ²² Յոդունների երկայնքով բաշխված կարմիր հատապտուղներ ունեցող աֆրիկյան թունավոր թուփ, որի մեջ հայտնաբերված և մշակված DPG-ն դեղամիջոց է, որն օգտագործվում է լեյկեմիայի և հեպատիտ B-ի այլընտրանքային բուժման մեջ: Տե՛ս <https://medecine-integree.com/daphne-gnidium/>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:
- ²³ Gingko biloba ծառի աշնանային տերևների վրա մշակված դեղանյութ, որն օգտագործվում է ֆիբրոզի դեմ: Տե՛ս <http://beljanski-publications.com/publications/Mirko%20Pub%20127%20Skin%20Fibrosis.pdf>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:
- ²⁴ Միրկո Բելյանսկին ֆրանսիացի կենսաբան է, ով աշխատել է քաղցկեղի և ՉԻԱՀ-ի դեմ «բնական» ծագման միջոցների հայտնաբերման համար: Նշված միջոցները չունենին ապացուցված արդյունավետություն: Դատապարտվել է ապօրինի դեղագործության, դեղամիջոցներն արտադրելու և տարածելու համար: Դեղանյութերը պատրաստելիս օգտվել է այնպիսի թունավոր բույսերից, ինչպիսիք են rauwolfia vomitoria-ն և բրազիլական Pao pereira ծառի կեղևը: Տե՛ս <https://www.mskcc.org/cancer-care/integrative-medicine/herbs/pao-pereira>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:
- ²⁵ Տե՛ս, Loi n° 88-1138 du 20 décembre 1988 relative à la protection des personnes qui se prêtent à des recherches bio-médicales:
- ²⁶ Տե՛ս, Conseil d'État, 4ème sous-section, 26/11/2007, 292250, <https://www.legifrance.gouv.fr/ceta/id/CETA->

TEXT000018007668/, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

²⁷ Տե՛ս, https://www.legifrance.gouv.fr/codes/article_lc/LEGIARTI000024042637, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

²⁸ Տե՛ս, Վիրաբուժական ներծծվող թելեր:

²⁹ Տե՛ս, Ակվալիքսը նորարարական լիպոլիտիկ է: Լիպոլիտոթերապիան իրականացվում է մաշկի տակ ներարկման պատրաստուկներով՝ լիպոլիտիկներով՝ ուղղված ճարպային բջիջները կազմաքանդելուն:

³⁰ Տե՛ս, <https://www.tflinfo.fr/justice-faits-divers/elle-injectait-illegalement-du-botox-une-estheticienne-condamnee-pour-blessures-involontaires-2242836.html>, վերջին այցելությունը՝ 23.03.2023:

³¹ Տե՛ս, Cour de Cassation, Chambre criminelle, du 6 février 2001, N° de pourvoi 00-83.425, <https://www.legifrance.gouv.fr/juri/id/JURITEXT000007587537>, վերջին այցելությունը՝ 23.03.2023:

³² Կակղամորթներ – անողնաշարավոր կենդանիների երկրորդ կարգը, որ ունի երեք դաս՝ գլխոտանիների, փորոտանիների և խեցիների (կենդր.):

³³ Էքստրակտ - հանուկ՝ որևէ բանի հյութի խտացումով ստացվող բուժական պատրաստուկ (բժշկ.):

³⁴ Տե՛ս, Cour de Cassation, Chambre criminelle, du 31 mai 2005, N° de pourvoi 04-85.341, <https://www.legifrance.gouv.fr/juri/id/JURITEXT000007639208>, վերջին այցելությունը՝ 23.03.2023:

³⁵ Կորտիզոն, ստերոիդ հորմոն, որն սթրեսի ժամանակ մակերիկամների կողմից արտադրվող հիմնական հորմոններից մեկն է? Կորտիզոնի ներարկումն արվում է կարճաժամկետ ցավազրկման նպատակով, այն նվազեցնում է հոդերի, կապանների, ձուսապարկերի այտուցը: Մաշկաբաններն օգտագործում են կորտիզոնը սպիների, էկզեմայի, ատոպիկ մաշկաբորբի բուժման և սարկոիդոզի զարգացման դադարեցման նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. J.Jouanna, C.Magdelaine, Hippocrate, L'Art de la médecine, Paris, GF Flammarion, 1999.
2. V.Jordi, Great Masters of Western Art, Watson-Guptill, 2002.
3. B.Hoerni, "La loi du 30 novembre 1892", Histoire des sciences médicales, Tome XXXII, n°1.
4. Conseil d'État, 4ème sous-section, 26/11/2007 (n° 292250).
5. Conseil d'État, 19 octobre 2001 (n° 210590).
6. Loi relative aux assemblées d'ouvriers et artisans de même état et profession, La loi Le Chapelier.
7. Loi n° 88-1138 du 20 décembre 1988 relative à la protection des personnes qui se prêtent à des recherches biomédicales.
8. Décret relatif à la suppression des congrégations séculières et des confréries, 18 août 1792.
9. Cour de Cassation, Chambre criminelle, du 6 février 2001, N° de pourvoi 00-83.425.
10. Cour de Cassation, Chambre criminelle, du 31 mai 2005, N° de pourvoi 04-85.341.
11. <https://nih.am>
12. <https://tltaudit.ru>
13. <https://www.amulettes.fr>
14. <http://hgsempai.fr>
15. <http://rhe.ish-lyon.cnrs.fr>
16. <https://www.biusante.parisdescartes.fr>
17. <https://www.conseil-national.medecin.fr>
18. <https://www.legifrance.gouv.fr>
19. <https://www.rts.ch>
20. <https://medecine-integree.com>
21. <http://beljanski-publications.com>
22. <https://www.mskcc.org>
23. <https://www.tflinfo.fr>

Աննա Խաչատրյան

Следователь следственного отдела административного
района Малатия-Себастья следственного управления
города Еревана Следственного комитета РА,
аспирант кафедры теории права и конституционного права
института права и политики Армяно-Российского университета

РЕЗЮМЕ

*Правовые вопросы мошеннического выполнения
медицинских функций в республиках Армения и Франция*

Не доверяя методам доказательной медицины или обходя проблемы, связанные с их наличием и доступностью, люди иногда предпочитают обращаться к альтернативным методам лечения, которые иногда являются не чем иным, как мошенничеством, осуществляемым путем злоупотребления доверием пациента или обмана. В случае надлежащего контроля, осуществляемого на основании соответствующих правовых оснований, здоровье населения, жизнь и здоровье человека, а также право собственности будут находиться под необходимой правовой защитой.

Ключевые слова: доказательная медицина, шарлатанство, недостаточно проверенные средства/методы, иллюзорные методы/средства.

Anna Khachatryan

Investigator of the Investigative section of the
Malatia-Sebastia Administrative District
of the Investigative Department of the Yerevan City of
the Investigative Committee of the Republic of Armenia,
PhD student of the Department of Theory of Law and
Constitutional Law of the Institute of Law and Politics
of the Armenian-Russian University

SUMMARY

The legal issues of fraudulently performing a medical function in the republics of Armenia and France

Distrusting evidence-based medicine methods or bypassing the problems associated with their availability and access, people sometimes prefer to turn to alternative treatments, which are sometimes nothing more than fraud, carried out by abusing the patient's trust and deception. In the case of proper control carried out on the basis of relevant legal bases, the health of the population, the life and health of the person, as well as the right to property will be under the necessary legal protection.

Key words: evidence-based medicine, charlatanism, insufficiently proven means/methods, illusory methods/means.

Բնագիրը ներկայացվել է 24.03.2023թ.

Ընդունվել է տպագրության 19.05.2023թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր Ա. Ղամբարյանը

ՀՐԱՆՏ ՍԱՐԿԻՍՈՎ

ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
նախագահի օգնական,
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության
ինստիտուտի իրավունքի տեսության և սահմանադրական
իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՍԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ, ԹԵ՞ ՎԱՐՉԱՊԵՏ՝ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության առարկան է, քե որ պետական բարձրագույն պաշտոնատար անձը պետք է լինի ՀՀ ԱԽ նախագահը: Աշխատանքն իր բնույթով իրավաքաղաքական վերլուծություն է, որը ներառում է ինչպես օրենսդրության վերլուծություն, համեմատություն, այնպես էլ՝ այս կամ այն ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակի ուսումնասիրություն: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են ԱԽ նախագահության զարգացումը: Ավելին, ուսումնասիրվել են ԱՄՆ, Վրաստանի, Իտալիայի և Լատվիայի փորձերը՝ Անվտանգության խորհուրդների նախագահ «պաշտոնի» ձևավորման վերաբերյալ:

Հիմնադրանք- Անվտանգության խորհուրդ, Անվտանգության խորհրդի նախագահ, Հանրապետության նախագահ, Հանրապետության վարչապետ, Գլխավոր հրամանատար, Գերագույն գլխավոր հրամանատար:

Որպես սահմանադրությամբ նախատեսված մարմին՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհուրդը (այսուհետ՝ ՀՀ ԱԽ) նախատեսվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2005 թվականի խմբագրությամբ: Այսպես, ըստ Սահմանադրության 2005 թվականի խմբագրության 55-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին նախադասության.

«(Հանրապետության Նախագահը) կազմավորում է ազգային անվտանգության խորհուրդը և նախագահում այն (...)»:

Անկախությունից ի վեր առաջին անգամ սահմանադրական ամրագրում է ստանում այս կարևորագույն ինստիտուտը՝ որպես խորհրդակցական մարմին: ՀՀ ԱԽ-ի կազմը հաստատելու համար անհրաժեշտ էր Հանրապետության նախագահի հրամանագիր: Գործնականում, ԱԽ-ի կազմը որոշելու հարցում Հանրապետության նախագահն ուներ բացարձակ հայեցողություն, վերջինս կաշկանդված չէր որեւէ օրենքով: Այս կառուցակարգը տրամաբանական էր, քանի որ ԱԽ-ն Հանրապետության նախագահին առնչվող խորհրդատվական մարմին էր, ուստի վերջինս էր ընտրում իրեն խորհուրդ տվողներին:

Հանրապետության նախագահի 2008 թվականի մայիսի 4-ի N ՆՀ-107-Ա Հրամանագրի (այսուհետ՝ Հրամանագիր) հավելվածը սահմանում էր ՀՀ ԱԽ կազմը:

Դիտարկումները վկայում են, որ ԱԽ կազմի

ընտրության հիմքում երբեմն ընկած են եղել նաև, այսպես կոչված, քաղաքական դրդապատճառներ: Հանրապետության երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից ձևավորված ՀՀ ԱԽ կազմը մեծամասամբ քաղաքական որոշման արդյունք էր: 2008 թվականի նախագահական ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո պետությունը թևակոխել էր քաղաքական ցնցումների փուլ՝ վերջինից բխող բոլոր բացասական հետևանքներով: Կարծում ենք՝ հենց քաղաքական ուժերին կոնսոլիդացնելու, անվտանգային հարցերի շուրջ ավելի լայն քննարկումներ կազմակերպելու և հետագայում աջակցություն ունենալու հանգամանքով էր պայմանավորված Հանրապետության նախագահի կողմից ԱԽ կազմում, բացի որոշակի խումբ բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող անձանցից, նաև քաղաքական կուսակցությունների ղեկավարներ ընդգրկելու հանգամանքը:

Շարունակելով ՀՀ ԱԽ կազմի ուսումնասիրությունը՝ նկատում ենք, որ ի տարբերություն ներկայումս գործող Անվտանգության խորհրդի մշտական կազմի, որը բաղկացած է բացառապես գործադիր իշխանության ներկայացուցիչներից, 2008 թվականի մայիսի 4-ին հաստատված կազմում ներկայացված էին Սահմանադրական դատարանի նախագահը, Ազգային ժողովի նախագահը, Հանրապետության գլխավոր դատախազը, Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարը, քաղաքական ուժերի ղեկավարները:

«Անվտանգության խորհրդի կազմավորման և

գործունեության մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Անվտանգության խորհրդի անդամներն են՝ վարչապետը, առաջին փոխվարչապետը, փոխվարչապետները, Անվտանգության խորհրդի քարտուղարը, պաշտպանության նախարարը, արտաքին գործերի նախարարը, ազգային անվտանգության ծառայության տնօրենը, ոստիկանության պետը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետը»:

Երբ համադրում ենք Հրամանագրով սահմանված ՀՀ ԱԱ կազմը և «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված կազմը՝ տեսնում ենք, որ Հրամանագիրն ապահովում էր պետական բարձրագույն իշխանության բաժանման բոլոր ճյուղերի ներկայացուցիչների ներկայացվածությունը ՀՀ ԱԱ կազմում, չնայած այն հանգամանքին, որ այդ կազմի ձևավորումը, որոշակի վերապահումներով, մեծամասամբ հիմնված էր քաղաքական որոշման վրա: Անկախ նրանից, որ այդ որոշումն ուներ քաղաքական բաղադրիչ, այն ապահովում էր հակակշռում ու փոխզույգում: Ավելին, որպես կիսանախագահական կամ խառը կառավարման համակարգ ունեցող պետություն՝ ԱԺ նախագահին ևս համարվում էր ՀՀ ԱԱ մշտական անդամ՝ նման կազմը պայմանավորված էր առաջին հերթին ԱԱ-ի խորհրդատվական մարմին լինելով:

Մինչ կանդիդատներն այն հարցին, թե Հաստատանի Հանրապետությունում ո՞ր պետական բարձրագույն պաշտոնատար անձը պետք է հանդես գա որպես Անվտանգության խորհրդի նախագահ և ինչո՞ւ, ներկայացնենք պառլամենտական հանրապետություններում ԱԱ-ի կազմավորման մի քանի օրինակներ:

Վրաստանի՝ Ազգային անվտանգության խորհուրդը և Պաշտպանության ազգային խորհուրդը (National Security Council and National Defence Council)

2018 թվականի դեկտեմբերի 16-ին, Վրաստանի նորընտիր նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլիի երդմնակալությունից հետո, Վրաստանը խառը կառավարման մոդելից անցում կատարեց խորհրդարանական կառավարման ձևի: Հաշվի առնելով կառավարման ձևի փոփոխությունը՝ վստահաբար ակնհայտ էր, որ պետք է կատարվեր օրենսդրական լրջագույն փոփոխություններ: Այդպիսի փոփոխություններից էր նաև այն, որ Վրաստանի համապատասխան օրենսդրության նախկին խմբագրությամբ գործող Ազգային անվտանգության խորհուրդը դադարեց գոյություն ունենալ և վերջինիս փոխարեն ստեղծվեց նոր մոդելի Ազգային անվտանգության խորհուրդ, որն արդեն գլխավորում է ոչ թե Հանրապետության նախագահին, այլ՝ Կառավարության ղեկավարը՝ վարչապետը, իսկ նախագահին Ազգային անվտանգության խորհրդի

մշտական անդամ չէ: Սակայն ի հակակշիռ Ազգային անվտանգության խորհրդի նոր մոդելի՝ վրաց Սահմանադիրը ստեղծել է Սահմանադրությամբ նախատեսված նոր մարմին՝ Պաշտպանության ազգային խորհուրդ՝ (այսուհետ՝ ՊԱԽ):

Ինչպես տեսնում ենք, վրաց Սահմանադիրը հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանրապետության նախագահը հանդիսանում է Վրաստանի Պաշտպանության ուժերի գերագույն հրամանատար՝ հնարավորություն է ընձեռել, ի թիվս այլնի, իրականացնելու Գերագույն հրամանատարի պարտականությունները: Վերլուծելով ՊԱԽ կազմն ու կառուցվածքը՝ պարզ է դառնում, որ ՊԱԽ-ը ձևավորվում է բացառապես այն ժամանակ, երբ Հանրապետությունում հայտարարվում է ռազմական դրություն, իսկ Հանրապետության նախագահը գլխավորում է ՊԱԽ-ը: Նախագահից բացի ՊԱԽ անդամներ են՝ Հանրապետության վարչապետը, խորհրդարանի նախագահը, պաշտպանության նախարարը և Պաշտպանության ազգային ուժերի հրամանատարը: ՊԱԽ-ը դադարում է իր գործունեությունը, երբ ավարտվում է ռազմական դրության կիրառումը:

Ստացվում է, որ Սահմանադրական մակարդակում ամրագրված են երկու տարբեր մարմիններ, որոնք ստեղծվել են սահմանադրական այլ նպատակների հասնելու համար: Թերևս այս տարանջատումը հետապնդում է հետևյալ լեզիտիմ նպատակը՝ հնարավորություն ընձեռել թե՛ Հանրապետության նախագահին, թե՛ վարչապետին՝ իրականացնելու իրենց սահմանադրական պարտականությունները:

Սույն պարագայում, վստահաբար կարող է առաջ գալ այն միտքը, որ Վրաստանի նախագահին ընտրվել է ժողովրդի կողմից ուղիղ քվերակության միջոցով, ուստի բնական է, որ վերջինս պետք է ունենա լայն լիազորություններ քննարկվող հարցի համատեքստում: Հատկանշական է, որ Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլիի պաշտոնավարումից հետո նախագահին ընտրվելու է ընտրիչների միջոցով՝ պահպանելով իր լայն լիազորությունները:

Լատվիայի Ազգային անվտանգության խորհուրդը (National Security Council)

Որպես խորհրդարանական կառավարման ձևի պետություն՝ սույն հետազոտության համատեքստում անհրաժեշտ ենք համարում քննարկելու Լատվիայի Հանրապետության փորձը:

Այսպես, Լատվիայի Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության նախագահը (ընտրված Սալեմայի՝ խորհրդարանի կողմից) պետության Չինված ուժերի Գլխավոր հրամանատարն է (Commander-in-Chief), որը պատերազմական ժամանակ նշանակում է Գերագույն հրամանատարին (Supreme Commander): Նախ անհրա-

ժեշտ է հասկանալ, որ վկայակոչված եզրույթները ծավալային առումով իրարից տարբերվում են, իսկ Commander-in-Chief եզրույթը մեր իրականությունում, առավելապես, ընկալվում է որպես՝ **Գերագույն գլխավոր հրամանատար**։ Միջազգային փորձի ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ վերջինս ոչ այդքան ճիշտ իմպլեմենտացիայի հետևանք է։

Լատվիայի «Ազգային անվտանգության մասին օրենքի» 12-րդ բաժնի 2-րդ մասի համաձայն. *«Գերագույն հրամանատարն իրականացնում է պետական պաշտպանությունը՝ կանխելու համար պետության անկախությանը, նրա սահմանադրական կառուցվածքին և տարածքային ամբողջականությանը սպառնացող վտանգը, եթե կարիներտր ուղացնի սույն օրենքով կամ այլ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված առաջադրանքների կատարումը»*։

Վերլուծելով Լատվիայի Սահմանադրությունը և «Ազգային անվտանգության մասին» օրենքի համապատասխան դրույթները՝ պարզ է դառնում, որ Գերագույն հրամանատարը բացառապես պատերազմական ժամանակաընթացքում նշանակվող բարձրագույն զինվորականն է, որն ի թիվս այլնի, պետք է ապահովի պետության տարածքային ամբողջականությունը։ Համակարգային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա է նաև Միացյալ շտաբի հրամանատարի հաստիքը՝ Լատվիայի Ազգային զինված ուժերի ղեկավարը (The Commander of the Joint Headquarters is Chief of the Latvian National Armed Force), որը համարժեք է Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի Գլխավոր շտաբի պետին։ Միացյալ շտաբի հրամանատարը իրականացնում է Ձինված ուժերի կառավարումը՝ խաղաղ ժամանակ։ Ստացվում է, որ պատերազմի ժամանակ Ձինված ուժերի Գլխավոր հրամանատարը նշանակում է իր Գերագույն հրամանատարին՝ արհեստավարժ զինվորականի, որը պետք է ղեկավարի զինված ուժերը նախագահի անունից։

«Ազգային անվտանգության խորհրդի մասին» Լատվիայի օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Հանրապետության նախագահը նախագահում է Ազգային անվտանգության խորհուրդը։ Ստացվում է, որ Լատվիայում ևս Հանրապետության նախագահը հանդես է գալիս որպես Ազգային անվտանգության խորհրդի նախագահ՝ վերջինից բխող լայն լիազորություններով։ Վկայակոչված օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ Լատվիայի Ազգային անվտանգության խորհուրդը կազմված է. *«Պետության Նախագահ, Մայեմայի խոսնակ, Մայեմայի Ազգային անվտանգության Հանձնաժողովի, Մայեմայի Պաշտպանության, Ներքին գործերի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահներ, Վարչապետ,*

Պաշտպանության, Արտաքին գործերի, Ներքին գործերի նախարարներ»։

Լատվիացի օրենսդիրներն ԱԽ-ի շատ ավելի լայն կազմ են նախատեսել, քան հայկական և վրացական օրենսդիրները։ Քանի որ հետազոտության առարկան այլ է, ապա սույն աշխատանքում չենք անդրադառնա կազմի վերաբերյալ առաջ եկող հարցերին¹²։

Լատվիացի օրենսդիրները, հաշվի առնելով խորհրդարանական կառավարման համակարգի նրբությունները, ինչպես նաև հիմք ընդունելով պետական իշխանության թևերի հակակշիռների և փոխգապումների բարձրագույն սկզբունքը՝ Պետության գլխին են վերապահել Ազգային անվտանգության խորհրդի նախագահությունը, Ձինված ուժերի գլխավորումը և այլն. խորհրդարանական կառավարման մոդելը և նախագահի, այսպես կոչված, նեղ լիազորությունները դեռևս հիմք չեն կարող հանդիսանալ վերջինիս լիազորությունները «սեղմելու» և այլ բարձրագույն պաշտոնատար անձի կամքից առկախելու համար, ինչն արվել է Հայաստանի Հանրապետությունում՝ Սահմանադրության 2015 թվականի խմբագրության համատեքստում։

Իտալիայի Պաշտպանության գերագույն խորհուրդը (Supreme Defence Council)

Իտալիայի Սահմանադրության 87-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն.

«Նախագահը Ձինված ուժերի Գլխավոր հրամանատարն է (Commander-in-Chief), նախագահում է օրենքով ստեղծված Պաշտպանության գերագույն խորհուրդը (Supreme Defence Council) և Խորհրդարանի համաձայնությամբ պատերազմի մասին հայտարարություններ է անում»։

Ինչպես տեսնում ենք վկայակոչված նորմից՝ իտալական սահմանադիրը միևնույն հարթության մեջ է դիտարկում Ձինված ուժերի Գլխավոր հրամանատարին և Պաշտպանության գերագույն խորհրդի նախագահությունը։

Իտալիայի «Ձինվորական կանոնակարգի օրենսգրքի» (Code of military regulations, Legislative Decree 15 March 2010, n. 66) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. *«Խորհուրդը նախագահում է Հանրապետության Նախագահը և կազմված է.*

ա) Նախարարների խորհրդի նախագահից՝ փոխնախագահի գործառնությունով, բ) արտաքին գործերի նախարարից, գ) ներքին գործերի նախարարից, դ) Էկոնոմիկայի և ֆինանսների նախարարից, ե) պաշտպանության նախարարից, զ) տնտեսական զարգացման նախարարից, է) պաշտպանության շտաբի պետի կողմից»։

Իտալական օրենսդիրն որդեգրել է շատ հետաքրքիր մոտեցում։ Խորհրդարանական կառավարման համակարգում, որտեղ Հանրապետության նախագահը՝ պետության գլուխն է, իսկ նախարարների խորհրդի նախագահը (վարչապետը)՝

լայն լիազորություններով կառավարության ղեկավարն է, որոնք սահմանադրական լրջագույն պարտականություններ ունեն, որը ենթադրում է ներգրավվածություն ազգային անվտանգության հարցերում:

Աշխատանքում քննարկվող պետություններում և Հայաստանի Հանրապետությունում օրենսդիրը որդեգրել է այն մոտեցումը, որ ԱԽ-ն կամ համարժեք պետական մարմինը պետք է գլխավորի կամ վարչապետը, կամ նախագահը, ապա Իտալիայի պարագայում՝ համապատասխան մարմնի ղեկավարության աստիճանակարգում ամրագրվել է փոխնախագահի պաշտոնը, որն ի պաշտոնե պետք է զբաղեցնի նախարարների խորհրդի նախագահը:

Հատկանշական և հետաքրքիր է միջազգային փորձը, սակայն հայրենական Սահմանադիրը գնացել է լրիվ այլ ճանապարհով:

Նախ անհրաժեշտ է հստակեցնել այն, որ ի տարբերություն վկայակոչված պետությունների Հայաստանի Հանրապետության պարագան այլ է: Վարչապետի ընտրությունը կատարվում է ոչ ստանդարտ կերպով. ընտրված վարչապետն ունի աննախադեպ լեգիտիմություն:

Երկրորդ, հայրենական Սահմանադիրն որդեգրել է համամասնական ընտրական կարգի այնպիսի մոդել, որպիսի պարագայում, այսպես կոչված, կուսակցական ցուցակների ընտրությունը վերածվում է յուրօրինակ «նախագահական ընտրությունների»:

Երրորդ, այն խմբակցությունը, որին հաջողվում է Ազգային ժողովում ձևավորել կայուն մեծամասնություն՝ սեփական որոշմամբ Հանրապետության նախագահի հաստատմանն է ներկայացնում վարչապետի թեկնածությունը: Ստացվում է՝ վարչապետին ընտրում է ժողովուրդը:

Եթե ավելի պարզ ներկայացնենք՝ ստեղծվում է մի իրավիճակ, երբ վարչապետը՝ գործադիր իշխանության ղեկավարը, ղեֆակտո դառնում է առաջնային մանդատով պետական բարձրագույն պաշտոնատար անձ:

Հիմա վերադառնանք այն կարևոր հարցին, թե ով պետք է լինի Անվտանգության խորհրդի նախագահը՝ վարչապետը, թե՞ նախագահը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր պետություն յուրովի է ընտրել իր պետական ինստիտուտների զարգացման ճանապարհը: Սահմանադրության 2015 թվականի խմբագրության համաձայն՝ էապես փոփոխվեց Հանրապետության նախագահի դերն ու տեղը պետական կառավարման համակարգում, ինչպես նաև ռադիկալ փոխակերպվեց վերջինիս ինստիտուցիոնալ դերը՝ որպես պետության անվտանգության երաշխավորի: Մինչդեռ, վարչապետին վերապահվեցին լայն լիազորություններ՝ բոլոր վեկտորներում: Փաստացի,

վարչապետը վերածվեց «պետության ղեկավարի», չնայած նրան, որ նախագահն է Հանրապետության գլուխը (the head of the State): Հենց այս տեսակ փոփոխություններով էլ պայմանավորված՝ փոխվեց նաև Անվտանգության խորհրդի նախագահը:

Որպես կանոն, Անվտանգության խորհուրդը գործադիր իշխանության տարրեր պարունակող, Սահմանադրությամբ նախատեսված մարմին է: Սահմանադրության 2015 թվականի խմբագրության 155-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ նախադասությունները համապատասխանաբար սահմանում են. «*Ձինված ուժերը Կառավարության ենթակայության ներքո են: Ձինված ուժերի կիրառման մասին որոշումն ընդունում է Կառավարությունը (...)*»:

Սահմանադրության 2015 թվականի խմբագրության 155-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունն էլ սահմանում է. «*Պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը*»:

Վկայակոչված դրույթների համակարգային վերլուծությունը գալիս է ամրապնդելու հետևյալը.

- Մենք գործ ունենք սահմանադրական մակարդակում ամրագրված այն դրույթի հետ, որ Ձինված ուժերը գտնվում են Կառավարության ենթակայության ներքո, որպիսի պարագայում վերջիններիս կիրառման վերաբերյալ որոշումը կայացնում է հենց Կառավարությունը:

- Անհրաժեշտ է վերիշել, որ Հայաստանի Հանրապետությունում կառավարության ղեկավարը վարչապետն է, ոչ թե նախագահը, իսկ կառավարությունն էլ՝ Հանրապետության բարձրագույն գործադիր մարմինն է, որը նախագահին կից մարմին չէ:

- Անվտանգության խորհուրդն է սահմանում պաշտպանության բնագավառի հիմնական ուղղությունները:

Այսպես, Ձինված ուժերի առաջնային նպատակն ու պարտականությունն է ապահովել Հանրապետության անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը, ասել կուզենք, որ Ձինված ուժերի միջոցով է պետությունն իրականացնում իր առջև բարձրացող կարևորագույն և առանցքային գործառնություններից մեկը՝ *ազգային անվտանգության ապահովման գործառնությոթ*: Փաստացի, Սահմանադիրը վկայակոչված նորմերի համակարգային վերլուծությամբ կանխորոշել է, ինչպես նաև պատասխանել է հետագայում բարձրացվող հարցերին. այլ բան է, որ տվյալ պատասխանը, գուցե, մեր արտով չէ, սակայն իրավաքաղաքական ռեալիզմից ելնելով՝ դրանք խիստ ծանրակշիռ են:

Ստեղծվել է իրավիճակ, որտեղ Հանրապետության նախագահը, նոր խմբագրության Սահ-

մանադրության համատեքստում, հանդես է գալիս որպես պետական իշխանության բաժանման վերջնական մի ինստիտուտ. Հանրապետության նախագահն որևէ էական և իրական ազդեցություն և լիազորություն չունի՝ Ձինված ուժերի կիրառության համատեքստում, ազգային անվտանգության և տարածքային ամբողջականության ապահովման և պահպանման համատեքստում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2005 թվականի խմբագրության 49-րդ հոդվածի 3-րդ նախադասությունը սահմանում էր. «Հանրապետության Նախագահը Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է»:

Ի տարբերություն Սահմանադրության նախկին խմբագրության, նոր խմբագրությունն այլևս մնան դրույթներ չի նախատեսել, չկա իրավաքաղաքական պատասխանատվություն սահմանող նորմը:

Սահմանադրական տեքստից հեռացնելով մնան կարևորագույն նորմը, որը սահմանում էր Հանրապետության նախագահին իրավաքաղաքական պատասխանատվության ենթարկելու կարևորագույն և առանցքային հիմք՝ Սահմանադիրը նպատակ է ունեցել վերջինիս հեռացնել մասնավորապես խորհրդի նախագահությունից և մշտական անդամությունից: Անհրաժեշտ է հաշվի առնել մասնավորապես կարևորագույն հանգամանքը, որ ցանկացած իրավաքաղաքական իրավիճակում Անվտանգության խորհրդի անդամներն իրավաքաղաքական և, հատկապես քաղաքական պատասխանատվություն կրող պետական պաշտոնատար անձինք են, մինչդեռ Հանրապետության Մայր օրենքն ամրագրել է, որ Հանրապետության նախագահը քաղաքականապես չեզոք, վերադասական ինստիտուտ է:

Եզրահանգումներ:

Ամփոփելով վերոգրյալ մտքերն, ինչպես մասնավորապես

միջազգային փորձը՝ կարծում ենք.

1. Անհրաժեշտ է փոխել *Գերագույն հրամանատար տիտղոսը՝ Գլխավոր հրամանատարի:*

2. Սույն կարգավորումներով պայմանավորված՝ Հանրապետության նախագահին վերապահել քաղաքական պատասխանատվություն, նշանակում է դեմ գնալ Սահմանադրության ոգուն և կարգավորումներին. Հանրապետության նախագահը վերադասական ինստիտուտ է՝ բացառելով քաղաքական պատասխանատվության ենթարկելու էլեմենտները:

3. Հանրապետության նախագահին վերապահել ԱԽ նախագահի մշտական անդամի, առավելապես՝ նախագահի լիազորություններ, ինչը կնշանակի վերջինիս ներքաշել քաղաքական գործընթացների մեջ, քաղաքական որոշումների վրա ազդեցություն վերապահել, որպիսի պարագայում դա անբույլատրելի է, ավելին՝ դեմ ու հակառակ Սահմանադրության ոգուն, Սահմանադրի կամքին:

4. Ոչ պատերազմական իրավիճակում որևէ քաղաքական պաշտոնյա չունի տեղ և դեր զինվորական հիերարխիայում. Ձինված ուժերի թիվ մեկ զինվորականը Գլխավոր շտաբի պետն է, իսկ պաշտպանության նախարարը հանդես է գալիս որպես վարչարար՝ դուրս զինվորական հիերարխիայից:

¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=75780>

² <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120572>

³ Հաշվի առնելով Վրաստանի նախագահի ընտրությունների կարգը և Վրաստանի սահմանադրական կարգը՝ կարծում ենք, որ դեռևս վաղ է խոսել Վրաստանի ամբողջությամբ պառլամենտական կառավարման մոդելի մասին. Վրաստանում այս պահին գործում է «կիսախորհրդարանական» կառավարման ձև:

⁴ Տե՛ս, Վրաստանի Սահմանադրության 73-րդ հոդվածը, <https://matsne.gov.ge/ru/document/view/30346?publication=35>

⁵ Տե՛ս, Լատվիայի Սահմանադրության 35-րդ և 36-րդ հոդվածները, <https://www.sacima.lv/en/legislative-process/constitution>

⁶ Տե՛ս, Լատվիայի Սահմանադրության 42-րդ հոդվածը, <https://www.sacima.lv/en/legislative-process/constitution>

⁷ Հատկանշական է այն հանգամանքը, որ 1995թ. ընդունված և 2005 թ. փոփոխված ՀՀ Սահմանադրությունում ամրագրված է հենց Գերագույն գլխավոր հրամանատար տիտղոսը, որը հանդիսանում է խորհրդային և, ապա,

նաև ռուսական «Верховный главнокомандующий» եզրույթի թարգմանությունը: 2015 թ. փոփոխություններով Սահմանադրությունում՝ Պերագույն գլխավոր հրամանատար եզրույթը փոխարինվեց համեմատաբար ընդունելի թարգմանությամբ՝ Պերագույն հրամանատար (Հրանտ Սարկիսով):

⁸ <https://likumi.lv/ta/en/en/id/14011>

⁹ «Ազգային զինված ուժերի մասին» օրենքի 3-րդ գլուխ 3, 13-րդ բաժին, 1-ին մաս, <https://likumi.lv/ta/en/en/id/15836>

¹⁰ <https://likumi.lv/ta/id/14011-nacionalas-drosibas-likums>

¹¹ <https://likumi.lv/ta/id/14011-nacionalas-drosibas-likums>

¹² Տե՛ս, Հրանտ Սարկիսով - «Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի կազմի և կառուցվածքի իրավաքաղական հիմնախնդիրները» «ՀՀ Սահմանադրական դատարան. Տեղեկագիր» պարբերական, 3 (107) 2022 թվական, էջ 129-141

¹³ https://www.senato.it/documenti/repository/istituzione/costituzione_inglese.pdf

¹⁴ https://www.difesa.it/Content/Documents/Codice_aggiornato_con_DLgs_24febbraio2012.pdf

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գիտական աշխատանքներ

1. Հ.Ա. Սարկիսով «Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի կազմի և կառուցվածքի իրավաքաղական հիմնախնդիրները» ՀՀ Սահմանադրական դատարան. Տեղեկագիր պարբերական, 3 (107) 2022 թվական, էջ 129-141

Էլեկտրոնային ռեսուրսներ

1. <https://likumi.lv/ta/en/en/id/14011>

2. <https://likumi.lv/ta/en/en/id/15836>

3. <https://likumi.lv/ta/id/14011-nacionalas-drosibas-likums>

4. <https://matsne.gov.ge/ru/document/view/30346?publication=35>

5. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=75780>

6. https://www.difesa.it/Content/Documents/Codice_aggiornato_con_DLgs_24febbraio2012.pdf

7. <https://www.sacima.lv/en/legislative-process/constitution>

8. https://www.senato.it/documenti/repository/istituzione/costituzione_inglese.pdf

Նորմատիվ իրավական ակտեր

1. Իտալիայի Հանրապետության «Ձինվորական կանոնակարգի օրենսգիրք» (Code of military regulations, Legislative Decree 15 March 2010, n. 66)

2. Իտալիայի Հանրապետության Սահմանադրություն

3. Լատվիայի Հանրապետության «Ազգային անվտանգության խորհրդի մասին» օրենք

4. Լատվիայի Սահմանադրություն

5. Հայաստանի Հանրապետության «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենք

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

7. Հանրապետության Նախագահի 2008 թվականի մայիսի 4-ի N ՆՀ-107-Ա Հրամանագիր

8. Վրաստանի Սահմանադրություն

Грант Саркисов

Помощник председателя комиссии по телевидению и радио РА,
аспирант кафедры теории права и конституционного права
института права и политики Армянно-Российского университета

РЕЗЮМЕ

*Председатель Совета безопасности в парламентских республиках.
Президент Республики или Премьер-министр - юридические и политические проблемы.*

Предметом исследования является то, какое государственное должностное лицо должно быть председателем Совета безопасности Армении. Работа по своему характеру является политико-правовым анализом, включающим в себя как анализ и сопоставление законодательства, так и изучение политической ситуации того или иного периода. В ходе исследования изучалось развитие председательства Совета безопасности. Кроме того, были изучены опыты США, Грузии, Италии и Латвии по формированию «должности» Председателя Совета Безопасности.

Ключевые слова: Совет безопасности, Председатель Совета безопасности, Президент Республики, Премьер-министр Республики, Главнокомандующий, Верховный главнокомандующий.

Hrant Sarkisov

Assistant to the Chairman of the Commission on Television and Radio of the RA,
PhD student of the Department of Theory of Law and
Constitutional Law of the Institute of Law and Politics
of the Armenian-Russian University

SUMMARY

*Chairman of the Security council in Parliamentary republics. President of the Republic
or Prime Minister - legal and political issues.*

The subject of the study is which state official should be the chairman of the Security council of Armenia. The work, by its nature, is a political and legal analysis, which includes both the analysis and comparison of legislation, and the study of the political situation of a particular period. The study examined the development of the chairmanship of the Security council. In addition, the experiences of the United States, Georgia, Italy and Latvia in the formation of the “position” of the President of the Security council were studied.

Key words: Security council, Chairman of the Security council, President of the Republic, Prime Minister of the Republic, Commander-in-Chief, Supreme Commander.

Բնագիրը ներկայացվել է 23.03.2023թ.

Ընդունվել է տպագրության 28.04.2023թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու Ս. Բաղդասարյանը

ԱՐՏՅՈՄ ՍՈՒՋՅԱՆ

ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական

ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՈՇՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Աշխատանքում իրականացվելու է անհաղթահարելի ուժի՝ որպես պարտավորությունների խախտման համար պատասխանատվությունը բացառող ինստիտուտի ուսումնասիրություն՝ կենտրոնացնելով անհաղթահարելի ուժի առկայությունը կանխորոշող պայմանների և դրա առաջացրած իրավական հետևանքների վրա:

Աշխատանքի շրջանակներում իրականացված ուսումնասիրության և վերլուծության արդյունքում ի հայտ կբերվեն այն վիճահարույց հարցերը, որոնք առաջանում են պրակտիկայում, վեր կհանվի անհաղթահարելի ուժի հասկացության խնդիրները՝ առաջարկելով անհաղթահարելի ուժի որոշման պայմանների շրջանակում ներառել նաև անկանխատեսելիության բաղադրատարրը: Կբացահայտվեն անհաղթահարելի ուժի առաջացնող իրավական հետևանքները, որոնց թվում են պարտապանի պատասխանատվությունից ազատելը, կատարման անհնարինությունը, հանգամանքների էական փոփոխությունը, հայցային վաղեմության ժամկետի կասեցումը: Որոշակի անդրադարձ կկատարվի նաև COVID-19 համավարակի՝ որպես անհաղթահարելի ուժի որակման և դրա ստեղծած իրավական հետևանքների հարցերին:

Հիմնադրանք – անհաղթահարելի ուժ, պատասխանատվությունից ազատում, COVID-19, արտակարգ հանգամանք, անկանխատեսելիություն, պարտապան, վնասի հատուցում:

Force majeure (ֆորսմաժոր) հասկացությունը ՀՀ ներպետական օրենսդրության մեջ կիրառվում է «անհաղթահարելի ուժ» ձևակերպմամբ և, որպես այդպիսին, անհաղթահարելի ուժի հասկացությունը ամբողջությամբ բացահայտված չէ ՀՀ իրավական համակարգում: Չնայած այն հանգամանքին, որ նշված հասկացությունը կիրառվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) մի շարք հոդվածներում, այնուամենայնիվ, այն որոշակիորեն բացահայտված է միայն հայցային վաղեմության ժամկետի կասեցմանը և պարտավորությունների խախտման համար պատասխանատվության հիմքերին վերաբերող հոդվածներում (բնորոշվում է որպես տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանք): Արդյունքում կարող ենք փաստել, որ Օրենսգիրքը անհաղթահարելի ուժի առկայությունը կապվում է (անհաղթահարելի ուժի բաղադրատարրերն են)՝

- 1) արտակարգ հանգամանքի առկայության,
- 2) տվյալ պայմաններում անկանխելի հանգամանքի առկայության հետ:

Արտակարգ հանգամանք ասելով հասկանում ենք սովորականից դուրս, արտասովոր, եզակի իրավիճակի առկայություն: Ներպետական դատարանները փորձելով բացահայտել արտակարգ հանգամանքի առկայությունը՝ այն բնորոշել են որպես «բացառիկ, անսովոր, եզակի հանգամանք»: Անդրադարձ կատարելով անհաղթահարելի ուժի երկրորդ բաղադրատարրին՝ տվյալ պայմաններում անկանխելի լինելուն, հարկ է ընդգծել նախ «տվյալ պայմաններում» եզրույթի կարևորությունը, քանի

որ այն որոշակիորեն, սակայն ոչ հստակ կերպով, ինչույց է դնում արտակարգ և անկանխելի հանգամանքների ուղղակի պատճառահետևանքային կապի առկայության անհրաժեշտությունը կոնկրետ ստեղծված իրավիճակի, պայմանների հետ, առանց որի անհաղթահարելի ուժի առկայության մասին խոսք չի կարող լինել: Այսինքն՝ արտակարգ հանգամանքների ներքո կարող են ընկալվել միայն այն բոլոր իրավիճակները որոնց առկայության դեպքում ապահովվում է պատճառահետևանքային կապը այդ հանգամանքների և պարտապանի՝ իր պարտավորությունը չկատարելու փաստի միջև: Նման մոտեցում է ամրագրել նաև ՀՀ ներպետական դատական համակարգը: Մասնավորապես՝ ՀՀ Շիրակի Մարզի Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՇԴ-3/1497/02/20 քաղաքացիական գործով արձանագրվել է, որ որոշակի հանգամանքների՝ անհաղթահարելի ուժ դիտարկվելու համար դրանք օբյեկտիվորեն անկանխելի կամ կողմերի միջև նախօրոք որպես անհաղթահարելի ուժ դիտարկվելը բավարար պայման չէ, այլ անհրաժեշտ է նաև ուղղակի պատճառահետևանքային կապի առկայությունը պարտավորության չկատարման և անկանխելի բնույթ ունեցող հանգամանքների միջև, այսինքն՝ պայմանագրով որոշակի իրավիճակների գոտ առաջացումը դեռևս հիմք չէ այն անհաղթահարելի ուժ համարելու համար, քանի դեռ այդ իրավիճակների պատճառով անհնարին չի դարձել պարտավորության կատարումը:

Անհաղթահարելի ուժի գոյությունը պայմանա-

վորող հաջորդ տարրը տվյալ հանգամանքների «անկանխելի» լինելն է: Այստեղ հարկ է բացահայտել այն հարցերի շրջանակը, թե առաջին հերթին ի՞նչ է ենթադրում հանգամանքների անկանխելիությունը և արդյո՞ք այն ներառում է նաև հանգամանքների անկանխատեսելիության բաղադրատարրը: Տվյալ հարցերի վերաբերյալ ուսումնասիրելով ՀՀ դատական պրակտիկան, կարող եմ նշել հետևյալը: Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանն իր որոշումներից մեկի շրջանակներում՝ բացահայտելով անհաղթահարելի ուժի հասկացության բովանդակությունը և անդրադառնալով այն հարցին, թե արդյոք հրկիզումը դիտվում է որպես արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանք, նշել է հետևյալը. «(...) Դատարանը հարկ է համարում նշել, որ անհաղթահարելի ուժ են հանդիսանում արտակարգ և անկանխելի այն դեպքերը, հանգամանքները և իրադարձությունները, որոնք առաջացել են անձի կամքից անկախ և պայմանավորված են այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Այդպիսիք են՝ տարերային աղետները, համաճարակները, բնական և տեխնածին աղետների հետևանքով արտակարգ և անկանխելի հանգամանքները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (ջրհեղեղ, փոթորիկ, երկրաշարժ, պատահողմ, ձնաբուք, սողանք և այլն), ահաբեկչությունը, պատերազմը, ապստամբությունը և այլն: Անհաղթահարելի ուժ չի հանդիսանում հրկիզումը, որպիսի գործողությունը պայմանավորված է անձի վարքագծով, և այն կարող է դրսևորվել անձի մեղքի երկու ձևերով՝ և՛ դիտավորության, և՛ անգգուշության, որպիսի պայմաններում հրկիզումը կամ գույքի ոչնչացմանն ուղղված գործողություններն ինքնին չեն հանդիսանում ֆորսմաժորային իրավիճակներ²: Իր հերթին Վերաքննիչ դատարանը անդրադառնալով «անհաղթահարելի ուժ» հասկացության բովանդակությանը, նշել է հետևյալը. «(...) անհաղթահարելի ուժը իրավական եզրույթ է, որը ենթակա է գնահատման դատարանի կողմից: Օրենսդիրը նախատեսել է, թե ինչպիսի հանգամանքների հաշվառմամբ դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է գնահատի որոշակի հանգամանքի անհաղթահարելի ուժ լինելը: Դրանք են՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի լինելը, որը կբացառեր անձի կողմից իր իրավունքների և պարտականությունների կատարումը: Վերաքննիչ դատարանի համոզմամբ՝ անհաղթահարելի ուժը օբյեկտիվ բնույթի հատկանիշների ամբողջություն է, որոնք թեև մարդկանց կողմից կարող են կանխատեսվել կամ ոչ, բայց անհնար է դրանց ազդեցության կանխումը³:»:

Արդյունքում, ամբողջացնելով վերոհիշյալ դիրքորոշումները, կարող եմ արձանագրել, որ հան-

գամանքների անկանխելիությունը ենթադրում է ստեղծված հանգամանքների ազդեցության հաղթահարման օբյեկտիվ անհնարինություն, ընդ որում՝ որևէ կերպ կապված չլինելով դրանց կանխատեսելիության չափանիշի հետ: Այնուամենայնիվ, գտնում եմ, որ կանխատեսելիության չափանիշի անտեսումը անհաղթահարելի ուժի որակյալ հարցում արդարացված մոտեցում չէ: Նման մոտեցման պարագայում ստացվում է, որ անգամ այն դեպքում, երբ պարտապանը օբյեկտիվորեն անհրաժեշտ շրջահայացություն ցուցաբերելու դեպքում կարող էր կամ պարտավոր էր կանխատեսել ստեղծված հանգամանքների ի հայտ գալը, ազատվելու է վրա հասնող պատասխանատվությունից, ինչը, հատկապես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների դեպքում անընդունելի է՝ հաշվի առնելով Օրենսգրքի 2-րդ հոդվածի կարգավորումները: Օրենսգրքի 417 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անհաղթահարելի ուժի առկայությունը ազատում է ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում պարտապան հանդիսացող անձին հետագա պատասխանատվությունից, մինչդեռ Օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը: Արդյունքում, նման կարգավորման համատեքստում պատշաճ ուշադրություն չի դարձվում այն փաստին, որ անձը, մտնելով ձեռնարկատիրական հարաբերությունների մեջ պարտավոր է ցուցաբերել աշարժության, զոյություն ունեցող իրականությունում օբյեկտիվ գործոնները հաշվի առնելու կարողության և պատրաստակամության առավել բարձր մակարդակ, քան հասարակական այլ հարաբերությունների մասնակիցները, իսկ դրանց բացակայության դեպքում պետք է նախատեսվեն պատասխանատվության առավել բարձր տեսակներ, քանի որ շահույթ ստանալու նպատակ հետապնդող անձի գործունեության քիչ թե շատ «սանձող» գործոնը սուբյեկտի կողմից իր գործունեության իրականացումն է սեփական ռիսկով: Սեփական ռիսկով գործունեության իրականացման պահանջը պետք է ենթադրի անձի կողմից անհաղթահարելի ուժի առաջացման համար հիմք հանդիսացող հանգամանքների կանխատեսման որոշակի օբյեկտիվ պահանջ, որի պայմանները չկատարելու դեպքում՝ անձը պետք է կրի անշրջահայացության բացասական հետևանքները, ինչը կհավասարակշռի նաև ձեռնարկատիրական հարաբերությունների մյուս կողմի շահերը: Դիցուք՝ եթե մատակարարման պայմանագրի շրջանակներում Ա-ն պարտավորվում է նշված ժամկետներում՝ ձեռքով եղանակային պայմաններում, մատակարարել որոշակի ապրանքներ Բ-ին, ապա տվյալ դեպքում, եթե ճանապարհը անցնելու է աշխարհագրական այնպիսի տեղանքով, որտեղ մեծ է ձնաբքերի և դրա

հետևանքով ճանապարհների փակման հնարավորությունը, ապա նման իրավիճակի վրա հասնելու դեպքում, չնայած այդ հանգամանքների անկանխելիությանը և արտակարգ բնույթին, Ա-ն պետք է պատասխանատվություն կրի ապրանքների՝ նշված ժամկետներում չմատակարարման համար, քանի որ ինքնին ճանապարհների փակման հնարավորությունը (տվյալ դեպքում՝ անհաղթահարելի ուժի առկայությունը) կանխատեսելի էր, և կարող էր իրենով բացառել Ա-ի մտնելը մատակարարման հարաբերությունների մեջ և համապատասխան պարտավորությունների ստանձնելը, եթե Ա-ն շահույթ ստանալու նպատակը չգերադասեր հնարավոր ռիսկերի առկայությանը:

Համեմատության մեջ դնելով ՀՀ ներպետական կարգավորումները՝ արտասահմանյան համադրելի նորմերի հետ, կարող ենք փաստել, որ ի տարբերություն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության իրավական կարգավորումների, Ֆրանսիայի, Անգլիայի, Էստոնիայի, Ռումինիայի համապատասխան օրենսդրական ակտերում անհաղթահարելի ուժի առկայության պարտադիր բաղադրատարր է համարվում պայմանագիրը կնքելու պահին դրա անկանխատեսելիությունը: Համաձայն Անգլիական իրավունքի՝ որոշակի հանգամանքները համարվում են ֆորսմաժորային, եթե այն հանգեցնում է իրավական կամ ֆիզիկական սահմանափակման՝ պայմանագրի կատարման տեսանկյունից (ընդ որում՝ այն չպետք է առաջացած լինի պայմանագրի կողմի գործողության, անգոյության, անփութության կամ բացթողման հետևանքով) և որը միաժամանակ և՛ անկանխատեսելի է, և՛ անդիմադրելի:

Միջազգային առևտրային պայմանագրերի վերաբերյալ Ունիդրուայի սկզբունքների (այսուհետ նաև՝ Ունիդրուայի սկզբունքներ) 7.1.7-րդ հոդվածի համաձայն՝ անձի կողմից իր պարտավորության չկատարելը արդարացված է համարվում այն դեպքում, երբ նա ապացուցում է, որ պարտավորության չկատարելը պայմանավորված է եղել իր վերահսկողությունից դուրս գտնվող արգելքի առկայությամբ և ողջամտորեն հնարավոր չէր ակնկալել, որ այդ խոչընդոտը հաշվի կառնվեր պայմանագիրը կնքելիս՝ դրա հետևանքներից խուսափելու կամ կանխելու նպատակով:

Միաժամանակ «Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրի մասին (CMR)» կոնվենցիայի 17-րդ հոդվածը ամրագրելով փոխադրողի՝ բեռի կորստի, վնասվածքի կամ ուշացման համար պատասխանատվությունից ազատելու հիմքերը չի կիրառվում ֆորսմաժոր եզրույթը, իսկ Կոնվենցիայի համապատասխան մեկնաբանություններում արտահայտված դիրքորոշման համաձայն՝ Կոնվենցիայի 17-րդ հոդվածում առկա սահմանման (հանգամանքներ,

որոնցից փոխադրողը չէր կարող խուսափել և չէր կարող կանխել դրանց հետևանքները) և ֆորսմաժորի առանցքային տարբերությունը կայանում է հենց կանխատեսելիության չափանիշի մեջ¹⁰:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև 2020 թվականի ընթացքում տարածված համավարակի՝ COVID-19-ի ազդեցությունը պայմանագրային իրավահարաբերությունների մասնակիցների կողմից իրենց պարտավորությունների կատարման վրա: COVID-19-ը որպես անհաղթահարելի ուժ դիտարկելու և դրա՝ կատարման անհնարինության հանգեցնելու տեսանկյունից՝ շատ կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ պայմանագրի կողմի՝ իր պարտավորությունների կատարման անհնարինությունը պետք է հետևանք լինի անմիջականորեն COVID-19-ի, այլ ոչ թե վիրուսի դեմ հասարակության, կառավարության կամ բիզնես ոլորտի ներկայացուցիչների կողմից ձեռնարկված միջոցառումների: Այս առումով հարկ է հիշատակել ԱՄՆ Կոլումբիայի շրջանային դատարանի արտահայտած դիրքորոշումը, որի համաձայն. «Նախադեպային իրավունքի շրջանակներում պարզորոշ է այն հանգամանքը, որ մարդու միջամտությունը կամ ազդեցությունը որևէ իրավիճակի վրա բացառում է դրա՝ «Act of God» - անհաղթահարելի ուժ համարվելու հնարավորությունը»: Հետաքրքիր է նաև ԱՄՆ դատարանների կողմից COVID-19 հետևանքով դպրոցների փակման արդյունքում ուսուցիչներին իրենց աշխատավարձերը վճարելու հետ կապված վեճերը: Նմանատիպ գրեթե բոլոր գործերով, դատարաններն այն տեսակետն են արտահայտել, որ այն դեպքում, երբ պայմանագրային պարտականությունների կատարումն անհնարին է անհաղթահարելի ուժի հետևանքով, դպրոցները ազատվում են պատասխանատվությունից կամ աշխատավարձ վճարելու իրենց պարտականությունից, սակայն այն դեպքում, երբ դպրոցները փակվել են վարակիչ հիվանդության առկայության հետևանքով, իսկ ուսուցիչը այդ ընթացքում պատրաստակամ էր իր պայմանագրային պարտավորությունները կատարել, ուսուցչի աշխատավարձի ոչ մի նվազեցում այդ ժամանակահատվածի համար չէր կարող կատարվել (չնայած այն հանգամանքին, որ դպրոցի ղեկավարությունը պնդում էր, որ իրավունք ունի չվճարել աշխատավարձերը անհաղթահարելի ուժի առկայությամբ պայմանավորված դպրոցների փակման հետևանքով): Այլ խոսքով, տվյալ դեպքում դատարանները դպրոցների փակվելը չեն դիտարկել որպես ֆորսմաժորի առկայության հետևանք, քանի որ դա պայմանավորված է եղել մարդկանց կողմից վարակը կանխարգելելու համար իրականացվող միջոցառումներով: Այս համատեքստում կարելի է մատնանշել նաև Rembrandt Enterprises v. Dahmes Stainless (No. 15-cv-4248, 2017 WL 3929308 (N.D.

Iowa Sept. 7, 2017)) գործը, որով ֆերմերը ձգտում էր չեղարկել չորանոցի ստեղծման պատվերը՝ համաձայն պայմանագրում առկա ֆորսմաժորային դրույթի: Թռչնի գրիպը բացասաբար էր ազդել ֆերմերի հավերի ձվերի արտադրության վրա՝ ստիպելով նրա հետ կանգնել նոր շինություն ստեղծելու իր պլաններից: Դատարանը փաստեց, որ, բանի որ թռչնի գրիպը չէր ազդել ֆերմերի չորանոցը պատրաստելու ունակության վրա՝ ֆորսմաժորի պնդանքները բացառվում է տվյալ իրավիճակում՝:

Հնդկաստանում Ֆինանսների նախարարության 2020 թվականի փետրվարի 19-ին իրապարակած հուշագրում նշվում է, որ COVID-19 բռնկման հետևանքով ապրանքների մատակարարման շղթաների սառեցումը ֆորսմաժորային իրադարձություն է: Հուշագիրը հստակեցնում է նաև, որ COVID-19-ը պետք է դիտարկել որպես «բնական աղետի դեպք»¹³:

Իսկ օրինակ, Ֆրանսիայի Կառավարությունը COVID-19 պանդեմիան հայտարարել է որպես ֆորսմաժորային իրավիճակ: Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության տարածած հաղորդագրության համաձայն, «կորոնավիրուսը ընկերությունների համար ֆորսմաժորային իրադարձություն է», և նախարարությունը հանրային գնումների շրջանակներում տեղի ունեցած մատակարարման ուշացումների համար չի կիրառելու տուգանքներ¹⁵: 2020 թվականի մարտի 12-ին Կոլմարի վերաբերյալ դատարանը առաջին որոշումը կայացրեց Ֆրանսիայում, որով COVID-19-ը համարվեց ֆորսմաժորային իրադարձություն՝ գտնելով որ բոլոր անհրաժեշտ հատկանիշները՝ արտաքին ազդեցությունը, անկանխելիությունը և անկանխատեսելիությունը տվյալ իրավիճակում առկա էին¹⁶: Սակայն, ամեն դեպքում, նման որակումը պայմանավորված է եղել նաև գործի փաստական հանգամանքներով:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ անհաղթահարելի ուժի որոշման պայմանների շրջանակը որոշակիորեն նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես՝ Օրենսգրքում հիմնական կարգավորման բեռը թողնելով պայմանագրային հարաբերությունների դաշտում, որպիսի մոտեցումը ընդունելի չէ՝ հաշվի առնելով Հայաստանի մայրցամաքային իրավական համակարգի երկրների շարքին պատկանելու փաստը: Օրենսգրքում ներառվող անհաղթահարելի ուժին վերաբերող կարգավորումների շրջանակը պետք է ընդլայնվի, և պետք է հստակեցվեն անհաղթահարելի ուժի որոշման պայմանները՝ դրանում ընդգրկելով այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են տվյալ հանգամանքների կանխատեսելիությունը և դրանց ունեցած ուղղակի ազդեցությունը (պատճառահետևանքային կապը) պարտապանի կողմից իր պարտավորությունների կատարման անհնարինության վրա: Ինչ վերաբերում է COVID-19 համավա-

րակը՝ որպես անհաղթահարելի ուժ դիտարկելուն, ապա թե ներպետական թե միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ գերակշռող դեպքերում COVID-19-ի առկայությունը անհաղթահարելի ուժի փաստման համար բավարար հիմքեր է ստեղծել՝ որոշ դեպքերում, սակայն, ֆորսմաժորի գոյությունը կապելով անմիջականորեն COVID-19-ի առկայության այլ ոչ թե վիրուսի դեմ հասարակության, կառավարության կամ բիզնես ոլորտի ներկայացուցիչների կողմից ձեռնարկված միջոցառումների հետևանք լինելու հետ:

Անհաղթահարելի ուժի առաջացնող իրավական հետևանքների էությունը պարզելու համար պետք է նախ անդրադարձ կատարենք Օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասին, որի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Տվյալ կարգավորման բովանդակությունից պարզ է, որ անհաղթահարելի ուժի առկայությունը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս՝ համարվում է այն իրականացնող սուբյեկտի պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում պատասխանատվություն կրելը բացառող՝ պատասխանատվությունից ազատող հիմք, ընդ որում՝ ազատող միակ, այն էլ դիսպոզիտիվ հիմքը, հետևաբար անհաղթահարելի ուժի առկայության՝ Օրենսգրքով նախատեսված առաջնային իրավական հետևանքը անձին, տվյալ դեպքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտին, պատասխանատվությունից ազատելն է: Սակայն նման կարգավորման պարագայում բնականաբար հարց է առաջանում անհաղթահարելի ուժի ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող պարտապանների վրա ունեցած իրավական հետևանքների վերաբերյալ: Այս դեպքում, անդրադարձ կատարելով Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասին՝ կարող ենք նկատել, որ համաձայն դրա՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Արդյունքում՝ ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող պարտապանների համար սահմանված է մեղքի առկայությամբ պայմանավորված պատասխանատվության սկզբունքը, ինչն, իր հերթին, բացառում է պատասխանատվության առկայությունը անհաղթահարելի ուժի գոյության պայմաններում: Հետևաբար, անհաղթահարելի ուժի առկայության իրավական

առաջնային ազդեցությունը այս երկու տեսակ սուբյեկտների պարագայում նույնական է, և միևնույն ժամանակ, հարկ է հատուկ ընդգծել, որ տվյալ կարգավորումները իրենց բնույթով դիսպոզիտիվ են և կարող են «չեզոքացվել» պայմանագրային կարգավորումների շրջանակներում՝ սահմանելով ընդհուպ մինչև լիիրավ պատասխանատվություն՝ անկախ մեղքի կամ անհաղթահարելի ուժի առկայությունից: Որպես օրինակ կարող ենք մատնանշել, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի՝ իր վճիռներից մեկում արտահայտած դիրքորոշման համաձայն¹⁷ այն դեպքում, երբ կողմերը սահմանել էին անհաղթահարելի ուժի միայն որոշակի առանձին դրսևորումների առկայության դեպքում պարտապանին պատասխանատվությունից ազատման հնարավորություն՝ մնացյալ ֆորսմաժորային իրավիճակների դեպքում սահմանելով պատասխանատվության առկայություն, ապա տվյալ դեպքում, ըստ դատարանի, պարտապանն արդեն չէր կարող հղում կատարելով Օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասին և ազատվել պատասխանատվությունից:

Հռոմեական իրավունքում՝ պարտապանը, որպես կանոն, պատասխանատվություն չէր կրում պատահարի հետևանքով պարտավորությունների չկատարման համար և անհաղթահարելի ուժը դիտարկվում էր որպես պատահարի առանձնահատուկ դրսևորում: Այնուամենայնիվ, այս կանոնից կար բացառություն, որի համաձայն՝ անձը չէր ազատվում պատասխանատվությունից, եթե պատահարը առաջացել էր պարտապանի կողմից՝ իր պարտավորության կատարումը ուշացնելու հետևանքով: Նմանատիպ ճանապարհով է գնացել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որի 421-րդ հոդվածի համաձայն՝ կատարման կետանց թույլ տված պարտապանը պարտատիրոջ առաջ պատասխանատվություն է կրում կետանցով պատճառված վնասների և կետանցի ժամանակ պատահաբար առաջացած կատարման անհնարինության հետևանքների համար: Այսինքն՝ չնայած Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորմանը առ այն, որ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար, պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Տվյալ դեպքում հատուկ կարգավորման շրջանակներում նախատեսվում է կետանցի դեպքում պարտապանի պատասխանատվությունը, անկախ մեղքի առկայությունից: Հետևաբար, անգամ այն դեպքում, երբ անհաղթահարելի ուժի առկայության հետևանքով արդեն կետանցի ժամանակահատվածում անձը չկատարի իր ստանձնած պարտավորությունները, անհաղթահարելի ուժի առկայությունը չի ազատելու կողմին պատասխանատվությունից:

Հարկ են համարում անդրադարձ կատարել

նաև Ունիդրուայի սկզբունքներում առկա կարգավորումներին, որի, մասնավորապես, 7.1.7-րդ հոդվածի համաձայն՝ անձի կողմից իր պարտավորության չկատարելը արդարացված է համարվում այն դեպքում, երբ նա ապացուցում է, որ պարտավորության չկատարելը պայմանավորված է եղել իր վերահսկողությունից դուրս գտնվող արգելքի առկայությամբ և ողջամտորեն հնարավոր չէր ակնկալել, որ այդ խոչընդոտը հաշվի կառնվեր պայմանագիրը կնքելիս՝ դրա հետևանքներից խուսափելու կամ կանխելու նպատակով¹⁸: Եթե խոչընդոտը ժամանակավոր է, ապա պարտավորության չկատարումը կարող է արդարացված համարվել միայն այն ժամանակահատվածի համար, որը ողջամիտ կլինի՝ հաշվի առնելով խոչընդոտի ունեցած ազդեցությունը պայմանագրի կատարման վրա: Ունիդրուայի սկզբունքներով նաև կողմի վրա պարտականություն է դրվում մյուս կողմին ծանուցելու խոչընդոտի առկայության և դրա՝ իր ստանձնած պարտավորությունների կատարման վրա ունեցած ազդեցության մասին: Ընդ որում, ծանուցումը չուղարկելու դեպքում (այն պահից սկսած ողջամիտ ժամանակահատվածում, երբ կողմը, որը չի կարողանում կատարել իր պարտավորությունները, իմանում է կամ պարտավոր էր իմանալ խոչընդոտի առկայության մասին) պարտապանը պատասխանատվություն է կրելու կողմին պատճառված վնասի համար: Որպես այդպիսին տվյալ հոդվածը չի սահմանափակում պայմանագրով իր ակնկալիքը՝ չստացած կողմի պայմանագիրը լուծելու իրավունքը, եթե պայմանագրային պարտավորության խախտումը էական բնույթ ունի: Ֆորսմաժորային դրույթը հնարավորություն է տալիս նաև պարտավորությունները չկատարած կողմին վնասների հատուցման պարտականությունից ազատելու: Որպես կանոն, ստեղծված «բարիերը» ժամանակավոր է լինում և ուղղակի հետաձգում է պարտավորության կատարումը և շատ դեպքերում այն լրացուցիչ ժամանակը, որը տրամադրվելու է կողմին՝ իր պարտավորությունների կատարման համար կարող է ավելի կարճ (կամ նույնիսկ երկար) լինել ընդհատման տևողությունից, քանի որ այս պարագայում կարևորվում է այն, թե ինչ ազդեցություն է ունեցել խոչընդոտը պարտավորության կատարման ընթացքի վրա:

Արդյունքում ակնհայտ է, որ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, Ունիդրուայի սկզբունքներով ամրագրված կարգավորումները հանգեցնում են անհաղթահարելի ուժի գոյության առաջնային այլ իրավական հետևանքի՝ պայմանագրային պարտավորության կատարումից ազատելը անհաղթահարելի ուժի առկայության ողջ ժամանակահատվածում, իսկ պատասխանատվությունից (այդ թվում՝ վնասների հատուցման) ազատվելը այդ ընթացքում պարտավորության

չկատարման համար կրում է արդեն ածանցյալ բնույթ, քանի որ, ըստ էության, պարտապանը անհաղթահարելի ուժի առկայության ժամանակահատվածում առհասարակ ազատված է իր պարտավորության կատարումից՝ չկատարումն արդարացված է, հետևաբար, պարտավորությունն ինքնին այդ ժամանակահատվածում առկա չէ, ինչը իր հերթին խոսում է պատասխանատվության հիմքերի բացակայության մասին:

Ունիդրուայի սկզբունքների 6.2.2 կետով առկա են կարգավորումներ նաև hardship-ի (պարտավորությունների կատարման խոչընդոտներ, դժվարություններ, որոնք արմատականորեն փոխում են պայմանագրի նշանակությունը, էությունը, «հավասարակշռությունը») վերաբերյալ: Հատկանշական է, որ այս դեպքում նույնպես հնարավորություն կա պարտավորությունների չկատարման համար պատասխանատվությունից խուսափելու՝ հղում կատարելով խոչընդոտների առկայությանը, սակայն տվյալ դեպքում խոսքը գնում է առաջին հերթին ոչ թե պայմանագրի կատարումից ամբողջականորեն հրաժարվելու, այլ պայմանագրի որոշակի դրույթների վերաբերյալ վերստին բանակցելու հնարավորություն ստեղծելու և պահպանելու ու ըստ դրա արդեն կատարելու պայմանագիրը՝ հիմք ընդունելով արդեն իսկ պայմանագրի փոփոխված դրույթները: Նմանատիպ կարգավորումներ են նախատեսվում նաև Ֆրանսիայի օրենսդրությամբ: Մասնավորապես՝ Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 1195-րդ հոդվածի համաձայն՝ hardship կարող է կիրառվել, եթե առկա են որոշակի անկանխատեսելի հանգամանքներ, որոնք պարտավորության կատարումը չափազանց դժվար են դարձնում, և եթե կողմերը չեն համաձայնվել հանգամանքների նման փոփոխությունների ռիսկը կրելուց: Այնուամենայնիվ, hardship-ի կիրառումը թույլ է տալիս միայն վերստին բանակցելու պայմանագրի պայմանները և չի հանգեցնում պարտավորության դադարեցմանը. կողմերը պետք է շարունակեն կատարել իրենց պայմանագրային պարտավորությունները²⁰:

Անհաղթահարելի ուժի՝ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված հետևանքների շրջանակում կարևոր է նաև այն հարցի հստակեցումը, որ ոչ միայն այն կողմը, ում օգտին որևէ գործողություն չի կատարվել իրավունք չունի վնասների հատուցում պահանջելու հակառակ կողմից, այլ նաև հակառակ կողմը պետք է գուրկ լինի նման հնարավորությունից (օրինակ, եթե ապրանքը ուշացնելու պատճառով ստիպված է եղել նավահանգիստում ավելորդ վճարումներ կատարել)²¹: Այնուամենայնիվ, ՀՀ օրենսդրությամբ առկա չէ որևէ կարգավորում այս խնդրի հետ կապված, ինչը լրացուցիչ տարակարծությունների առիթ կարող է տալ՝ միաժամանակ չբացառելով դրանց կարգավորումը պայմանագրերի շրջանակներում:

Այսպիսով, ՀՀ օրենսդրությամբ անհաղթահարելի ուժի ազդեցության առաջնային իրավական հետևանքը՝ պարտապանին պատասխանատվությունից ազատելն է, ինչը ենթադրում է՝ հարաբերությունների երկու կողմերից էլ միմյանց վնասների հատուցման պահանջ ներկայացնելու արգելքի առկայություն: Սակայն, դրանից զատ, անհաղթահարելի ուժը կարող է առաջացնել այլ իրավական հետևանքներ: Նախ՝ անհաղթահարելի ուժի առկայությունը կարող է հանգեցնել պարտապանի կողմից իր պարտականությունների կատարման անհնարինության: Առհասարակ տեսական գրականության մեջ կա տեսակետ, որ անհաղթահարելի ուժը դա միշտ պարտականությունների կատարման անհնարինությունն է, և պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից ազատելը²²: Այնուամենայնիվ, ինքնին անհաղթահարելի ուժի առկայությունը չի ենթադրում պարտականությունների կատարման անհնարինություն, այլ կատարման անհնարինությունը միայն անհաղթահարելի ուժի առկայության հնարավոր իրավական հետևանքներից մեկն է (կատարման անհնարինություն կարող է առաջանալ, եթե ստեղծված իրավիճակը ունի մշտական բնույթ և բացառում է իրավահարաբերության բովանդակությունը կազմող գործողությունները կատարելու հնարավորությունը): Անհաղթահարելի ուժի առկայության մյուս հնարավոր իրավական հետևանքներն են՝ հանգամանքների էական փոփոխությունը, ինչպես նաև հայցային վաղեմության ժամկետի կասեցումը:

- ¹ Տե՛ս, օրինակ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ-15049/02/20 գործով 22.03.2021թ. կայացրած վճիռը:
- ² Տե՛ս, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ-15049/02/20 գործով 22.03.2021թ. կայացրած վճիռը:
- ³ Տե՛ս, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԼԴ-0782/02/20 գործով 22.09.2020 թ. կայացրած որոշումը:
- ⁴ Տե՛ս, Ռուսաստանի Դաշնության Քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է Պետական Դումայի կողմից 21.10.1994թ., 401-րդ հոդված, էլ. հղումը՝ https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/
- ⁵ Տե՛ս, Ֆրանսիայի Քաղաքացիական օրենսգիրք, հոդված 1218, էլ. հղումը՝ <https://www.legifrance.gouv.fr/download/pdf/legiOrKali?id=LEGITEXT000006070721.pdf&size=1,2%20Mo&pathToFile=/LEGI/TEXT/00/00/06/07/07/21/LEGITEXT000006070721/LEGITEXT000006070721.pdf&title=Code%20civil>
- ⁶ Տե՛ս, Էստոնիայի «Պարտավորությունների մասին» օրենք, 103, 104 պարագրաֆներ, էլ. հղումը՝ 25.04.2023թ. դրությամբ <https://www.riigiteataja.ee/en/eli/506112013011/consolide>:
- ⁷ Տե՛ս, Ռումինիայի Քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 17.07.2009թ., 1351-րդ հոդված, էլ. հղումը՝ <https://www.codulcivil.ro/art-1351-Fora-majora-si-cazul-fortuit/>
- ⁸ McKendrick Ewan, Force Majeure and Frustration of Contract, Published December 13, 2013 by Informa Law from Routledge, էջ 8
- ⁹ Տե՛ս, Unidroit Principles Of International Commercial Contracts 2016, <https://www.unidroit.org/instruments/commercial-contracts/unidroit-principles-2016>:
- ¹⁰ Տե՛ս, «Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրի (CMR)» պայմանագրի մեկնաբանություններ, հրապարակված ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայքում, էջ 44, էլ. հղումը 10.12.2021թ. դրությամբ <http://www.unece.org/fileadmin/DAM/trans/doc/2006/sc1cmr/commentary.pdf>:
- ¹¹ Տե՛ս, Jimenez Marco J., Contract Law: A Case and Problem Based Approach, published by Wolters Kluwer in New York, Second Edition, 2021, էջ 1036:
- ¹² Տե՛ս, United States District Court, D. Columbia American National Red Cross v. Vinton Roofing Company, 629 F. Supp. 2d 5 (D.D.C. 2009):
- ¹³ Տե՛ս, նույն տեղում (1), էջ 1036:
- ¹⁴ Տե՛ս, Block Eric S., Kristian Brabander, “The Impact of COVID-19 on Contractual Obligations: Force Majeure and Frustration”, published at Mccarthy Tetrault LLC website, 2020, p. 1, էլ. հղումը 10?12?2021թ. դրությամբ՝ <https://www.mccarthy.ca/en/insights/articles/impact-covid-19-contractual-obligations-force-majeure-and-frustration>:
- ¹⁵ Տե՛ս, հետևյալ հղմամբ՝ https://www.economie.gouv.fr/files/files/directions_services/daj/fiche-passation-marches-situation-crise-sanitaire.pdf:
- ¹⁶ Տե՛ս, Administrative Court of Colmar, France, chamber 6, 12 March 2020, Decision n° 20/01098:
- ¹⁷ Տե՛ս, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ-29991/02/20 քաղաքացիական գործով 23.10.2020 թ. կայացրած վճիռը:
- ¹⁸ Տե՛ս, Unidroit Principles Of International Commercial Contracts 2016, Published by the International Institute for the Unification of Private Law (UNIDROIT), Rome <https://www.unidroit.org/instruments/commercial-contracts/unidroit-principles-2016>:
- ¹⁹ Տե՛ս, Commentary on Unidroit Principles Of International Commercial Contracts, Published by the International Institute for the Unification of Private Law (UNIDROIT), Rome, 2016, էջ 241, <https://www.unidroit.org/instruments/commercial-contracts/unidroit-principles-2016>.
- ²⁰ Տե՛ս, Valeriya Tsekhanska, DLA Piper, GEG ENS Droit, Paris, “VACCINE AGAINST NON-PERFORMANCE LIABILITY? COVID-19 PANDEMIC AS FORCE MAJEURE IN FRENCH ARBITRATIONS”, p. 14 : Russian Arbitration Association, N Russian Arbitration Association, N 3 (18) April 2020, Arbitration.ru (Издание о международном арбитраже)- Force Majeure- էջ 91.
- ²¹ Տե՛ս, McKendrick Ewan, Force Majeure and Frustration of Contract, Published December 13, 2013 by Informa Law from Routledge, էջ 245,
- ²² Տե՛ս, Кайгородова А.С. Юридический форс-мажор: миф или реальность? // Москва, 2000, С. 23.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Block Eric S., Kristian Brabander, “The Impact of COVID-19 on Contractual Obligations: Force Majeure and Frustration”, published at Mccarthy Tetrault LLC website, 2020, p. 1, էլ. հղումը 10.12.2021թ. դրությամբ՝ <https://www.mccarthy.ca/en/insights/articles/impact-covid-19-contractual-obligations-force-majeure-and-frustration>:
- Commentary on Unidroit Principles Of International Commercial Contracts, Published by the International Institute for the Unification of Private Law (UNIDROIT), Rome, 2016, էջ 241, <https://www.unidroit.org/instruments/commercial-contracts/unidroit-principles-2016>:
- Jimenez Marco J., Contract Law: A Case and Problem Based Approach, published by Wolters Kluwer in New York, Second Edition, 2021, էջ 1036:

4. McKendrick Ewan , Force Majeure and Frustration of Contract, Published December 13, 2013 by Informa Law from Routledge, էջ 8, 245:
5. Unidroit Principles Of International Commercial Contracts 2016, Published by the International Institute for the Unification of Private Law (UNIDROIT), Rome, <https://www.unidroit.org/instruments/commercial-contracts/unidroit-principles-2016>:
6. Valeriya Tsekhanska, DLA Piper, GEG ENS Droit, Paris, “VACCINE AGAINST NON-PERFORMANCE LIABILITY? COVID-19 PANDEMIC AS FORCE MAJEURE IN FRENCH ARBITRATIONS”, p. 14 : Russian Arbitration Association, N Russian Arbitration Association, N 3 (18) April 2020, Arbitration.ru (Издание о международном арбитраже)- Force Majeure- էջ 91:
7. Кайгородова А.С. Юридический форс-мажор: миф или реальность? // Москва, 2000.
8. «Բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների պայմանագրի (CMR)» պայմանագրի մեկնաբանություններ, հրապարակված ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի պաշտոնական կայքում, էջ 44, էլ. հղումը 10.12.2021թ. դրությամբ
<http://www.unece.org/fileadmin/DAM/trans/doc/2006/sc1cmr/commentary.pdf>:
9. Էստոնիայի «Պարտավորությունների մասին» օրենք, 103, 104 պարագրաֆներ, էլ. հղումը՝ 25.04.2023թ. դրությամբ <https://www.riigiteataja.ee/en/eli/506112013011/consolide>.
10. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք (ընդունվել է ԱԺ կողմից 05.05.1998 թվականին, ուժի մեջ մտել 01.01.1999 թվականին, ՀՀՊՏ 1998.08.10/17(50)):
11. Ռումինիայի Քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 17.07.2009թ., 1351-րդ հոդված, էլ. հղումը՝ <https://www.codulcivil.ro/art-1351-Fora-majora-si-cazul-fortuit/>:
12. Ռուսաստանի Դաշնության Քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է Պետական դումայի կողմից 21.10.1994թ., 401-րդ հոդված, էլ. հղումը՝ https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/:
13. Unidroit Principles Of International Commercial Contracts 2016, <https://www.unidroit.org/instruments/commercial-contracts/unidroit-principles-2016>.
14. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/15049/02/20 գործով 22.03.2021թ. կայացրած վճիռը:
15. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/15049/02/20 գործով 22.03.2021թ. կայացրած վճիռը:
16. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/29991/02/20 գործով 23.10.2020 թ. կայացրած վճիռը:
17. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՇԴ-3/1497/02/20 գործով 25.06.2021թ. վճիռը:
18. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԼԴ/0782/02/20 գործով 22.09.2020 թ. կայացրած որոշումը,
19. United States District Court, D. Columbia American National Red Cross v. Vinton Roofing Company, 629 F. Supp. 2d 5 (D.D.C. 2009).
20. Administrative Court of Colmar, France, chamber 6, 12 March 2020, Decision n° 20/01098:

Арте́м Суджа́н
Советник министра юстиции РА

РЕЗЮМЕ

Понятие непреодолимой силы, условия определения и правовые последствия

Изучение непреодолимой силы как института, исключающего ответственность за нарушение обязательств, будет проводиться в статье, акцентируя внимание на условиях, предопределяющих наличие обстоятельств непреодолимой силы, и правовых последствиях, которые она вызывает.

В результате проведенного в рамках статьи исследования и анализа, будут выявлены спорные вопросы, возникающие на практике, будет выделена концептуальная сущность форс-мажора, предлагая включить элемент непредсказуемости в рамках условий определения обстоятельств непреодолимой силы. Будут указаны правовые последствия, созданные непреодолимой силой, в том числе освобождение должника от ответственности, невозможность исполнения, существенное изменение обстоятельств, приостановление течения срока исковой давности. Также будут затронуты вопросы квалификации пандемии COVID-19 как непреодолимой силы и порождаемых ею правовых последствий.

Ключевые слова: непреодолимая сила, освобождение от ответственности, COVID-19, чрезвычайное обстоятельство, непредвиденность, должник, возмещение убытков.

Artyom Sujyan
Adviser to the Minister of Justice of the RA

SUMMARY

The concept of force majeure, conditions of definition and legal consequences

In this scientific article the study of force majeure as a legal institution that excludes liability for breach of obligations will be carried out, focusing on the prerequisites of the existence of force majeure and the legal consequences it causes.

As a result of the study and analysis carried out within the framework of the article, the controversial issues that arise in practice will be revealed, the conceptual essence of force majeure will be uncovered, suggesting to include the element of unpredictability in the framework of the conditions for determining force majeure. The legal consequences of force majeure will be revealed, including the release of the debtor from responsibility, impossibility of performance, significant change of circumstances, suspension of the statute of limitations. Some reference will also be made to the issues of the qualification of the COVID-19 pandemic as a force majeure and the legal consequences it creates.

Key words: force majeure, exclusion of liability, COVID-19, emergency circumstances, unpredictability, debtor, compensation for damages.

Բնագիրը ներկայացվել է 10.05.2023թ.

Ընդունվել է տպագրության 16.05.2023թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Տ. Դավթյանը

ԱՐՄԱՆ ՀԱԿՈՒԶԱՆՅԱՆ

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի օգնական

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՊԱՐՓԱԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սույն գիտահետազոտական աշխատության շրջանակներում քննարկվում է առողջության համապարփակ ապահովագրության համակարգի՝ որպես բնակչության բոլոր խմբերի համար բժշկական հիմնական ծառայությունների ֆինանսական հասանելիության և պաշտպանվածության ինստիտուտի ներդրման ու կենսագործման առանձնահատկությունները, ներկայացվում են այդ համակարգի կիրառման միջազգային փորձը և ընդհանուր օրինաչափությունները: Առողջության համապարփակ ապահովագրության համակարգի առանձնահատկությունների հիման վրա ներկայացվում է դրա հնարավոր ազդեցությունը Հայաստանի Հանրապետության տնտեսության և սոցիալական միջավայրի վրա:

Հիմնադրադր - առողջապահական համակարգ, առողջության համապարփակ ապահովագրություն, առողջության ապահովագրության միասնական հիմնադրամ, առողջապահական ծառայություններ, «առողջության հարկ»

Դեռևս 2019թ-ին ՀՀ առողջապահության նախարարությունը շրջանառության մեջ է դրել առողջության համապարփակ ապահովագրության (այսուհետ՝ ԱՀԱ) համակարգի ներդրման հայեցակարգը և համապատասխան օրենքի նախագիծը: Նախագծով սահմանվում են ԱՀԱ համակարգը, ԱՀԱ ենթակա անձանց, ԱՀԱ փաթեթի շրջանակներում հատուցվող ծառայությունները, դեղերը և բժշկական նշանակության ապրանքները, ԱՀԱ հիմնադրամի ստեղծման և հիմնական ծառայությունների սկզբունքները, ԱՀԱ ծառայություններ մատուցող հաստատությունները, վեճերի լուծման կարգը:

ԱՀԱ համակարգի ներդրման հիմնական նպատակը պետության սոցիալական պատասխանատվության և բնակչության սոցիալական համերաշխության սկզբունքների հիման վրա առողջապահության կայուն ֆինանսավորման համակարգի ստեղծումն է, որը պետք է ապահովի բնակչության բոլոր խմբերի համար բժշկական հիմնական ծառայությունների ֆինանսական հասանելիություն և պաշտպանվածություն: Այդ համակարգը, սակայն, չի ենթադրում բժշկական բոլոր ծառայությունների անվճար մատուցում, այլ ապահովում է հավասարություն ու արդարություն և հիմնական բժշկական ծառայությունների ու հանրային առողջապահական միջամտությունների հասանելիություն բոլորին:

Ըստ էության, ԱՀԱ հայեցակարգի նպատակներն են.

- ապահովել բնակչության հիմնական բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ֆինանսական հասանելիությունը և պաշտպանվածությունը,
- բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների դիմաց կատարվող աղետալի

ծախսերի կրճատումը,

- առողջապահության բնագավառում ծախսվող գումարների արդյունավետության և նպատակայնության մակարդակի բարձրացումը,

- բուժօգնության որակի բարելավումը:

Վերոգրյալ նպատակները կյանքի կոչելու համար առաջարկվում է.

- կիրառել «առողջության հարկ»,

• պետական ծախսերի մեջ ավելացնել առողջապահությանը հատկացվող չափաբաժինը,

- սահմանել ծառայությունների փաթեթների ձևավորման հստակ սկզբունքներ բնակչության բոլոր խմբերի համար,

- ձևավորել հիմնադրամ, որը պետք է ապահովի ապահովագրության համար հավաքագրվող գումարների հաշվարկման և ծախսման արդյունավետ մեխանիզմների կիրառումը,

- բարելավել առողջապահական համակարգի կառավարումը,

- ուժեղացնել առողջության առաջնային պահպանման օղակը:

Համաձայն «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ Հայաստանում կգործեն առողջության ապահովագրության երկու տեսակ՝ համապարփակ և կամավոր ապահովագրություն: Այսօր Հայաստանում արդեն իսկ գործում է կամավոր բժշկական ապահովագրություն, սակայն բնակչության 2%-ից պակասն են օգտվում դրանից: Կամավոր ապահովագրությանը զուգահեռ նախատեսվում է, որ Հայաստանում կգործի նաև առողջության պարտադիր ապահովագրության համակարգ, որի շնորհիվ բնակչության բոլոր խմբերը կունենան բժշկական հիմնական ծառայությունների ֆինանսական հասանելիություն:

«Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն՝ ԱՀԱ ծածկույթի փոխհատուցումը կիրականացվի հետևյալ աղբյուրներից՝

- ապահովագրված անձանց ԱՀԱ վճարներից և նրանց փոխարեն կատարվող վճարներից,
- չապահովագրված անձանց համար պետական բյուջեից կատարվող վճարներից,
- պետական բյուջեից լրացուցիչ հատկացումներից,
- ֆիզիկական և իրավաբանական անձանց կամավոր մուծումներից,
- օրթոպեդիկ սարքերի ձեռքբերման ծախսերը փոխհատուցելու համար պետական բյուջեի հատկացումներից,
- առողջապահական կազմակերպություններից կամ դեղատներից վերականգնված կամ վերադարձված դրամական միջոցներից,
- ապահովագրված անձի առողջությանը պատճառված վնասի համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից օրենքով սահմանված կարգով վերականգնված միջոցներից:

Համաշխարհային պրակտիկայում առողջապահական բոլոր համակարգերն ունեն ֆինանսավորման խառը կառուցվածք՝ իրենցում պարունակելով գերակշռող 4 հիմնական մոդելների հատկանիշները: Այդ 4 մոդելներն են.

1. Բյուջետային մոդելը, որի դեպքում ֆինանսավորումն իրականացվում է ընդհանուր հարկման միջոցով: Այս մոդելը կիրառվում է 22 երկրներում (Մեծ Բրիտանիա, Կանադա, Ավստրալիա և այլն): Բյուջետային մոդելը բնութագրվում է ֆինանսական և սոցիալական կայունության բարձր մակարդակով, սակայն գործնականում ոչ մի ազդեցություն չունի սեփական առողջության նկատմամբ քաղաքացիների անհատական պատասխանատվության և բժշկական ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջև մրցակցության վրա:

2. Սոցիալական բժշկական ապահովագրությունը, որը ֆինանսավորվում է պետության, գործատուների և աշխատողների պարտադիր մուծումների միջոցով: Կիրառվում է աշխարհի 30 երկրներում (Գերմանա, Ֆրանսիա, Ճապոնիա, Կորեա): Սոցիալական բժշկական ապահովագրությունը խթաններ է ստեղծում մրցակցության զարգացման, որակի բարձրացման համար: Ավելին, այս մոդելով ապահովվում է ինքնակարգավորման բարձր մակարդակ առողջապահական համակարգում:

3. Մասնավոր բժշկական ապահովագրությունը, որը ֆինանսավորվում է գործատուների կամ աշխատողների կամավոր մուծումների միջոցով: Այս մոդելը գործում էր ԱՄՆ-ում մինչ 2009թ. ռեֆորմները:

4. Կուտակային առողջապահական հաշիվների մոդելը, որը կիրառվում է Սինգապուրում: Ֆի-

նանսավորվում է բացառապես աշխատող քաղաքացիների եկամտի հաշվին:

Հիմնվելով տարբեր երկրների փորձի ուսումնասիրության վրա, առանձնացվում է համապարփակ առողջապահական ծածկույթի ապահովման երեք հիմնական մոդել.

1. Պետական կամ բյուջետային ֆինանսավորում,
2. Առողջության պարտադիր ապահովագրության միասնական հիմնադրամ,
3. Առողջության պարտադիր ապահովագրության բազմաթիվ հիմնադրամներ կամ ընկերություններ:

Բյուջետային ֆինանսավորման մոդելի էությունը կայանում է նրանում, որ առողջապահական ծառայությունների դիմաց վճարում է պետությունը: Ֆինանսավորման աղբյուր են հանդիսանում պետական բյուջեի հարկային եկամուտները, իսկ քաղաքացիները առանձին հարկ չեն վճարում: Այս մոդելի առավելություններից են՝ բժշկական ծառայությունների ցածր սակագները, եկամուտների ձևավորման լայն շրջանակը: Որպես թերություններ կարելի է առանձնացնել հարկային բեռի ավելացումը բոլորի համար (քանի որ էական չէ, թե տվյալ քաղաքացին ինչ հաճախականությամբ է օգտվում առողջապահական ծառայություններից), առողջապահական ծածկույթի ֆինանսավորման կախվածությունը պետական բյուջեի փոփոխություններից, մատուցվող բժշկական ծառայությունների անարդյունավետության հավանականությունը մրցակցության բացակայության պատճառով, բժշկական կազմակերպություններում հաճախակի առաջացող երկար հերթեր:

Մեծ Բրիտանիայի փորձը ցույց է տալիս, որ առողջապահության ոլորտում ֆինանսավորման չափը կախված է լինում իշխող քաղաքական ուժի որոշումներից, տատանվում է քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության հետևանքով, ինչն էլ հանդիսանում է թերֆինանսավորման պատճառներից մեկը:

Առողջության ապահովագրության միասնական հիմնադրամի դեպքում ապահովագրված անձանց առողջապահական ծախսերը կատարվում են պետության կողմից հիմնադրված Առողջապահության համապարփակ ապահովագրության միասնական հիմնադրամի կողմից: Այս հիմնադրամը ֆինանսական միջոցները հավաքագրում է վարձու աշխատողների և գործատուների կողմից իրականացվող պարտադիր ապահովագրության վճարների միջոցով՝ գործող հարկային մեխանիզմներով: Այս մոդելի առավելությունն այն է, որ սոլիդարության սկզբունքի կիրառման միջոցով ապահովագրությունից օգտվում են նաև ոչ աշխատունակ և կարիքավոր անձինք, ովքեր ի վիճակի չեն կատարել ապահովագրավճարներ: Թերություններից են

ապահովագրված անձանց ռիսկայնությունը չգնահատելը, եկամուտների հավաքագրման նեղ շրջանակը, գործազրկության և սովերային տնտեսության աճի հավանականությունը, սոցիալական վճարների նվազումը (մասնավորապես այն երկրներում որտեղ բնակչության կազմում մեծահասակները մեծ տեսակարար կշիռ ունեն)²։ Էստոնիայի օրինակը ցույց է տալիս, որ թերֆինանսավորման հետևանքով առողջապահության ոլորտում աշխատանքը ցածր է վարձատրվում³, ինչը հանգեցնում է բուժաշխատողների պակասի։ Անբավարար ֆինանսավորման գլխավոր պատճառը կայանում է նրանում, որ առողջապահական վճարներն իրականացնում են միայն վարձու աշխատողները, մինչդեռ նրանք, ովքեր առողջապահավճարներ չեն վճարում, սակայն օգտվում են ապահովագրությունից, կազմում են ընդհանուր շահառուների շուրջ կեսը։

Առողջության պարտադիր ապահովագրության բազմաթիվ հիմնադրամների կամ ընկերությունների գործունեության պարագայում համապարփակ առողջապահական ծածկույթը ապահովվում է առողջության պարտադիր ապահովագրության համակարգի միջոցով, սակայն ապահովագրված անձանց առողջապահական ծախսերը կատարվում են բազմաթիվ հիմնադրամների կամ մասնավոր ապահովագրական ընկերությունների կողմից։ Այս մոդելի առավելությունն այն է, որ շուկայում տարբեր ապահովագրողների միջև մրցակցության պարագայում ապահովագրողները ներկայացնում են բազմաթիվ ապահովագրման փաթեթներ։ Թերություններից են՝ տարբեր սականգները միևնույն փաթեթի համար՝ կախված ապահովագրվող անձի ռիսկայնությունից, ապահովագրավճարների աճի հավանականությունը։ Օրինակ, Ֆրանսիայում բնակչությունը ապահովագրվում է մասնավոր ապահովագրական ընկերություններում։ Ապահովագրվածների բացարձակ մեծամասնությունն օգտվում է ապահովագրությունից, և նրանց կարիքներն ամբողջությամբ ժամանակին բավարարվում են։ Այստեղ գործում է նաև ռիսկերի հավասարեցման համակարգ։ Անկախ ռիսկայնությունից բոլորի համար գործում է միևնույն ապահովագրավճարը, միևնույն ժամանակ ապահովագրական ընկերությունները ստանում են փոխհատուցում՝ բարձր ռիսկայնության ապահովադիրներ ապահովագրելու համար։

Ֆինանսավորման մեխանիզմների ընտրությունը որպես կանոն կախված է երկրի առանձնահատկություններից։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում բնակչության մի սովորական գնագված աշխատում է ոչ ֆորմալ հատվածում, և պաշտոնական աշխատավարձի հիման վրա հաշվարկվող հարկման բազան փոքր է՝ համապարփակ առողջապահական ծած-

կույթի ֆինանսավորման համար նպատակային առողջապահական վճարներից գոյացած պետական եկամուտներին ապավինելը նպատակահարմար չէ։ Միևնույն ժամանակ, պետական բյուջեի եկամուտները սահմանափակ են մեծ թվով շահառուների սուբսիդավորելու համար։ Այս պարագայում խնդրի լուծման տարբերակ կարող է լինել ոչ ֆորմալ հատվածի աշխատողների համար առողջության համապարփակ ապահովագրության շրջանակներում հատուցման ենթակա ծառայությունների ավելի փոքր փաթեթների սահմանումը, որպեսզի ֆորմալ հատվածից ոչ ֆորմալ հատված անցնելու գրավչությունը զբաղվածների համար փոքրանա։

Մեծ, ոչ ֆորմալ, հատվածում զբաղվածություն ունեցող երկրներում, որտեղ ուղղակի հարկերի հավաքագրումը հանդիպում է լուրջ խոչընդոտների, տարածված պրակտիկա է նաև ԱԱՀ որոշ մասնաբաժինը առողջապահության ոլորտի ծախսերի ֆինանսավորմանը ուղղելը։ Որոշ երկրներում դրան է ուղղվում ակոհոլի և ծխախոտի հետ կապված հարկերի մի մասը (Եգիպտոս, Ֆրանսիա, Ֆիլիպիններ, Թուրքիա)⁴։ Ընդ որում, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը խորհուրդ է տալիս ֆինանսավորման համար դիմել այնպիսի ապրանքների սպառման հարկմանը, որոնք վնասակար են առողջության համար, օրինակ՝ ծխախոտի⁵, ակոհոլային խմիչքների, ավելացված շաքարի⁶։

Ընդհանուր առմամբ, Համաշխարհային բանկի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կարճաժամկետում աշխատավարձ չհանդիսացող եկամուտների ազդեցությունը ամենանպաստավորն է տնտեսության և տարբեր եկամտային խմբերի բարեկեցության վրա, իսկ ԱԱՀ-ի միջոցով ֆինանսավորումը ավելի նպաստավոր է, քան աշխատավարձի հարկման միջոցով ֆինանսավորումը⁶։

Հայաստանում առաջարկվող համապարփակ առողջապահական ծառայությունների ապահովման համակարգի համաձայն ապահովագրավճարներ վճարողներ են հանդիսանում վարձու աշխատողները, գործատուները, ինքնազբաղված անձինք, անհատ ձեռնարկատերերը, քաղաքացիական-իրավական պայմանագրերով աշխատանք կատարող կամ ծառայություն մատուցողները, նուտարները, իսկ պետությունը սուբսիդավորում է որոշ խմբերի ապահովագրավճարները։ Նկատի ունենալով, որ Հայաստանում, ինչպես և զարգացող շատ երկրներում, ոչ ֆորմալ հատվածում զբաղվածները զգալի կշիռ ունեն, գրանցված աշխատավարձի հիման վրա հաշվարկվող հարկման բազան փոքր է, իսկ հաշվի առնելով ֆորմալ հատվածից ոչ ֆորմալ հատված անցնելու գրավչությունը (ինչպես նաև ծերացող բնակչությունը), կարելի է պնդել, որ առաջարկվող համակարգը սոցիալապես արդար չէ

և կարող է ռիսկեր առաջացնել երկարաժամկետում:

Միևնույն ժամանակ, ՊԵԿ-ից ստացված պահվայիմ եկամուտների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 2021թ.-ին պահվի եկամուտների ընդհանուր մեծությունը կազմել է շուրջ 356.3 մլրդ դրամ, սակայն այդ գումարը ստացող ֆիզիկական անձանց քանակը խիստ սահմանափակ է (ոչ ավել քան 30 հազար մարդ), ինչը նշանակում է, որ մի կողմից կան մարդիկ ովքեր չհանդիսանալով վարձու աշխատողներ էական եկամուտներ ունեն, բայց ըստ առաջարկվող հարկման մեխանիզմի ԱՀԱ համակարգի համար չեն վճարելու, մյուս կողմից, եթե նրանց վրա էական հարկային բեռ դրվի, սոցիալապես արդարացված չի լինի:

ԱՀԱ համակարգի ներդրման ազդեցությունը տնտեսության վրա.

ԱՀԱ համակարգի ներդրումը հնարավորություն կտա ընդլայնել առողջության ապահովման համար անհրաժեշտ ծախսերի աղբյուրները: Վերջինիս ներդրումը ոչ միայն կարևոր նշանակություն կունենա սոցիալական ոլորտի վրա, այլ նաև տնտեսական էֆեկտների կհանգեցնի: Առաջին հայացքից թվում է, թե ազդեցությունը միայն բացասական է լինելու, սակայն կատարենք մի կարևոր ընդգծում:

Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշը՝ ՀՆԱ-ն, հաշվի չի առնում այն բաղադրիչները, որոնք չունեն շուկայական արժեք, օրինակ՝ առողջության ամրապնդումը: Չնայած նրան, որ առողջության ամրապնդում հաշվի չի առնվում ՀՆԱ-ի հաշվարկման դեպքում, առողջության արժեքը բավականին մեծ է: Մարդիկ այն հարցին, թե ինչքան են պատրաստ վճարելու առողջությունն ամրապնդելու համար, պատասխանում են՝ նշելով մեծ գումարներ, ինչը փաստում է, որ բնակչությունը պատկերացում ունի առողջության «գնի» մասին: Ստացվում է, որ եթե հասարակությունն առողջ է, ապա տալիս է ավելի մեծ տնտեսական արդյունք: Սա բնորոշ է թե՛ կազմակերպություններին, թե՛ ընդհանուր պետությանը: Տնտեսական ազդեցության շրջանակն, ըստ այդմ, բովանդակում է միկրո և մակրո մակարդակները: Մակրոտնտեսական տեսանկյունից ԱՀԱ համակարգի ներդրումը հնարավորություն կտա լուծել մի կողմից սոցիալական նշանակության կարևորագույն խնդիրը՝ առողջապահության ամրապնդում, մյուս կողմից ակտիվացնել ֆինանսական հատվածը:

Նախագծում տնտեսական ազդեցության համատեքստը ևս շրջանառվում է վերը նշվածի շուրջ: ԱՀԱ համակարգի կենսագործունեության արդյունքում հնարավորություն է ընձեռվում ներգրավել լրացուցիչ գումարներ՝ ավելացնելով նաև պետական բյուջեի եկամուտներից առողջապահական

ծախսերին ուղղված գումարները: Տնտեսության վրա նշվածի դրական ազդեցությունը կդրսևորվի այն ժամանակ, երբ քաղաքացիները, ում բուժօգնության դիմաց կատարվող վճարումները կկրճատվեն, հնարավորություն կունենան այդ գումարները ներդնել տնտեսության տարբեր ոլորտներում և ապահովել որոշակի արդյունք:

Ակնկալվում է, որ որպես տնտեսական արդյունք կդրսևորվի նաև ՀՀ ներդրումային միջավայրի ակտիվություն: Ներդրումները տարբեր ոլորտներում կարող են ավելանալ ինչպես վերը նշված պատճառով (այսինքն բնակիչների կողմից), այնպես էլ օտարերկրյա ուղղություններից: Ցանկացած ներդրող շահագրգռված է առողջ աշխատակիցներ ունենալու մեջ, և որքան աշխատակիցների առողջության հետ կապված հարցերը կանոնակարգված լինեն պետության կողմից տրամադրվող երաշխիքների տեսքով՝ հիմնական, աղետալի ծախսեր պահանջող հիվանդությունների բուժման մասով, պարտադիր բժշկական զննումների և հետազոտությունների իրականացման հետ կապված, այնքան ներդրողի համար կանխատեսելի և շատ ավելի վստահելի կդառնա ներդրումային միջավայրը: Ստացվում է, որ ԱՀԱ համակարգի ներդրման արդյունքում նվազում է ներդրումային միջավայրի ռիսկայնությունը:

ԱՀԱ համակարգի սոցիալական ազդեցությունը.

ԱՀԱ համակարգի ներդրման արդյունքում կբարելավվի Հայաստանի սոցիալական քաղաքականության հաշվեկշիռը, ինչը ենթադրում է հասարակության զարգացման նպատակի և դրանց հասնելու միջոցների հարաբերակցություն: Սոցիալական քաղաքականությունը կողմնորոշված է դեպի մարդը և իրականացվում է հասարակական պրոդուկտի բաշխման և սպառման ոլորտում: Անհնար է մարդու կայուն կենսագործունեությունը, եթե մարդը լիակատար առողջ չէ: Սակայն, որպեսզի հնարավոր լինի հասնել ԱՀԱ համակարգի նման արդյունավետության և ազդեցության, պետք է ապահովել բնակչության շրջանում առողջապահական համակարգի և հիմնադրամի կողմից՝ շահառուների վճարած գումարների նպատակային ծախսման գծով վստահության բավարար մակարդակ: Պետք է հասնել հաճախ հանդիպող քաշքշուկների, արմատացած մոտեցումների խապառ վերացմանը: Հաշվի առնելով այն փաստը, որ խնդիրը խորը արմատներ ունի, լուծումը ևս հեշտերից չի լինելու:

Խնդրի արմատները ձգվում են մինչև 1990-ականներ, երբ այդ տարիներին բնորոշ սոցիալ-տնտեսական անկումը զգալիորեն խաթարեց երկրի առողջապահական համակարգի գործունեությունը: Ոլորտին հատկացվող ռեսուրսները նվազեցին՝

հանգեցնելով բժշկական օգնության հիմնական ծառայությունների վատթարացման:

ԱՀԱ համակարգի ներդրումը կբացառի բնակչության մոտ առաջացած շփոթությունը և անորոշությունը պետության կողմից անվճար երաշխավորվող ծառայությունների վերաբերյալ: Ապահովագրավճարների հաշվարկման հիմքում դնելով սոցիալական համերաշխության սկզբունքները, հնարավորություն է ստեղծվում բնակչության բոլոր խմբերին տրամադրել երաշխավորված անվճար ապահովագրական ծածկույթ:

Բացի մեր կողմից առաջ քաշված սոցիալական ազդեցության շրջանակների Նախագիծը ևս սահմանում է որոշակի ազդեցություններ: Մասնավորապես ընդգծվում է, որ բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձինք կունենան ապահովագրական միևնույն փաթեթ՝ անկախ սոցիալական կարգավիճակից: Հիմնական ծառայություններ ստանալու տեսանկյունից չեն տարբերվի հարուստների և աղքատների կամ սոցիալապես անապահովների համար գոյություն ունեցող պայմանները, բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները, դրանց մատուցման որակը: Առողջական խնդիրներ առաջանալու դեպքում՝ մարդիկ չեն մտածի գումարներ հայթայթելու, վարկեր վերցնելու, պարտքով գումար խնդրելու կամ անձնական գույք վաճառելու մասին: Ֆինանսական պաշտպանվածության և մատչելիության բարձրացման շնորհիվ կնվազի միայն ծայրահեղ, ուշացված դեպքերում բժշկի դիմելու դեպքերի թիվը, իսկ ժամանակին ախտորոշման և բուժման դեպքում կբարելավվի նրանց կյանքի որակը: ԱՀԱ ներդրումը կարևորվում է նաև հոգեբանական տեսանկյունից, քանզի հաղթահարվում է հիվանդությունների առաջացման դեպքում ֆինանսական անպաշտպանության վախը, ինչն էլ իր հերթին նպաստում է ինքնավստահության բարձրացմանը, արդյունավետ գործունեությանը, ազատության և պաշտպանվածության գիտակցության բարձրացմանը:

Անփոփելիվ ԱՀԱ համակարգի սոցիալական ազդեցությունը՝ նշենք, որ շուկայական տնտեսության պայմաններում համապարփակ ապահովագրության արդյունավետ կիրառումն առավելապես սոցիալական քաղաքականության գործիք է, քան պետության կողմից վարչական միջամտության հետևանք: Այս է պատճառը, որ ԱՀԱ համակարգի ներդրումը նպաստում է երկրում սոցիալ-տնտեսական զարգացումներին, ինչպես նաև ապահովագրական շուկայի զարգացմանը, որը պետք է դիտել որպես ապահովագրության զարգացման յուրօրինակ խթան, այլ ոչ թե պետական քաղաքականության հիմնական նպատակ:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը, կարող ենք հանգել հետևյալին.

1. ԱՀԱ համակարգի ներդրումը կնպաստի սոցիալաին տնտեսության կրճատմանը: Եթե սկզբնական շրջանում բժշկական ապահովագրման համակարգը ներդրվի միայն աշխատողների համար, չգրանցված աշխատողները շահագրգռված կլինեն, որպեսզի իրենք ևս գրանցվեն և օգտվեն համակարգի արտոնություններից:

2. ԱՀԱ համակարգի ներդրումը կհանգեցնի կոռուպցիոն ռիսկերի կրճատմանը: Առողջության համապարփակ ապահովագրության հիմնական ծառայությունների փաթեթի կատարողականի վերահսկողական հանձնաժողովի և Առողջության համապարփակ ապահովագրության ռազմավարական գնումների հանձնաժողովի ներդրումը կստեղծի վերլուծական բազա, որի տվյալների մշակման և վերլուծման արդյունքում հնարավոր կլինի վեր հանել բուժհաստատություններում առկա կոռուպցիոն, տեխնիկական, բուժանձնակազմի վերաբերյալ խնդիրներն ու թերությունները:

3. ԱՀԱ համակարգի առկայությունը դրականորեն կազդի Հայաստանի ներդրումային միջավայրի զարգացման տեսանկյունից, քանզի ցանկացած ներդրող շահագրգռված է առողջ աշխատակիցներ ունենալու մեջ և որքան աշխատակիցների առողջության հետ կապված հարցերը կանոնակարգված լինեն պետության կողմից տրամադրվող երաշխիքների տեսքով, այնքան ներդրողի համար կանխատեսելի և շատ ավելի վստահելի կդառնա ներդրումային միջավայրը:

4. ԱՀԱ համակարգի ներդրումը կարելի է համարել առողջապահության ոլորտի զարգացման համար անհրաժեշտ գումարային հոսքեր ապահովելու արդյունավետ տարբերակ: Համակարգը կնպաստի բուժաշխատողների աշխատավարձի բարձրացմանն ու հիվանդանոցների տեխնիկական հագեցվածության ապահովմանը:

5. Առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի արդյունավետ ներդրման համար անհրաժեշտ է հստակեցնել գործազրկության իրական մակարդակը: «Անապահով» ու «նպաստառու» ընտանիք հասկացությունը հստակ սահմանված չէ, և որոշ քաղաքացիներ նախընտրում են գործազրկության նպաստ ստանալ աշխատելու փոխարեն: Արդյունքում, քաղաքացիները կարող են վստահություն չունենալ գործող համակարգերի նկատմամբ և հետագայում կոժճոհեն սոցիալական անապահովության նպաստ ստացողների փոխարեն առողջության ապահովագրության գումարը վճարելու պահանջից: Հետևաբար պետք է ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որ բժշկական ապահովագրության բեռը չմնա միայն գրանցված աշխատողների ուսերին: Բացի այդ, պետությունը վճարում է առանձին խմբերի համար, օրինակ, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող գյուղատնտեսական անհատական գործունեությամբ զբաղվող-

ների, որոնց կարգավիճակը ինքնին չի նշանակում, որ վճարումակ չեն:

6. Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության ոչ ֆորմալ հատվածի մեծությունը՝ սոցիալական արդարությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է դիտարկել ԱՀԱ համակարգի ֆինանսավոր-

ման այլընտրանքային տարբերակները՝ աշխատավարձի հարկումը զուգակցելով ֆիզիկական անձանց պասիվ եկամուտների հարկման հետ, ինչպես նաև առանձին ԱԱՀ-ով հարկման մոդելը:

¹ P. Hussey *, G.F. Anderson A comparison of single- and multi-payer health insurance systems and options for reform <https://web.pdx.edu/~nwallace/GHS/SingleMultiHI.pdf>

² Cylus, J., et al (2019). “Sustainable health financing with an ageing population: implications of different revenue raising mechanisms and policy options”. WHO The economics of healthy and active ageing series. Էջ 7, <https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/331977/Policy-brief-1997-8073-2019-2-eng.pdf?sequence=10&isAllowed=y>

³ The EU exodus: When doctors and nurses follow the money <https://www.politico.eu/article/doctors-nurses-migration-health-care-crisis-workers-follow-the-money-european-commission-data/>

⁴ Cashin, C., Sparkes, S., Bloom, D. (2017). “Earmarking for health: from theory to practice”. WHO, Health Financing Working Paper No. 5. <https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/255004/9789241512206-eng.pdf>

⁵ Cashin, C., Sparkes, S., Bloom, D. (2017). “Earmarking for health: from theory to practice”. WHO, Health Financing Working Paper No. 5. <https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/255004/9789241512206-eng.pdf>

⁶ Դուրու, Հ. և այլք (2021). «Հայաստանի համապարփակ առողջապահական ծածկույթի ֆինանսավորման մակրոտնտեսական ազդեցությունները» https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/35688/160124-Arm.pdf?sequence=5&isAllowed=y&fbclid=IwAR10VsGCJdO0ZddgiDU3v4oYk2EcAuWN-rcwq_c13bFVEiJiu5NLrLH3s6Q

⁷ «Հայաստանի Հանրապետությունում առողջության համապարփակ ապահովագրության ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ, 2019թ., կետ 114:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. P. Hussey *, G.F. Anderson A comparison of single- and multi-payer health insurance systems and options for reform <https://web.pdx.edu/~nwallace/GHS/SingleMultiHI.pdf> (28.02.2023)

2. Cylus, J., et al (2019). “Sustainable health financing with an ageing population: implications of different revenue raising mechanisms and policy options”. WHO The economics of healthy and active ageing series. <https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/331977/Policy-brief-1997-8073-2019-2-eng.pdf?sequence=10&isAllowed=y> (28.02.2023)

3. The EU exodus: When doctors and nurses follow the money <https://www.politico.eu/article/doctors-nurses-migration-health-care-crisis-workers-follow-the-money-european-commission-data/> (28.02.2023)

4. Cashin, C., Sparkes, S., Bloom, D. (2017). “Earmarking for health: from theory to practice”. WHO, Health Financing Working Paper No. 5. <https://apps.who.int/iris/bitstream/handle/10665/255004/9789241512206-eng.pdf> (28.02.2023)

5. Դուրու, Հ. և այլք (2021). «Հայաստանի համապարփակ առողջապահական ծածկույթի ֆինանսավորման մակրոտնտեսական ազդեցությունները» https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/35688/160124-Arm.pdf?sequence=5&isAllowed=y&fbclid=IwAR10VsGCJdO0ZddgiDU3v4oYk2EcAuWN-rcwq_c13bFVEiJiu5NLrLH3s6Q (28.02.2023)

6. «Հայաստանի Հանրապետությունում առողջության համապարփակ ապահովագրության ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծ, 2019թ.:

Արման Ակոբջանյան

Помощник Главного принудительного исполнителя

РЕЗЮМЕ

Комплексная система медицинского страхования в РА

В рамках данной исследовательской работы обсуждаются особенности реализации и функционирования системы комплексного медицинского страхования как института финансовой доступности и защиты основных медицинских услуг для всех групп населения, представлены международный опыт и общие закономерности применения этой системы. На основе особенностей комплексной системы медицинского страхования представлено ее возможное влияние на экономику и социальную среду Республики Армения.

Ключевые слова: *система здравоохранения, комплексное медицинское страхование, единый фонд медицинского страхования, медицинские услуги, «медицинский налог».*

Arman Hakobjanyan

Assistant to the Chief compulsory enforcement officer

SUMMARY

Comprehensive health insurance system in RA

Within the framework of this research work, the features of the implementation and functioning of the complex medical insurance system as an institution of financial availability and protection of basic medical services for all groups of the population are discussed, international experience and general patterns of application of this system are presented. Based on the features of the comprehensive health insurance system, its possible impact on the economy and social environment of the Republic of Armenia is presented.

Key words: *health care system, comprehensive health insurance, unified health insurance fund, medical services, “medical tax”.*

Բնագիրը ներկայացվել է 28.02.2023թ.

Ընդունվել է տպագրության 17.04.2023թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների թեկնածու Վ. Կարապետյանը

ԿԱՐԵՆ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
«ՖԼԵԸ» ՍՊԸ՝ իրավաբան

ԽՈՐՀՈՒՐԴԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՐՊՈՐԱՅԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ՄԱՐՍԻՆ

Սույն գիտական հոդվածը նվիրված է կորպորացիաների խորհրդի էության, բովանդակության և առանձնահատկությունների վերհամաձայնեցման, խորհրդի կազմավորման և գործառնության վերաբերյալ շրջանակներում ծագող մի շարք հիմնական հարցերի ուսումնասիրությանը և գործնական առաջարկների ներկայացմանը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել վնասվածության բաժնետիրական ընկերությունների՝ որպես հատուկ տեսակի բաժնետիրական ընկերությունների խորհրդի ձևավորման և գործունեության բնութագրական գծերին, այդ թվում՝ խորհրդի դիրքի անդամի կարգավիճակին, պաշտպանիչ դրույթներին և փոխհատուցման կառուցակարգին:

Վերոնշյալ կառուցակարգերի տեղայնացումը և ներդրումը հնարավորություն կընձեռեն ՀՀ օրենսդրությամբ լիարժեք կանոնակարգելու վնասվածության բաժնետիրական ընկերությունները, այդ թվում՝ դրա խորհրդի առանձնահատկությունները, որը կբարելավի ՀՀ ներդրումային միջավայրը և կապահովի վնասվածության ներդրումների արդյունավետ ներգրավումը:

Հիմնաբառեր - կորպորացիա, խորհուրդ, վնասվածության բաժնետիրական ընկերություն, վնասվածության ներդրող, պաշտպանիչ դրույթներ:

Կորպորացիաներում նպատակահարմար և արդյունավետ է, որ սեփականությունն առանձնացվի կառավարումից, իսկ կառավարման գործառնությունը՝ կառավարման նկատմամբ հսկողության իրավունքից: Կորպորացիայում հսկողությունը հանգում է կառավարիչների գործունեության ստուգմանը և կորպորացիայի շահերի հետ հարաբերակցմանը՝ նպատակ ունենալով կանխել չարաշահումները և անորակ կառավարումը²:

Ինչպես Միլիկոնյան հովտի հին ասացվածքն է փաստում՝ լավ խորհուրդները չեն ստեղծում լավ ընկերություններ, սակայն վատ խորհուրդը ամեն անգամ «կոչնչացնի» ընկերությանը³: Սրանով իսկ շեշտվում են կորպորացիայի խորհրդի առանցքային նշանակությունն ու դերը կորպորացիայի կառավարման մարմինների համակարգում:

Առանձնացվում են կորպորատիվ կառավարման 2 հիմնական մոդել՝ **աուքսալյուերական և ինսալյուերական**: Աուքսալյուերական մոդելը տարածված է այն երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա), որտեղ ընկերությունների ֆինանսավորումը գերակշռապես իրականացվում է ոչ թե բանկերի վարկավորման, այլ արժեթղթերի շուկայի միջոցով, բաժնետոմսերը բաշխվում են որակավորված ներդրողների միջև (կենսաթոշակային ֆոնդեր, ապահովագրական ընկերություններ):

Ինսալյուերական մոդելի պարագայում՝ ընկերության նկատմամբ հսկողությունը կենտրոնացված է անձանց որոշակի խմբի ձեռքում, որոնք դրա հետ սերտորեն կապված են: Փոքր բաժնետերերի դերը կառավարման մեջ գործնականում հասցված է գրոյի, իսկ նրանց ֆինանսական շահերը, որպես կանոն, անտեսվում են⁴:

Կորպորատիվ կառավարման նշված մոդելներից յուրաքանչյուրին համապատասխանում է կա՛մ երկակի (երկալատ), կա՛մ միասնական (ունիտար) խորհուրդ⁵: Ունիտար խորհուրդը ավանդաբար բնութագրական է ԱՄՆ-ին և Մեծ Բրիտանիային, իսկ երկակարգակ խորհուրդը՝ Գերմանիայի իրավակարգին:

Խորհուրդը մի կողմից ներկայացնում է բաժնետերերի շահերը և պաշտպանում է դրանք գործառնողի ղեկավարությունից, մյուս կողմից գործում է որպես մենեջերների ներկայացուցիչ բաժնետերերի հետ հարաբերություններում: Խորհրդի հիմնական նշանակությունը հանգում է երկու կողմերի շահերի հավասարակշռմանը, որում վերջինս հանդես է գալիս արբիտրի և հաղորդակցողի դերում⁶:

Տ. Կաշանինյանի բնութագրմամբ՝ խորհուրդը մարմին է, որը իրականացնում է հիմնական ինտելեկտուալ աշխատանքը և գործառնողի կառավարման մարմինների նկատմամբ հսկողական գործառնություններ⁷:

Խորհուրդը դիտարկվում է և՛ որպես կառավարման համար նախատեսված մարմին, և՛ որպես մարմին, որի նշանակությունը հանգում է բացառապես հսկողական գործունեությանը, իսկ որոշ գիտնականներ նրա գործառնություններում գտնում են կառավարման և հսկողության խառնուրդ (համակցություն)⁸:

Խորհրդի հսկողական լիազորությունների թվին պայմանականորեն կարելի է դասել խոշոր և շահագրգռվածությամբ գործարքներին հավանություն տալու, ժողովի գումարման լիազորությունները՝ որպես ընկերության գործունեության նկատմամբ նախնական հսկողության գործառնություն

դրսևորում: Մյուս լիազորությունները կարելի է համարել ավելի շատ կառավարչական, քան հսկողական:

Հետաքրքիր է խորհրդի հսկողական լիազորությունների իրականացման կառուցակարգը **գերմանական** իրավակարգում: Գերմանական օրենսդրությամբ խորհրդի հսկողական լիազորությունները ունեն մի շարք ուղղություններ, ներառյալ՝ առևտրային քաղաքականության, ֆինանսական, ներդրումային, անձնակազմի թվաքանակի պահպանում, ընթացիկ գործերի վիճակի, շահութաբերության, կնքված գործարքների և իրավաբանորեն նշանակալի այլ գործողությունների հսկողություն:

Հսկողական գործառնության իրականացումը հնարավոր է միայն գործադիր մարմինների կողմից իրենց գործունեության վերաբերյալ տրամադրված հաշվետվությունների, ինչպես նաև ֆինանսական և այլ փաստաթղթերի քննարկման միջոցով¹⁰:

Մասնագիտական հանրության կողմից քննարկվում է, թե **հնարավոր է արդյոք մեկ մարմնի լիազորություններում միավորել և՛ կառավարման, և՛ հսկողության գործառնությունները**:

Ա. Կուշնիրովը կարծում է, որ հսկողական և գործադիր մարմինների լիազորությունների խառնումը, ինչպես նաև խորհրդի և կոլեգիալ գործադիր մարմնի լիազորությունների համակցումը չեն կարող դրական ազդել բաժնետերերի կողմից կառավարիչների գործունեության նկատմամբ հսկողության հնարավորության վրա¹¹:

Մեր գնահատմամբ ևս նպատակահարմար և ընդունելի չէ կառավարչական և հսկողական լիազորությունների (գործառնությունների) կենտրոնացումը մեկ մարմնի (խորհրդի) ձեռքում, քանի որ՝

ա) որոշ դեպքերում գործադիր մարմնի անդամները, միաժամանակ դառնալով խորհրդի անդամ, փաստացի հսկողություն են իրականացնում իրենք իրենց նկատմամբ, ինչը խնդիրներ կարող է հարուցել դրա օբյեկտիվության և արդյունավետության առումով,

բ) խորհրդի կողմից կառավարչական լիազորությունների իրականացման պարագայում կարող է առաջ գալ նաև խորհրդի նկատմամբ հսկողության հարցը, որը ոչ բոլոր դեպքերում է հնարավոր ապահովել ժողովի կողմից:

Մենք համակարծիք ենք այն պնդմանը, որ բաժնետիրական ընկերության մարմինների կառուցվածքում պետք է լինի կառավարչական և հսկողական գործառնությունների հստակ տարանջատում: Այսինքն՝ հսկողական լիազորությունները պետք է վերապահել խորհրդին, իսկ կառավարման գործառնությունը փոխանցել գործադիր մարմնին:

Բացի այդ, խորհրդի կազմում չպետք է ներառվեն ո՛չ վարչության անդամները, ո՛չ միանձնյա գործադիր մարմինը, ո՛չ այլ անձինք, որոնք լիազորված

են ամբողջությամբ կամ մասամբ վարելու ընկերության գործերը¹²:

Հետաքրքիր է նաև **խորհրդի անդամների և ընկերության միջև հարաբերությունների բնույթը** (քաղաքացիական, կորպորատիվ, աշխատանքային): Այս հարցի կապակցությամբ ևս առաջ են քաշվել տարբեր մոտեցումներ:

Վ. Պրոխորենկոն գտնում է, որ խորհրդի անդամների և բաժնետիրական ընկերության միջև հարաբերությունները աշխատանքային չեն, բայց դրանց վրա կարող են տարածվել աշխատանքային իրավունքի նորմերը, եթե կողմերը դա անհրաժեշտ համարեն¹³: Սինչեռ **Կ. Պախտոմովան** կարծում է, որ խորհրդի անդամի իրավունքներն ու պարտականությունները առաջին հերթին կորպորատիվ (այլ ոչ թե աշխատանքային) են, ուստի աշխատանքային հարաբերությունների ծագումը կամ դադարումը չի ազդում խորհրդի անդամի կարգավիճակի վրա¹⁴:

Իսկ ըստ **Ա. Մակոմսկայայի**՝ այն դեպքում, երբ խոսքը այն անձանց մասին է, որոնց ներկայացնում են բաժնետիրական ընկերության մարմինները կամ ներառված են դրանցում և ընկերության հետ միաժամանակ կապված են աշխատանքային հարաբերություններով, բխվում ենք երկակի իրավական կարգավիճակի հետ՝ ընկերության աշխատողի և ընկերության կառավարման մարմնի (մարմնի անդամի) կարգավիճակները¹⁵:

Գիտության մեջ այդ հարաբերությունները որակվում են նաև որպես ներկայացուցչության հատուկ տարատեսակ¹⁶, պարտավորական հարաբերություններ, որոնց հիմքում ընկած է գործակալության¹⁷ կամ ծառայությունների մատուցման¹⁸ պայմանագիր կամ հատուկ տեսակի պայմանագիր, որի առարկան է կազմում խորհրդի անդամի կողմից իրավաբանական և փաստական գործողությունների կատարումը, որոնք հանգում են կառավարչական գործառնությունների իրականացմանը և կապված են խորհրդին մասնակցության հետ¹⁹:

Վերը նշված տեսակետների հաշվառմամբ՝ կարծում ենք, որ խորհրդի անդամների և կորպորացիայի հարաբերությունները ունեն կորպորատիվ բնույթ, ինչը, սակայն, չի բացառում նրանց հետ աշխատանքային և/կամ այլ պայմանագրերի կնքումն ու mutatis mutandis աշխատանքային և/կամ այլ օրենսդրության կիրառումը (պայմանով, որ դա չի հակասում կորպորատիվ օրենսդրությանը):

Մյուս կողմից, հարց է առաջանում, թե **կարող են արդյոք բաժնետերերը խորհրդի անդամների թեկնածուների համար սահմանել լրացուցիչ չափանիշներ**²⁰: Այս առումով հարկ է նշել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ «ԲԸ օրենք», ընդունված՝ 25.09.2001թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2001.11.06/34(166) Հոդ.831) չի արգելում խորհրդի թեկնածուների համար սահ-

մանել այլ՝ հավելյալ չափանիշներ, այդ թվում՝ որոշակի կրթության, որակավորման, պրոֆեսիոնալիզմի, կոնկրետ ոլորտում փորձառության և այլն՝: Հետևապես, բաժնետերերը իրավասու են սեփական հայեցողությամբ որոշելու խորհրդի անդամների ընտրության չափանիշները:

ԲԸ օրենքի 85-րդ հոդվածից բխում է նաև, որ յուրաքանչյուր բաժնետեր խորհրդում կարող է զբաղեցնել միայն մեկ տեղ, խորհրդի անդամ կարող է լինել նաև ընկերության բաժնետեր չհանդիսացող անձը, եթե կանոնադրությամբ դա արգելված չէ: Մյուս կողմից, ընկերության գործադիր մարմնի ներկայացուցիչները չեն կարող խորհրդում մեծամասնություն կազմել:

Փաստորեն խորհրդի անդամ կարող են լինել ինչպես ընկերության մասնակիցները (ներքին տնօրեններ), այնպես էլ այլ անձինք («արտաքին տնօրեններ»): Արտաքին տնօրենները, որպես կանոն, կառավարման ոլորտի բարձր պրոֆեսիոնալիզմով օժտված մասնագետներ են, որոնք ունակ են մշակելու ընկերության որակյալ քաղաքականություն և իրականացնելու անհրաժեշտ հսկողություն ընկերության կառավարման մարմինների գործունեության նկատմամբ²²:

Այս պարագայում խնդրահարույց կարելի է համարել ընկերության խորհրդում գործադիր մարմնի ներկայացուցիչներ ընդգրկելու օրենսդրական հնարավորությունը: Գործադիր մարմնի անդամների՝ միաժամանակ երկու մարմիններում լինելը հանգեցնում է կառավարման (գործադիր) և հսկողական (խորհուրդ) լիազորությունների խաչման, այսինքն՝ գործադիր մարմնի անդամը հայտնվելով խորհրդում վերահսկում է իր իսկ գործունեությունը, ինչը կասկածի տակ կարող է դնել դրա արդյունավետությունն ու օբյեկտիվությունը:

Մեր գնահատմամբ, պետք է հստակ տարանջատել գործադիրի և խորհրդի իրավասությունը (լիազորությունները)՝ օրենքով արգելելով գործադիրի անդամների ընդգրկումը խորհրդի կազմում: Նշվածն, իր հերթին, չի խոչընդոտում բաժնետերերի՝ սեփական (գործադիրի անդամ չհանդիսացող) թեկնածուներին խորհրդում ընտրելու կամ նշանակելու հնարավորությունը:

Հետաքրքրական է խորհրդի անդամների վարձատրության հարցը այն իմաստով, որ վարձատրության ստացումը խորհրդի անդամին կախվածության մեջ է դնում այն անձանցից, որոնք որոշում են այդպիսի վարձատրության չափը և մյուս կողմից վարձատրության բացակայությունը մշտական եկամուտ չունեցող անդամին դարձնում է կախյալ:

Որպես այդ խնդրի լուծման տարբերակ՝ *Կ. Պավլովան* առաջարկել է օրենսդրորեն սահմանել վարձատրության նվազագույն չափը (գումարը)²³:

Կարծում ենք, որ ի զարգացումն այդ առաջարկի՝ կարելի է նախատեսել նաև խորհրդի անդամներ

րի վարձատրության չափի հաշվարկման գործում կառուցակարգ՝ ելնելով տարբեր չափորոշիչներից (օրինակ՝ ընկերության տարեկան շահույթի որոշակի տոկոսի չափով):

Խորհուրդն իր աշխատանքը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք կարող են անցկացվել ինչպես խորհրդի անդամների համատեղ ներկայությամբ, այնպես էլ հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով): Նիստերի անցկացման համար պարտադիր է կանոնադրությամբ սահմանված քվորումի ապահովումը, որը չի կարող խորհրդի անդամների կեսից պակաս լինել, հակառակ դեպքում այն լրացնելու նպատակով պետք է գումարվի արտահերթ ժողով (ԲԸ օրենքի 87-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր):

Մասնագիտական գրականության մեջ նպատակահարմար է համարվում սահմանել առավել կարևոր հարցերի շրջանակ, որոնցով որոշումները կարող են ընդունվել միայն²⁴ խորհրդի անդամների համատեղ ներկայությամբ: Նշված առաջարկը, ըստ մեզ, չի կարող կենսունակ լինել, քանի որ խորհրդի անդամները կարող են լինել տարբեր պետություններում, և այդ պայմաններում դժվար է մշտապես ապահովել նրանց համաժամանակյա ֆիզիկական ներկայությունը նիստերին և հնարավոր չի լինի ապահովել խորհրդի նիստերի քվորումն ու բնականոն գործունեությունը:

Իր գործունեության շրջանակներում խորհուրդը ընդունում է որոշումներ նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ (իսկ ժողովի այն իրավասությունների վերաբերյալ որոշումները, որոնք վերապահվել են խորհրդի իրավասությանը՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների 3/4-ով) եթե օրենքով, կանոնադրությամբ կամ ժողովի հաստատած խորհրդի կանոնակարգով այլ բան նախատեսված չէ: Քվեարկելիս խորհրդի յուրաքանչյուր անդամն ունի միայն 1 ձայն, որի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում: Իսկ խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Այլ իրավակարգերում գործնականում ընդունելի է այն մոտեցումը, որ եթե բաժնետերն ունի խորհրդում սեփական ներկայացուցչին նշանակելու համար անհրաժեշտ բաժնետոմսեր, ապա խորհրդի տարբեր նիստերին նա կարող է ուղարկել տարբեր ներկայացուցիչների/երրորդ անձանց (օրինակ՝ խորհրդի անդամի հիվանդություն, այլ պաշտոնի տեղափոխում, պաշտոնից ազատում և այլն), ինչպես նաև նախատեսված է խորհրդի անդամի՝ այլ անդամների միջոցով գրավոր քվեարկության նախօրոք²⁵ իրականացումը (քվեաթերթիկի տրամադրումը):

Այս մոտեցումը, գտնում ենք՝ կարող է վտանգել

ընկերության շահերը, քանի որ խորհրդի նիստերին մասնակցելու և որոշումներ ընդունելու համար՝ հարկ է պատշաճ տեղեկացված լինել ընկերության գործունեության վերաբերյալ, ինչը բարդանում է խորհրդի մշտապես փոփոխվող անդամների պարագայում կամ եթե խորհրդի անդամը անմիջականորեն չի մասնակցում նիստին և որոշում է կայացնում առանց խորհրդի մյուս անդամների հետ խորհրդակցելու:

Նշենք նաև, որ խորհրդի նիստերն արձանագրվում են, համապատասխան արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում, որը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար (ԲԸ օրենքի 87-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր):

Անդրադառնալով վենչուրային բաժնետիրական ընկերություններում²⁶ (այսուհետ՝ «ՎԲԸ») խորհրդի ձևավորման և կազմի առանձնահատկություններին՝ հարկ է ընդգծել, որ խորհուրդը առանցքային նշանակություն ունի ընկերության ընդհանուր ղեկավարման և գործունեության ռազմավարական ուղղությունների որոշման հարցում:

Ընդ որում՝ եթե ընդհանուր բաժնետիրական ընկերություններում խորհուրդը ձևավորվում է նրա բաժնետերերի կողմից, ապա ՎԲԸ-ում այդ գործընթացի վրա վենչուրային ներդրող բաժնետերերը ունեն նշանակալի ազդեցություն՝ նշանակելով/ընտրելով խորհրդի մեկ կամ մի քանի անդամի՝

ՎԲԸ-ներում գործում է նաև խորհրդի **դիտորդ անդամի** կարգավիճակը, որը (դիտորդ անդամը) կարող է լինել խորհրդի անդամի փոխարեն կամ ի լրումն խորհրդի անդամի, և որը իրավունք ունի մասնակցելու խորհրդի նիստերին և քննարկումներին՝ առանց ձայնի իրավունքի²⁸:

Խորհրդում վենչուրային ներդրողի ընտրած/նշանակած դիտորդ անդամը հնարավորություն է տալիս մշտադիտարկելու խորհրդի գործունեությունն ու վերջինի կողմից ընդունվելիք որոշումները, ինչպես նաև կանխելու նրանց շահերին չհամապատասխանող որոշումներն ու գործընթացները:

Վաղ փուլերում (early stage) ՎԲԸ-ներում խորհուրդը հիմնականում կազմված է լինում 3-ից 5 անդամից:

Խորհրդի եռանդամ կազմը հետևյալն է՝

1. հիմնադիր/գործադիր մարմին,
2. վենչուրային ներդրող,
3. խորհրդի անկախ անդամ կամ այլ հիմնադիր:

Իսկ խորհրդի հնգանդամ կազմը ներառում է՝

1. հիմնադիր,
2. գործադիր մարմին,
3. վենչուրային ներդրող,

4. այլ վենչուրային ներդրող,

5. խորհրդի անկախ անդամ:

Հետագա փուլերում (mature) խորհուրդը ունենում է ավելի բազմանդամ կազմ (7-ից 9 անդամ)²⁹ խորհրդի ավելի շատ անկախ անդամներով՝

Խորհուրդը հսկելու (վերահսկելու) իրավունքից բացի, վենչուրային ներդրողները, որպես կանոն, կիրառում են նաև **պաշտպանիչ դրույթներ (protective provisions)**:

Պաշտպանիչ դրույթները բովանդակում են արդյունավետ նեգատիվ (վետո) իրավունքներ, որոնք վենչուրային ներդրողները ունեն ՎԲԸ-ի գործողությունների և ընդունվող որոշումների կապակցությամբ³⁰:

Սա նշանակում է, որ վերջինները (օպերացիոնալ/գործառնական, կորպորատիվ կառուցվածքի, արժեթղթերի հարցերով)³¹ հնարավորություն են ստանում կանխորոշելու ՎԲԸ-ի գործունեությունը՝ կանխելով իրենց շահերից չբխող որոշումները:

Այլ խոսքով, պաշտպանիչ դրույթների ուժով, առանց բաժնետեր վենչուրային ներդրողների համաձայնության, ի թիվս այլնի, արգելվում է՝

- միաձուլել ընկերությունը, վաճառել ընկերությունը կամ նրա ակտիվները կամ կատարել բիզնեսի հիմնարար փոփոխություններ կամ մտնել բիզնեսի նոր ուղղություն,
- փոփոխել վենչուրային ներդրողներին պատկանող բաժնետոմսերի պայմանները,
- թողարկել և տեղաբաշխել հավելյալ բաժնետոմսեր,
- թողարկել վենչուրային ներդրողներին պատկանող բաժնետոմսերին հավասար կամ առավել արտոնյալ պայմաններով բաժնետոմսեր,
- հետ գնել հասարակ (սովորական) բաժնետոմսերը,
- փոփոխել կանոնադրությունը կամ կանոնակարգերը,
- փոփոխել խորհրդի կազմը և չափը,
- վճարել կամ հայտարարել շահաբաժին (շահութաբաժին),
- գումար վերցնել (դրամական միջոցներ ներգրավել),
- դուստր ընկերությունում չունենալ արժեթղթեր, եթե դրա միակ սեփականատերը ընկերությունը չէ,
- դիմել սնանկության,
- լիցենզավորել ընկերության մտավոր սեփականությունը,
- լուծարել ընկերությունը կամ փոփոխել հսկողությունը,
- և այլն³²:

Մասնագետների կողմից առաջարկվում է ՎԲԸ-ներում նախատեսել խորհրդի հաստատման իրավունքները օպերացիոնալ/գործառնական հարցերով, իսկ առավել էական/հիմնարար և ռազմա-

վարական հարցերով հաստատման իրավունքները վերապահել ժողովին, իսկ որոշ հարցերով կարող է պահանջվել նաև ներդրողների կամ նրանց մեծամասնության³³ հաստատումը (investor majority or veto rights) :

Նշենք նաև, որ ՎԲԸ-ների ֆինանսավորման (ներդրումների) հետագա փուլերում առաջ է գալիս այն հարցը, թե ինչպես են կիրառվելու պաշտպանիչ դրույթները բաժնետոմսերի նոր դաս(եր)ի նկատմամբ, մասնավորապես, նոր բաժնետոմսերի սեփականատերերը ստանում են իրենց սեփական պաշտպանիչ դրույթները, թե քվեարկում են մյուս բաժնետերերի հետ՝ որպես մեկ դաս³⁴ :

Պաշտպանիչ դրույթները հնարավորություն են ընձեռում վենչուրային ներդրողներին ստանալ հավելյալ իրավունքներ և ունենալ վերահսկողության ու ազդեցության լծակներ ընկերության նկատմամբ իրենց համար էական նշանակություն ունեցող հարցերով որոշումներ կայացնելիս :

Միևնույն ժամանակ, հատուկ արտոնյալ բաժնետոմսերի միջոցով վենչուրային ներդրողները ստանում են անհամաչափ ավելի շատ վերահսկողություն, քան արժեթղթեր, այսինքն՝ այնպիսի եզակի կորպորատիվ կառավարման կառուցվածք, որտեղ արտոնյալ բաժնետերերն են առավելապես հսկում ընկերությունը, այլ ոչ հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը :

ՎԲԸ-ների խորհրդում գործում է նաև փոխհատուցման (indemnification) կառուցակարգը, ըստ որի՝ ընկերությունը պետք է փոխհատուցի վենչուրային ներդրողներին, ինչպես նաև խորհրդի անդամներին³⁶ օրենքով թույլատրելի առավելագույն չափով :

Փոխհատուցման դրույթի ներդրումը նպատակ է հետապնդում սահմանափակելու խորհրդի անդամների պատասխանատվությունը և ազատելու վնասների հատուցման պարտականությունից՝ պաշտպանելով նրանց երրորդ անձանց (այդ թվում՝ ընկերության այլ բաժնետերերի) ցանկացած պահանջներից :

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրվածը՝ առաջարկվում է հստակեցնել ՎԲԸ-ներում խորհրդի առանձնահատկությունները և նախատեսել խորհրդի դիտորդ անդամի (անդամների) ինստիտուտը, պաշտպանիչ դրույթները և փոխհատուցման կառուցակարգը :

¹ Տե՛ս, Павлова К. П., Актуальные вопросы правового регулирования организации и деятельности совета директоров (наблюдательного совета) акционерного общества по российскому законодательству, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Москва 2013, С. 49.

² Տե՛ս, Прохоренко В. В., Совет директоров в системе органов акционерного общества, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Екатеринбург, 2006, С. 41.

³ Տե՛ս, Orrick, Herrington & Sutcliffe LLP, Orrick's Guide to Venture Capital Deals in Germany, 2018 Edition (<https://s3.amazonaws.com/cdn.orrick.com/files/Insights/Germany-VC-FINAL-web.pdf>) (վերջին մուտք՝ 20.03.2023թ.), С. 52.

⁴ Տե՛ս, Ավետիսյան Վ. Գ., Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (տնտեսական ընկերությունների օրինակով), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013, էջ 329-330, Прохоренко В. В., նշվ. աշխ., էջ 42, Цепов Г.В., Акционерные общества: теория и практика. С. 38-39, Павлова К. П., նշվ. աշխ., էջ 52-53:

⁵ Տե՛ս, Алиева К. М., Роль Совета директоров акционерного общества при совершении сделок, выходящих за пределы его обычной хозяйственной деятельности: Дис. ... канд. юрид. наук. М. 2005, С. 38, Шеленин В.Ю., Правовое регулирование корпоративного управления в акционерных обществах: Дис... канд. юрид. наук. Москва. 2004, С. 116-118, Maassen G. F., An International Comparison of Corporate Governance Models, Third edition, 2002.

⁶ Տե՛ս, Павлова К. П., նշվ. աշխ., էջ 63:

⁷ Տե՛ս, Гинько С. А., Управление в хозяйственных обществах: правовые аспекты, диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, Санкт-Петербург, 2009, С. 53, Кашанина Т.В., Корпоративное (внутрифирменное) право. М., 2003, С. 251.

⁸ Տե՛ս, Фроловский Н.Г., Управление предпринимательскими корпорациями в Российской Федерации (правовой

аспект): Дис. ... канд. юрид. наук. Белгород. 2004, С. 116.

⁹ Տե՛ս, Прохоренко В. В., նշվ. աշխ., էջ 61-62, Павлова К. П., նշվ. աշխ., էջ 68:

